# ՀՖՖ
# ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2024թ., խմբագրություն

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ... 6
ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ... 12
Հոդված 1. Գործողությունների շրջանակը ... 12
ԳԼՈՒԽ 2. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ... 13
Հոդված 2. Ֆուտբոլիստների կարգավիճակը ... 13
Հոդված 3. Սիրողական կարգավիճակի վերականգնումը ... 13
Հոդված 4. Գրանցման պահպանումը գործունեության դադարեցումից հետո ... 13
ԳԼՈՒԽ 3. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ... 14
Հոդված 5. Գրանցումը ... 14
Հոդված 5[1]. Կապակցող տրանսֆեր ... 15
Հոդված 6. Գրանցման ժամանակահատվածները ... 15
Հոդված 7. Ֆուտբոլիստի անձնագիրը ... 18
Հոդված 8. Գրանցման կարգը ... 19
Հոդված 9. Միջազգային տրանսֆերային սերտիֆիկատ (ՄՏՍ) ... 19
Հոդված 10. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների վարձակալությունը ... 20
Հոդված 11. Չգրանցված ֆուտբոլիստներ ... 22
Հոդված 12. Կարգապահական տույժերի կիրառում ... 22
Հոդված 12[1]. Ժամկետանց վճարումներ ... 22
ԳԼՈՒԽ 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՄԻՋԵՎ ... 24
Հոդված 13. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և ակումբի հարաբերությունները ... 24
Հոդված 13[1]. Պայմանագրի գրանցումը ... 24
Հոդված 14. Պայմանագրի լուծումը հիմնավոր դրդապատճառներով ... 25
Հոդված 14[1]. Պայմանագրի լուծումն աշխատավարձերի չվճարման հիմնավոր դրդապատճառով ... 25
Հոդված 15. Պայմանագրի լուծումը մարզական տեսանկյունից հիմնավոր դրդապատճառներով ... 25
Հոդված 16. Մրցաշրջանի ընթացքում պայմանագրի լուծման սահմանափակումը ... 26
Հոդված 17. Առանց հիմնավոր դրդապատճառի պայմանագրի լուծման հետևանքները ... 26
Հոդված 18. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և ակումբի միջև կնքվող պայմանագրի հատուկ պայմանները 28
ԳԼՈՒԽ 5. ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՖՈՒՏԲՈԼԻՍՏԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ ... 30
Հոդված 18[1]. Երրորդ կողմի ազդեցությունն ակումբի վրա ... 30
Հոդված 18[2]. Ֆուտբոլիստների տնտեսական իրավունքների տնօրինումը երրորդ անձանց կողմից ... 30
ԳԼՈՒԽ 6. ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ ... 31
Հոդված 18[3]. Իգական սեռի ֆուտբոլիստների պայմանագրերին վերաբերող հատուկ պայմաններ 31
Հոդված 18[4]. Կանացի առողջության վերաբերյալ ... 33

**ԳԼՈՒԽ 7. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ՏՐԱՆՍՖԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ** ..... 35
Հոդված 19. Անչափահասների պաշտպանությունը ..... 35
Հոդված 19[1]. Ակադեմիաներում անչափահաս ֆուտբոլիստների գրանցումը ..... 38
Հոդված 19[2]. Փորձաշրջաններ ..... 39
**ԳԼՈՒԽ 8. ՄԱՐԶՈՒՄԱՅԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ** 42
Հոդված 20. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցումը ..... 42
Հոդված 20[1]. Սիրողական ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցումը ..... 42
Հոդված 21. Համերաշխության մեխանիզմը ..... 42
**ԳԼՈՒԽ 9. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ** ..... 43
Հոդված 22. ՖԻՖԱ-ի իրավասությունը ..... 43
Հոդված 22[1]. ՀՖՖ իրավասությունը ..... 44
Հոդված 23. Ֆուտբոլային տրիբունալ ..... 44
Հոդված 23[1]. Վեճերի լուծման կարգը ..... 45
Հոդված 24. Վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքները ..... 45
Հոդված 25. Որոշումների կատարումը և հաստատող նամակը ..... 47
**ԳԼՈՒԽ 10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ** ..... 48
Հոդված 26. Կանոնակարգի ուժի մեջ մտնելը ..... 48
Հոդված 27. Պատասխանատվությունը՝ կանոնակարգի դրույթները խախտելու համար ..... 48
**ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ** ..... 49
Հոդված 1. Կանոններ ..... 49
Հոդված 1[1]. Կանանց ֆուտբոլի կանոններ ..... 51
Հոդված 1[2]. Ֆուտզալի կանոններ ..... 54
Հոդված 2. Ֆինանսական դրույթներն ու ապահովագրությունը ..... 56
Հոդված 3. Ֆուտբոլիստների հրավերը ..... 56
Հոդված 4. Վնասվածք ստացած ֆուտբոլիստները ..... 57
Հոդված 5. Ֆուտբոլիստների՝ խաղերին մասնակցելու սահմանափակումը ..... 57
Հոդված 6. Կարգապահական պատժամիջոցներ ..... 57
**ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ** ..... 58
Հոդված 1. Պայմանագիրը և կողմերը ..... 58
Հոդված 2. Ակումբի պարտականությունները ..... 59
Հոդված 3. Ֆուտբոլիստի պարտականությունները ..... 60
Հոդված 4. Հարկային պարտավորություններ ..... 60
Հոդված 5. Իմիջային իրավունք ..... 61
Հոդված 6. Վարձակալություն ..... 61
Հոդված 7. Հակախթանիչներ ..... 61
Հոդված 8. Պայմանագրի լուծումը ..... 61
Հոդված 9. Կոլեկտիվ պայմանագիր ..... 61
Հոդված 10. Անձնական տվյալների մշակումը ..... 61
Հոդված 11. Աշխատանքային պայմանագրի նվազագույն պահանջները չպահպանելու հետևանքները ..... 62
Հոդված 12. Եզրափակիչ դրույթներ ..... 62
**ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏՀՀ-ՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՖԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ** 68

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ ........ 68
Հոդված 1. Նպատակներ ........ 68
Հոդված 2. Գործունեության շրջանակ ........ 68
ԳԼՈՒԽ 2. ՏՀՀ ՕԳՏԱՏԵՐԵՐ ........ 68
Հոդված 3. Ընդհանուր դրույթներ ........ 68
Հոդված 4. ՏՀՀ մուտք գործելու ընթացակարգը ........ 69
Հոդված 5. ՏՀՀ օգտատեր դառնալու անհրաժեշտ պայմանները ........ 69
ԳԼՈՒԽ 3. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 70
Հոդված 6. Ակումբների և ասոցիացիաների ընդհանուր պարտականությունները ........ 70
Հոդված 7. Ակումբների պարտականությունները ........ 71
Հոդված 8. Ասոցիացիաների պարտականությունները ........ 72
Հոդված 9. ՖԻՖԱ-ի դերը ........ 73
ԳԼՈՒԽ 4. ՖՈՒՏԲՈԼԻՍՏԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ........ 73
Հոդված 10. Ակումբների կողմից տրանսֆերային տվյալների մուտքագրում ........ 73
Հոդված 11. Ասոցիացիաների կողմից իրականացվող ՄՏՍ ընթացակարգը և ֆուտբոլիստների գրանցումը 76
Հոդված 12. Վճարումներ ........ 77
ԳԼՈՒԽ 5. ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ ........ 78
Հոդված 13. Ֆուտբոլիստների հաստատում ........ 78
Հոդված 14. Վավերացման բացառություններ (Validation exceptions) ........ 78
Հոդված 15. Տրանսֆերի չեղարկումը ........ 79
Հոդված 16. Ընդհանուր դրույթներ ........ 79
Հոդված 17. Վարչական պատժամիջոցների կիրառման ընթացակարգը ........ 79
Հոդված 18. Վարչական պատժամիջոցների կիրառման ընթացակարգը ........ 80
ԳԼՈՒԽ 6. ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ........ 80
Հոդված 1. Կանոններ ........ 80
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄԱՐԶՈՒՄԱՅԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ........ 82
Հոդված 1. Մարզումային փոխհատուցումը ........ 82
Հոդված 2. Միջազգային տրանսֆերի դեպքում պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցման վճարումը ........ 82
Հոդված 2[1]. Ներքին տեղափոխության դեպքում պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցման վճարումը ........ 83
Հոդված 2[2]. Ներքին տեղափոխության դեպքում սիրողական ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցման վճարումը ........ 84
Հոդված 3. Մարզումային փոխհատուցում վճարելու պարտավորությունը ........ 85
Հոդված 4. Մարզումային ծախսեր ........ 86
Հոդված 5. Մարզումային փոխհատուցման հաշվարկը ........ 87
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ ........ 89
Հոդված 1. Համերաշխության բաշխում ........ 89
Հոդված 2. Վճարման ընթացակարգը ........ 90
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԸ ........ 91
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՖՈՒՏԶԱԼԻ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ 93
Հոդված 1. Գործողությունների շրջանակը ........ 93
Հոդված 2. Ֆուտզալի ֆուտբոլիստների ազատ արձակումը ՀՀ Ազգային հավաքականներում

հանդես գալու համար ............ 93
Հոդված 3. Ֆուտզալի ֆուտբոլիստների գրանցում ............ 93
Հոդված 4. Պայմանագրի դրույթների կատարումը ............ 94
Հոդված 5. Ֆուտզալի միջազգային տրանսֆերային սերտիֆիկատ ............ 94
Հոդված 6. Կարգապահական պատժամիջոցների կիրառումը ............ 97
Հոդված 7. Անչափահասների պաշտպանությունը ............ 98
Հոդված 8. Մարզումային փոխհատուցումը ............ 98
Հոդված 9. Համերաշխության մեխանիզմը ............ 98
Հոդված 10. ՖԻՖԱ-ի իրավասությունը ............ 98
Հոդված 11. Սույն հավելվածում չնախատեսված դրույթները ............ 99
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՄԱՐԶԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ............ 100
Հոդված 1. Գործունեության շրջանակը ............ 100
Հոդված 2. Աշխատանքային պայմանագիրը ............ 100
Հոդված 3. Պայմանագրի դրույթների կատարումը ............ 101
Հոդված 4. Պայմանագրի լուծումը հիմնավոր դրդապատճառներով ............ 101
Հոդված 5. Պայմանագրի լուծումը աշխատավարձի չվճարման հիմնավոր դրդապատճառով 101
Հոդված 6. Առանց հիմնավոր դրդապատճառի պայմանագիրը լուծելու հետևանքները ............ 102
Հոդված 7. Ժամկետանց վճարումներ ............ 103
Հոդված 8. Վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքները ............ 103
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ............ 106

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կանոնակարգ – Սույն կանոնակարգը,
2. Ասոցիացիա - Տվյալ երկրի՝ ՖԻՖԱ-ին անդամագրված ֆուտբոլային ղեկավար կառույց,
3. Նախկին Ասոցիացիա - Ասոցիացիա, որին պատկանել է նախկին ակումբը,
4. Նոր Ասոցիացիա – Ասոցիացիա, որին անդամագրվել է նոր ակումբը,
5. Ակումբ - Իրավաբանական անձ՝ անկախ կազմակերպաիրավական ձևից, կամ կազմակերպություն, որը թիմ (թիմեր) է ներկայացնում ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող մրցումներին, ներդրումներ է կատարում ֆուտբոլիստների մարզման և ուսուցման ոլորտներում,
6. Նախկին Ակումբ - Ակումբը, որից հեռացել է ֆուտբոլիստը,
7. Նոր Ակումբ - Ակումբը, որին անդամագրվել է ֆուտբոլիստը,
8. Կազմակերպված ֆուտբոլ – ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կամ ՀՖՖ-ի հովանու ներքո կազմակերպված կամ նրանց կողմից վավերացված մրցումներ,
9. Պաշտոնական խաղեր – Կազմակերպված ֆուտբոլի շրջանակներում անցկացվող խաղեր, ինչպիսիք են ազգային առաջնությունների, գավաթի խաղարկությունների, ակումբային միջազգային մրցաշարերի խաղերը, բայց ոչ ընկերական և ստուգողական հանդիպումները,
10. Պաշտպանված ժամանակահատված - Մինչև 28 տարեկան պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի հետ կնքած պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա կամ երեք ամբողջական մրցաշրջանների ժամանակահատվածն է: Եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը պայմանագիրը կնքել է 28 տարին լրանալուց հետո, ապա պաշտպանված ժամանակահատվածը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա կամ երկու ամբողջական մրցաշրջանների ժամանակահատվածն է,
11. Գրանցման ժամանակահատված – Սույն Կանոնակարգի Հոդված 6-ի համաձայն՝ ՀՖՖ–ի կողմից ֆիքսված ժամանակահատված, որի ընթացքում թույլատրված է ֆուտբոլիստի գրանցումն ու տեղափոխությունը մեկ ակումբից մյուս ակումբ՝ ապագա կամ ընթացիկ մրցումներին մասնակցելու համար,
12. Մրցաշրջան – 12 ամիս տևողությամբ ժամանակահատված, որն սկսվում է ասոցիացիայի կողմից Հոդված 6-ի համաձայն սահմանված առաջին գրանցման ժամանակահատվածի առաջին օրվանից,
13. Մարզումային փոխհատուցում – Ֆուտբոլիստների մարզումն ու զարգացումն ապահովելու նպատակով ակումբի կողմից կատարված ուղղակի ներդրումների փոխհատուցում,
14. Միջազգային տրանսֆեր - Ֆուտբոլիստների տեղափոխությունը որևէ ասոցիացիայի ակումբից մեկ ուրիշ ասոցիացիայի ակումբ,
15. Ներքին տեղափոխություն - Ֆուտբոլիստների տեղափոխությունը ՀՖՖ-ի որևէ ակումբից մեկ այլ ակումբ,

16. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ – Սույն կանոնակարգի իմաստով պրոֆեսիոնալ կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստ,
17. Սիրողական ֆուտբոլիստ - Սիրողական կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստ,
18. Անչափահաս ֆուտբոլիստ - 18 տարին չլրացած ֆուտբոլիստ,
19. Սկսնակ ֆուտբոլիստ - ՀՖՖ-ում չգրանցված և համապատասխան ֆուտբոլիստի անձնագիր չստացած ֆուտբոլիստ,
20. Ֆուտբոլիստի անուն – ֆուտբոլիստի անունը, հայրանունը և ազգանունը,
21. Մեծ ֆուտբոլ - Ֆուտբոլ մարզաձև, որը խաղում են համաձայն Ֆուտբոլի խաղի կանոնների՝ հաստատված Միջազգային ֆուտբոլային ասոցիացիաների խորհրդի կողմից,
22. Ֆուտզալ - Ֆուտբոլ մարզաձև, որը խաղում են համաձայն Ֆուտզալի խաղի կանոնների՝ թողարկված ՖԻՖԱ-ի և Միջազգային ֆուտբոլային ասոցիացիաների խորհրդի ենթակոմիտեի համատեղ գործակցությամբ,
23. Ֆուտբոլիստի անձնագիր – ՀՖՖ-ի կողմից ֆուտբոլիստին տրամադրված անձնագիր, որը պարունակում է ֆուտբոլիստի գրանցման ամբողջ պատմությունը:
24. Ֆուտբոլային ակադեմիա - Կազմակերպություն, որի գլխավոր և երկարաժամկետ նպատակն է ապահովել ֆուտբոլիստների շարունակական մարզումն անհրաժեշտ մարզումային միջոցների և ենթակառուցվածքների միջոցով: Այն հիմնականում ներառում է (բայց չի սահմանափակվում) ֆուտբոլի մարզումային կենտրոնները, ֆուտբոլի մասնագիտացված ճամբարները, ֆուտբոլի դպրոցները և այլն,
25. Տրանսֆերների համադրման համակարգ (ՏՀՀ) - Տրանսֆերների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող էլեկտրոնային համակարգ, որի միջոցով կատարվում են միջազգային տրանսֆերները: ՏՀՀ գլխավոր նպատակն է պարզեցնել ֆուտբոլիստների միջազգային տրանսֆերային գործընթացը, ինչպես նաև ապահովել տեղեկատվության թափանցիկությունն ու հոսքը,
26. Միջազգային պատուհան - Ազգային հավաքականների խաղերի կամ այլ միջոցառումների համար նախատեսված իննօրյա ժամանակահատված, որը սկսում է երկուշաբթի առավոտյան և ավարտվում հաջորդ շաբաթվա երեքշաբթի օրը,
27. Երրորդ կողմ- ֆուտբոլիստից, ֆուտբոլիստի տեղափոխությունն իրականացնող երկու ակումբներից կամ ֆուտբոլիստի որևէ նախկին ակումբից (որտեղ գրանցված է եղել ֆուտբոլիստը) զատ տեղափոխության գործընթացում հանդես եկող մեկ այլ՝ երրորդ կողմ,
28. Գրանցում – գրավոր և/կամ էլեկտրոնային եղանակով ֆուտբոլիստի տվյալներն արձանագրելու փաստը, որն իր մեջ ներառում է յուրաքանչյուր ֆուտբոլիստի մասին հետևյալ տեղեկատվությունը.
- գրանցման ամսաթիվը (օր/ամիս/տարի ձևաչափով),
- ֆուտբոլիստի անունը, ազգանունը, հայրանունը
- ծննդյան տարեթիվը, սեռը, քաղաքացիությունը և կարգավիճակը՝ սիրողական կամ պրոֆեսիոնալ՝ (համաձայն սույն կանոնակարգի Հոդված 2-ի 2-րդ կետի),
- ֆուտբոլի տեսակը, որով ֆուտբոլիստը զբաղվելու է (մեծ ֆուտբոլ, ֆուտզալ, լողափնյա ֆուտբոլ),
- ասոցիացիայի ակումբի անվանումը (ներառյալ ակումբի ՖԻՖԱ կոդը (FIFA ID-ն)), որտեղ ֆուտբոլիստը գրանցվում է,
- ակումբի մարզումային կարգը գրանցման պահին,

- ֆուտբոլիստի ՖԻՖԱ կոդը (FIFA ID-ն),
- ասոցիացիայի ՖԻՖԱ կոդը (FIFA ID-ն):

29. <u>**Ֆուտբոլիստների գրանցման էլեկտրոնային համակարգ**</u> – առցանց էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, որի միջոցով կատարվում է բոլոր ֆուտբոլիստների գրանցումը ՀՖՖ-ում: Ֆուտբոլիստների գրանցման էլեկտրոնային համակարգը պետք է կապված լինի “FIFA Connect” համակարգին ավտոմատացված ծրագրային ինտերֆեյսի միջոցով (API)՝ էլեկտրոնային տարբերակով տեղեկատվության փոխանակման նպատակով: “FIFA Connect” համակարգի ավտոմատացված ծրագրային ինտերֆեյսի միջոցով (API) ֆուտբոլիստների գրանցման էլեկտրոնային համակարգը տրամադրում է բոլոր ֆուտբոլիստների գրանցման ամբողջական տեղեկատվությունը՝ սկսած վերջիններիս 12 տարին լրանալուց և, մասնավորապես, յուրաքանչյուր ֆուտբոլիստի տրամադրում է ՖԻՖԱ կոդ (FIFA ID)՝ “FIFA Connect ID” ծառայության միջոցով,
30. <u>**“FIFA Connect ID” ծառայություն**</u> – ՖԻՖԱ-ի կողմից մատուցվող ծառայություն, որը միջազգայնորեն վավեր անհատական ՖԻՖԱ կոդ է տրամադրում անհատներին, կազմակերպություններին և ենթակառուցվածքներին, միևնույն անդամի կրկնակի գրանցման դեպքում տրամադրում է կրկնօրինակ տեղեկատվություն և պահպանում է բոլոր կողմերի ընթացիկ գրանցումների արձանագրությունը՝ իրենց համապատասխան ՖԻՖԱ կոդով,
31. <u>**ՖԻՖԱ կոդ (FIFA ID)**</u> – “FIFA Connect ID” ծառայության կողմից յուրաքանչյուր ակումբին, ասոցիացիային, ֆուտբոլիստին տրվող միջազգայնորեն վավեր անհատական կոդ (հերթական համար),
32. <u>**Ներքին տեղափոխությունների էլեկտրոնային համակարգ**</u> – առցանց էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, որի միջոցով կատարվում և վերահսկվում են ՀՖՖ-ի բոլոր ներքին տեղափոխությունները միջազգային մակարդակով գործարկված Տրանսֆերների համադրման համակարգի (ՏՀՀ) օրինակով և սկզբունքներով (տե՛ս Հավելված 3): Համակարգը պետք է առնվազն ներառի ֆուտբոլիստի անունը, ազգանունը, հայրանունը, սեռը, քաղաքացիությունը, ծննդյան ամսաթիվը և ՖԻՖԱ կոդը, ֆուտբոլիստի կարգավիճակը (սիրողական կամ պրոֆեսիոնալ՝ համաձայն սույն կանոնակարգի Գլուխ II-ի Հոդված 2-ի առաջին կետի), ներգրավված 2 ակումբների անուններն ու ՖԻՖԱ կոդերը, ինչպես նաև ակումբներիմիջև տեղի ունեցած ցանկացած վճարում (եթե առկա է): Ներքին տեղափոխությունների էլեկտրոնային համակարգը պետք է ինտեգրվի ՀՖՖ-ի Ֆուտբոլիստների գրանցման էլեկտրոնային համակարգին և “FIFA Connect” համակարգի ավտոմատացված ծրագրային ինտերֆեյսին (API)՝ էլեկտրոնային տարբերակով տեղեկատվության փոխանակման նպատակով,
33. <u>**Կապակցող տրանսֆեր**</u> - Միևնույն ֆուտբոլիստի երկու հաջորդական տեղափոխություն (թե՛ միջազգային, թե՛ ներքին), որոնք միմյանց փոխկապակցված են և իրենց մեջ ներառում են ֆուտբոլիստի գրանցում միջնորդ ակումբում՝ համապատասխան կանոնակարգի կամ օրենքների կիրառումը շրջանցելու և /կամ մեկ այլ անձին կամ կազմակերպությանը մոլորեցնելու նպատակով,
34. <u>**Բացառապես սիրողական ակումբ**</u> - Ակումբ, որն իրավական, ֆինանսական կամ դե ֆակտո առնչություն/ կապ չունի պրոֆեսիոնալ ակումբի հետ և որը՝
    - իրավասու է գրանցել միայն սիրողական ֆուտբոլիստներ, կամ
    - չունի գրանցված պրոֆեսիոնալ ֆուտբոլիստներ, կամ

- չի գրանցել որևէ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ 3 տարի անընդմեջ՝ սկսած կոնկրետ ամսաթվից:

35. <u>“FIFA Connect” ինտերֆեյս</u> - “FIFA Connect” ծրագրի շրջանակներում ՖԻՖԱ-ի կողմից մշակված տեխնիկական ինտերֆեյս, որն օգտագործվում է անդամ ասոցիացիաների և ՖԻՖԱ-ի ու անդամ ասոցիացիաների միջև կոդավորված հաղորդագրություններ փոխանակելու համար:
36. <u>Մարզումային փոխհատուցում</u>- երիտասարդ ֆուտբոլիստների մարզման և կրթման գործում ներդրում ունեցած մարզող ակումբներին փոխհատուցելու նպատակով մշակված մեխանիզմ, այն է՝ մարզումային փոխհատուցում (Հոդված 20) և համերաշխության վճար (Հոդված 22),
37. <u>Մարզիչ</u> - պրոֆեսիոնալ ակումբի կամ ՀՖՖ-ի կողմից աշխատանքի ընդունված կամ վերջիններիս ծառայություն մատուցող անձ, ով զբաղվում է ֆուտբոլային գործունեությամբ: Մարզչի աշխատանքային պարտականությունները ներառում են հաջորդիվ նշվածներից առնվազն մեկը՝ ֆուտբոլիստներին մարզելը, խաղերի և մրցաշարերի համար ֆուտբոլիտներ ընտրելը, խաղերի և մրցաշարերի ժամանակ տակտիկական փոփոխություններ կատարելը: Մարզչի աշխատանքային գործունեությունը պահանջում է համապատասխան մարզչական արտոնագրի առկայություն՝ համաձայն ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգերի:
38. <u>Պրոֆեսիոնալ ակումբ</u> - Ակումբ, որը չի հանդիսանում բացառապես սիրողական ակումբ,
39. <u>Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար նախատեսված արձակուրդ</u> - վճարովի արձակուրդ, որը տրվում է իգական սեռի ֆուտբոլիստներին հղիության համար՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով,
40. <u>Ակումբում մարզված ֆուտբոլիստ</u> - ֆուտբոլիստ, ով իր՝15 տարեկանից (կամ այն մրցաշրջանի սկիզբը, որի ընթացքում լրանում է նրա 15 տարեկանը) մինչև 21 տարեկանն ընկած ժամանակահատվածում (կամ այն մրցաշրջանի ավարտը, որի ընթացքում լրանում է նրա 21 տարեկանը), և անկախ ազգությունից և տարիքից, գրանցված է իր ներկայիս ակումբում երեք ամբողջական մրցաշրջան՝ 36 ամիս տևողությամբ (անընդմեջ կամ ոչ):
41. <u>Փորձաշրջան</u>- ժամանակավոր շրջան/ ժամանակահատված, որի ընթացքում ակումբում չգրանցված ֆուտբոլիստը փորձաշրջան է անցնում տվյալ ակումբում,
42. <u>ՖԻՖԱ-ի՝ վճարումները վերահսկող մարմին (FIFA Clearing House)</u>- կազմակերպություն, որը հանդես է գալիս որպես միջնորդ ՖԻՖԱ ՏՀՀ համակարգով իրականացվող որոշակի վճարումների հետ կապված,
43. <u>Ֆուտբոլիստի էլեկտրոնային անձնագիր</u>- էլեկտրոնային փաստաթուղթ, որը պարունակում է ֆուտբոլիստի գրանցման պատմությունը իր ամբողջ կարիերայի ընթացքում՝ ներառյալ համապատասխան ասոցիացիան, որտեղ վերջինս գրանցված է եղել, գրանցման կարգավիճակը (սիրողական կամ պրոֆեսիոնալ), գրանցման տեսակը (մշտական կամ վարձակալություն) և այն ակումբը (ակումբները), որտեղ նա գրանցված է եղել իր 12-րդ ծննդյան տարեդարձի օրացուցային տարվանից սկսած,
44. <u>Տրանսֆերային փոխհատուցում</u>- փոխհատուցում, որը ֆուտբոլիստի նոր ակումբը վճարում կամ պարտավորվում է վճարել ֆուտբոլիստի նախկին ակումբին, եթե նախկին ակումբը համաձայնվում է ազատ արձակել ֆուտբոլիստին պարտադիր պայմանագրային հարաբերություններից,

Սույն կանոնակարգի Հոդված 15-ով սահմանված պայմանագրի խախտման համար վճարվող փոխհատուցումը չի համարվում տրանսֆերային փոխհատուցում:

45. <u>Տեղեկատվության համադրում</u>- ՏՀՀ համակարգում միջազգային տրանսֆերի կարգավիճակ, երբ երկու ակումբները ճշգրիտ մուտքագրել են հիմնական տեղեկատվությունը (ֆուտբոլիստի, ակումբների և տրանսֆերի տվյալները), բայց դեռ առկա են տրանսֆերային տվյալներ (վճարման տվյալներ կամ վարձակալության ժամկետ), որոնք մուտքագրված երկու տրանսֆերներում իրար չեն համապատասխանում: Այս անհամապատասխանությունը խոչընդոտում է տրանսֆերի իրականացման հետագա ընթացքը,
46. <u>ՏՀՀ օգտատեր</u>- Ակումբի կամ ասոցիացիայի անունից լիազորված անձ, ով վերապատրաստվել է և ունի համապատասխան իրավասություն ՏՀՀ մուտք գործելու համար: ՏՀՀ բոլոր օգտատերերն ունեն իրենց ուրույն մուտքի տվյալները:
47. <u>ՏՀՀ պատասխանատու</u>- ՏՀՀ հիմնական օգտատեր, ով ՏՀՀ մուտք ունեցող ակումբի կամ ասոցիացիայի համար հիմնական կոնտակտային անձն է,
48. <u>Մուտքագրվող տրանսֆերի տվյալներ</u>- Ֆուտբոլիստին մեկ ակումբից մյուսը տեղափոխելու նպատակով ՏՀՀ մուտքագրված տեղեկատվություն: Մուտքագրված տրանսֆերի տեսակը սահմանվում է՝ համաձայն մուտքագրված տեղեկատվության, այն է՝ «ֆուտբոլիստի ձեռքբերում կամ ազատ արձակում», «մշտական հիմունքներով կամ վարձակալությամբ», «որպես պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ կամ սիրողական ֆուտբոլիստ», «տրանսֆերային համաձայնագրով կամ առանց տրանսֆերային համաձայնագրի», «վճարման դիմաց կամ առանց վճարի»,
49. <u>Վավերացման բացառություն/ Validation exception</u>- ՏՀՀ մուտքագրված միջազգային տրանսֆերին վերաբերող հարց, որը խոչընդոտում է, որ տրանսֆերն անցնի հաջորդ փուլ, դրանով իսկ առաջացնելով ՖԻՖԱ-ի միջամտության անհրաժեշտություն,
50. <u>Խաղաշրջան</u> – այն ժամանակահատվածը, որն սկսվում է ազգային առաջնության կամ Գավաթի մրցումների առաջին պաշտոնական հանդիպումով և ավարտվում այդ մրցումների շրջանակներում անցկացված վերջին պաշտոնական խաղով,
51. <u>Որդեգրման արձակուրդ</u>- Առնվազն 8 շաբաթյա վճարովի արձակուրդ, որը տրվում է իգական սեռի ֆուտբոլիստին/ մարզչին 2 տարեկանից փոքր երեխային որդեգրելու պարագայում: Այս վճարովի արձակուրդի ժամկետը նվազեցվում է մինչև 4 շաբաթ, եթե երեխան 2-ից 4 տարեկան է և 2 շաբաթ, եթե երեխան 4 տարեկանից բարձր է: Որդեգրման նպատակին ծառայող վճարովի արձակուրդը պետք է վերցվի պաշտոնական որդեգրումից վեց ամսվա ընթացքում և չի կարող գումարվել նույն երեխայի համար վերցված ընտանեկան արձակուրդին,
52. <u>Ընտանեկան արձակուրդ</u>- Առնվազն 8 շաբաթյա վճարովի արձակուրդ, որը տրվում է երեխայի ծնվելուց հետո կենսաբանական մայր չհանդիսացող իգական սեռի ֆուտբոլիստին/ մարզչին,

Ծանոթագրություն: Անձանց վերաբերող հասկացությունները վերաբերում են երկու սեռերին, եթե համապատասխան իրավական նորմով հատուկ հղում չկա կոնկրետ սեռի :

Յուրաքանչյուր եզակի հասկացությունը կիրառվում է նաև հոգնակի տարբերակով և հակառակը:

# ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Հոդված 1. Գործողությունների շրջանակը

1. Սույն կանոնակարգով կարգավորվում են՝
   – ֆուտբոլիստի կարգավիճակը,
   – ֆուտբոլիստի՝ կազմակերպված ֆուտբոլին մասնակցելու կանոնները,
   – ֆուտբոլիստի՝ ակումբից ակումբ տեղափոխության կանոնները ՀՖՖ շրջանակներում,
   – ֆուտբոլիստի՝ ակումբից ակումբ միջազգային տեղափոխության կանոնները՝ հիմնվելով ՖԻՖԱ–ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության համանման կանոնակարգի դրույթների վրա,
   – ֆուտբոլիստի (ֆուտբոլիստին ներկայացնող անձանց) և ակումբների միջև ծագած վեճերը,
   – ակումբների կողմից ֆուտբոլիստի ազատ արձակումն ազգային հավաքական թիմերում հանդես գալու համար (Հավելված 1):
   Մարզիչների և պրոֆեսիոնալ ակումբների կամ ասոցիացիայի միջև կնքված պայմանագրային կանոնները
2. Սույն կանոնակարգը նախատեսում է նաև երիտասարդ ֆուտբոլիստների մարզումների և ուսուցման ոլորտներում ներդրումներ կատարող ՀՖՖ անդամ հանդիսացող կամ ՀՖՖ-ի հետ պայմանագրային հարաբերություններ ունեցող ակումբների խրախուսման համակարգ:
3. Ներքին տեղափոխությունների էլեկտրոնային համակարգի կիրառումը պարտադիր է մեծ ֆուտբոլում ներգրավված պրոֆեսիոնալ և սիրողական կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստների (թե՛ արական, և թե՛ իգական սեռի) բոլոր ներքին տեղափոխությունների համար: Ներքին տեղափոխությունը՝ տրանսֆերը, մուտքագրվում է ներքին տեղափոխությունների էլեկտրոնային համակարգ, երբ ֆուտբոլիստը գրանցվում է ՀՖՖ անդամ հանդիսացող կամ ՀՖՖ-ի հետ պայմանագրային հարաբերություններ ունեցող նոր ակումբում: Եթե ֆուտբոլիստի՝ նոր ակումբում գրանցումը կատարվում է առանց էլեկտրոնային համակարգի կիրառման, ապա տվյալ գրանցումը համարվում է անվավեր:

# ԳԼՈՒԽ 2. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

## Հոդված 2. Ֆուտբոլիստների կարգավիճակը

1. Կազմակերպված ֆուտբոլին մասնակցող ֆուտբոլիստները կարող են ունենալ սիրողական կամ պրոֆեսիոնալ կարգավիճակ: Ոչ մի այլ կարգավիճակ հաշվի չի առնվում:
2. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստն այն ֆուտբոլիստն է, ով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ունի կնքված աշխատանքային պայմանագիր որևէ ակումբի հետ և վարձատրվում է ավելին, քան իր ֆուտբոլային գործունեության կապակցությամբ առաջացող փաստացի ծախսերն են: Մյուս բոլոր ֆուտբոլիստները համարվում են սիրողական կարգավիճակունեցող (ոչ պրոֆեսիոնալ):

## Հոդված 3. Սիրողական կարգավիճակի վերականգնումը

1. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը կարող է վերագրանցվել որպես սիրողական՝ անցկացրած վերջին պաշտոնական խաղից առնվազն 30 օր հետո:
2. Ֆուտբոլիստի սիրողական կարգավիճակի վերականգնման դեպքում որևէ փոխհատուցում չի նախատեսվում: Եթե ֆուտբոլիստի սիրողական կարգավիճակը վերականգնելուց հետո 30 ամսվա ընթացքում նա վերագրանցվում է որպես պրոֆեսիոնալ, ապա նոր ակումբը պետք է վճարի մարզումային փոխհատուցում՝ սույն կանոնակարգի Հոդված 20-ի և $20^1$-ի, ինչպես նաև Հավելված 4-ի համաձայն:

## Հոդված 4. Գրանցման պահպանումը գործունեության դադարեցումից հետո

1. Պրոֆեսիոնալ կամ սիրողական կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստները, ովքեր դադարեցնում են իրենց գործունեությունը, մնում են գրանցված ՀՖՖ-ում 30 ամսվա ընթացքում:
2. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամանակահատվածը սկսվում է այն օրվանից, երբ ֆուտբոլիստն ակումբի թիմի կազմում վերջին անգամ մասնակցում է պաշտոնական խաղին:

# ԳԼՈՒԽ 3. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

## Հոդված 5. Գրանցումը

1. Ֆուտբոլիստը ակումբի կողմից գրանցվում է ՀՖՖ-ում՝ պրոֆեսիոնալ, կա՛մ սիրողական կարգավիճակով՝ համաձայն Հոդված 2-ի դրույթների: Ֆուտբոլիստների գրանցումը ՀՖՖ-ում կատարվում է 6 տարեկանից սկսած: Առաջին անգամ գրանցվող յուրաքանչյուր ֆուտբոլիստի ՀՖՖ-ի ֆուտբոլիստների գրանցման էլեկտրոնային համակարգի կողմից տրվում է ՖԻՖԱ կոդ (FIFA ID): Բացառությամբ փորձաշրջանի ընթացքում ընկերական խաղերին մասնակցող ֆուտբոլիստների՝ կազմակերպված ֆուտբոլին մասնակցելու իրավունք ունեն միայն էլեկտրոնային տարբերակով գրանցված և ՖԻՖԱ կոդ (FIFA ID) ունեցող ֆուտբոլիստները: Գրանցված կամ փորձաշրջան անցնող ֆուտբոլիստը պարտավոր է ենթարկվել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՀՖՖ-ի կանոնադրությունների և կանոնակարգերի պահանջներին:
2. Ֆուտբոլիստը կարող է գրանցվել ակումբում՝ միայն կազմակերպված ֆուտբոլին մասնակցելու նպատակով: Ի բացառություն սույն կանոնի՝ ֆուտբոլիստը կարող է հարկադրված գրանցվել ակումբում՝ զուտ տեխնիկական պատճառներից ելնելով, այն է՝ ապահովելու հաջորդական անհատական գործարքների թափանցիկությունը (տե՛ս Հավելված 3): Փորձաշրջան անցնող ֆուտբոլիստը (տե՛ս Հոդված $19^3$) կարող է չգրանցվել՝ տվյալ փորձաշրջանի շրջանակներում ընկերական խաղերին մասնակցելու նպատակով:
3. Նույն ֆուտբոլիստը միևնույն ժամանակահատվածում կարող է գրանցված լինել միայն մեկ ակումբում:
4. Ֆուտբոլիստը մեկ մրցաշրջանի ընթացքում կարող է գրանցված լինել առավելագույնը երեք ակումբներում: Այդ դեպքում ֆուտբոլիստն իրավունք ունի մասնակցելու ակումբներից միայն երկուսի պաշտոնական խաղերին: Ի բացառություն սույն կանոնի՝ ֆուտբոլիստը «մասամբ համընկնող մրցաշրջաններ» (այսինքն՝ երբ մրցաշրջանը սկսվում է ոչ թե ձմռանը/գարնանը, այլ՝ ամռանը/աշնանը) ունեցող ասոցիացիաների մի ակումբից մյուսը տեղափոխվելիս իրավունք ունի տվյալ մրցաշրջանի ընթացքում հանդես գալու երրորդ ակումբի պաշտոնական խաղերին, եթե ամբողջությամբ կատարել է իր պայմանագրային պարտավորությունները նախկին ակումբների նկատմամբ, և պայմանով, որ պահպանվեն գրանցման ժամանակահատվածների (Հոդված 6) և պայմանագրի նվազագույն գործողության ժամկետին (տե՛ս Հոդվածի 18 կետ 2) վերաբերող դրույթները: Սույն կետի համաձայն՝ սահմանափակումները չեն կիրառվում, եթե ֆուտբոլիստը ցանկանում է գրանցվել՝ Հոդված 6-ի 3 ա) կետի բացառության համաձայն:
5. Բոլոր դեպքերում պատշաճ ուշադրություն պետք է դարձվի մրցաշարի սպորտային միասնությանը: Մասնավորապես, ելնելով կոնկրետ անդամ ասոցիացիաների ներքին մրցաշարերի համապատասխան կանոնակարգերից, պաշտոնական խաղերի ժամանակ ֆուտբոլիստը չի կարող հանդես գալ ավելի քան երկու այնպիսի ակումբների անունից, որոնք միևնույն մրցաշրջանի ժամանակ հանդես են գալիս նույն ազգային առաջնությունում կամ գավաթի մրցաշարում:
6. Ֆուտբոլիստին տրված ՖԻՖԱ կոդի (FIFA ID) և ֆուտբոլիստների գրանցման

էլեկտրոնային համակարգի ներմուծման հետ կապված՝

ա)ՀՖՖ-ն պետք է ՖԻՖԱ կոդ (FIFA ID) տրամադրի ՀՖՖ-ում գրանցված բոլոր այն ֆուտբոլիստներին, որոնց ՖԻՖԱ կոդ չի տրվել ֆուտբոլիստների գրանցման էլեկտրոնային համակարգը FIFA Connect ID ծառայության հետ ինտեգրելու ժամանակ։
բ) Այն դեպքում, երբ ֆուտբոլիստին արդեն տրվել է ՖԻՖԱ կոդ, ինչպես ցույց է տալիս FIFA Connect ID ծառայությունը, ՀՖՖ-ն պետք է համոզվի, որ նույն ՖԻՖԱ կոդն է օգտագործվում տվյալ ֆուտբոլիստին ՀՖՖ ֆուտբոլիստների գրանցման էլեկտրոնային համակարգում գրանցելու համար։
գ) Եթե FIFA Connect ID ծառայությունը պարզի, որ տվյալ ֆուտբոլիստը գրանցված է ֆուտբոլիստների գրանցման մեկից ավելի էլեկտրոնային համակարգում, ապա ՀՖՖ-ն պետք է լուծում տա տվյալ հարցի ի հայտ գալուց հետո 5 օրվա ընթացքում և առանց հապաղելու տեղեկացնի FIFA Connect ID ծառայությանը, և
դ) Ֆուտբոլիստի գրանցման և վերջինիս ՖԻՖԱ կոդը որոշելու նպատակով այլ ասոցիացիայից եկած հարցմանն ի պատասխան, ՀՖՖ-ն պետք է FIFA Connect ինտերֆեյսի միջոցով այլ ասոցիացիայի ֆուտբոլիստների գրանցման էլեկտրոնային համակարգին տրամադրի տվյալ ֆուտբոլիստի վերաբերյալ համապատասխան անձնական տեղեկատվությունը։

7. Այն պարագայում, երբ ՀՖՖ-ն նախկին ասոցիացիային էլեկտրոնային հարցում է ուղարկում՝ ճշտելու համար տվյալ ֆուտբոլիստի (թե՛ չափահաս, թե՛ անչափահաս) գրանցման կարգավիճակը և իր հարցմանը պատասխան չի ստանում, ապա իրավասու է գրանցել տվյալ ֆուտբոլիստին (առաջին գրանցում) ճշտման հարցումը կատարելուց 15 օր անց։

## Հոդված 5[1]. Կապակցող տրանսֆեր

1. Որևէ ակումբ կամ ֆուտբոլիստ իրավունք չունի ներգրավվելու կապակցող տրանսֆերի մեջ։
2. Եթե միևնույն ֆուտբոլիստի երկու հաջորդական տեղափոխությունները (թե՛ միջազգային և թե՛ ներքին) տեղի են ունենում 16 շաբաթվա ընթացքում, ապա նշված երկու տեղափոխություններում ներգրավված կողմերը (ակումբներն ու ֆուտբոլիստը) համարվում են կապակցող տրանսֆերի մասնակիցներ։
3. ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեն, համաձայն ՖԻՖԱ-ի Կարգապահական կանոնագրքի, պատժամիջոցներ կկիրառի ՖԻՖԱ-ի Կանոնադրության և կանոնակարգերի ցանկացած սուբյեկտի նկատմամբ, որոնք ներգրավված կլինեն կապակցող տրանսֆերների մեջ։

## Հոդված 6. Գրանցման ժամանակահատվածները

1. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստները կարող են գրանցվել ՀՖՖ-ի կողմից սահմանված երկու գրանցման ժամանակահատվածներից յուրաքանչյուրի ընթացքում։ ՀՖՖ-ն տղամարդկանց և կանանց պրոֆեսիոնալ մրցաշարերի համար սահմանել է նույն գրանցման ժամանակահատվածները։

2. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների (տղամարդկանց և կանանց) գրանցման համար սահմանվել են հետևյալ ժամանակահատվածները՝ 2024/2025թթ. և 2025/2026թթ. մրցաշրջանների համար հունիսի 21-ից սեպտեմբերի 12-ը և փետրվարի 1-28-ը:
Առաջին գրանցման ժամանակահատվածը կարող է ամենաշուտն սկսվել նախորդ մրցաշրջանի վերջին օրվան հաջորդող օրը, իսկ ամենաուշը՝ նոր մրցաշրջանի մեկնարկի օրը: Այն չպետք է տևի 8 շաբաթից պակաս կամ գերազանցի 12 շաբաթը: Երկրորդ գրանցման ժամանակահատվածը պետք է սկսվի ընթացիկ մրցաշրջանի կեսերին՝ տևելով 4 շաբաթից ոչ պակաս կամ չգերազանցելով 8 շաբաթը: Երկու գրանցման ժամանակահատվածների ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 16 շաբաթը: Գրանցման ժամանակահատվածները պետք է մուտքագրվեն ՏՀՀ ուժի մեջ մտնելուց առնվազն 12 ամիս առաջ (տե՛ս Հավելված 3): Բոլոր տրանսֆերները՝ թե՛ ներքին, թե՛ միջազգային, պետք է իրականացվեն նշված գրանցման ժամանակահատվածների ընթացքում՝ հաշվի առնելով նաև Հոդված 6-ի 3-րդ կետով սահմանված բացառությունները: Եթե ասոցիացիան ժամանակին ՖԻՖԱ-ին չի հաղորդում իր գրանցման ժամանակահատվածները, ապա ՖԻՖԱ-ն ինքն է որոշում դրանք:
3. ՀՖՖ-ն իրավասու է գրանցման ժամանակահատվածից դուրս բացառության կարգով գրանցել ֆուտբոլիստներին հետևյալ հանգամանքներում.
ա) Այն պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ, ով միակողմանիորեն խզել է պայմանագիրը մարզական տեսանկյունից հիմնավոր դրդապատճառով, կամ ում պայմանագիրը ակումբի կողմից միակողմանիորեն խզվել է մարզական տեսանկյունից առանց հիմնավոր դրդապատճառի, կարող է գրանցվել գրանցման ժամանակահատվածից դուրս տվյալ գրանցման ժամանակահատվածի ավարտից հետո 20 օրվա ընթացքում: ՄՏՍ-ի հարցումն ստանալուն պես ՖԻՖԱ-ի Գլխավոր քարտուղարությունը շտապ կերպով *prima facie* հիմունքներով գնահատում է, թե արդյոք միակողմանի խզումը տեղի է ունեցել հիմնավոր թե ոչ հիմնավոր դրդապատճառով, և համապատասխանաբար թույլ տալիս կամ մերժում գրանցումը: Նման *prima facie* գնահատականը չի կանխորոշում պայմանագրի խզման հետևանքների վերաբերյալ ՖԻՖԱ Ֆուտբոլային տրիբունալի և/կամ ՀՖՖ համապատասխան իրավասու մարմնի որոշումը:

բ) Այն պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ, ում պայմանագիրը բնականոն ճանապարհով դադարել է կամ լուծվել է երկկողմանի համաձայնությամբ նախքան նոր ակումբի համար կիրառելի գրանցման ժամանակահատվածի ավարտը, կարող է գրանցվել տվյալ ակումբում նաև տվյալ գրանցման ժամանակահատվածի ավարտից հետո 20 օրվա ընթացքում:

գ) Իգական սեռի ֆուտբոլիստը կարող է գրանցվել գրանցման ժամանակահատվածից դուրս՝ ժամանակավորապես փոխարինելով մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող, որդեգրման կամ ընտանեկան արձակուրդում գտնվող ֆուտբոլիստուհուն: Եթե այլ կերպ փոխհամաձայնեցված չէ, ապա իգական սեռի ֆուտբոլիստի ժամանակավոր փոխարինման պայմանագրի տևողությունը պետք է սահմանվի՝ սկսած գրանցման օրվանից մինչև իգական սեռի ֆուտբոլիստի՝ վերոնշյալ արձակուրդից վերադարձին հաջորդող գրանցման ժամանակահատվածի մեկնարկի նախորդ օրը:

դ) Իգական սեռի ֆուտբոլիստը կարող է գրանցվել գրանցման ժամանակահատվածից դուրս՝ վերջինիս՝ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար նախատեսված արձակուրդի, որդեգրման կամ ընտանեկան արձակուրդի, ինչպես նաև հղիությունից հետո վերականգնվելու ավարտին պես (տե՛ս Հոդված 18-ի 10-րդ դրույթը և Հոդված 18³-ը)՝ հաշվի առնելով նրա պայմանագրային կարգավիճակը:

ե) Այն պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը, ում պայմանագիրն դադարել կամ երկկողմանի համաձայնությամբ լուծվել է COVID-19-ի պատճառով, կարող է գրանցվել տվյալ գրանցման ժամանակահատվածից դուրս՝ անկախ պայամանագրի սպառման կամ լուծման ամսաթվից:

4. Ամեն անգամ գրանցման ժամանակահատվածից դուրս բացառության կարգով գրանցում թույլ տալիս ՀՖՖ-ն պետք է պատշաճ ուշադրություն դարձնի տվյալ մրցաշարի սպորտային միասնությանը: Գործատուների և աշխատողների ներկայացուցիչների կողմից ներպետական մակարդակում վավերականորեն համաձայնեցված կոլեկտիվ պայմանագրերը՝ ազգային օրենսդրության համաձայն, կարող են ավելի մանրամասն սահմանել սպորտային միասնության չափանիշը:
5. Այն դեպքերում, երբ ՖԻՖԱ-ի գլխավոր քարտուղարությունը թույլատրում է գրանցումը գրանցման ժամանակահատվածից դուրս՝ հիմնվելով սույն հոդվածի 3 ա) կետով սահմանված բացառության վրա, ցանկացած ներքին կարգավորող դրույթ կամ պայմանագրային համաձայնագիր, որը պահանջում է նախկին ակումբի համաձայնությունը ֆուտբոլիստին գրանցելու համար, կհամարվի անվավեր: Այն դեպքերում, երբ ֆուտբոլիստի աշխատանքային պայմանագրի ժամկետը լրացել է, ֆուտբոլիստին գրանցելու համար նախկին ակումբի համաձայնությունը չի պահանջվի:
6. Ինչ վերաբերում է սույն հոդվածի 3-րդ դրույթի գ) և դ) կետերով սահմանված բացառություններին, ասոցիացիաները պետք է համապատասխանաբար հարմարեցնեն իրենց ներպետական օրենքները: Այնուամենայնիվ, առաջնահերթությունը պետք է տրվի մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար նախատեսված արձակուրդից վերադարձած կին ֆուտբոլիստի իրավունքը ներքին առաջնություններին մասնակցելու, ինչպես նաև համապատասխան մրցումների սպորտային միասնության ապահովմանը:
7. Ֆուտբոլիստները կարող են գրանցվել միայն այն դեպքում, երբ ակումբը ֆուտբոլիստների գրանցման էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում նաև ՏՀՀ) պատշաճ դիմում (հարցում) է ներկայացրել ՀՖՖ-ին գրանցման ժամանակահատվածի ընթացքում՝ հաշվի առնելով նաև սույն Հոդվածի 3-րդ դրույթով սահմանված բացառությունները:
8. Գրանցման ժամկետներին վերաբերող դրույթները չեն տարածվում այն մրցաշարերի վրա, որոնց մասնակցում են միայն սիրողական կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստներ: Սիրողական կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստների գրանցման համար սահմանվում են հետևյալ ժամանակահատվածները՝ հուլիսի 23-ից նոյեմբերի 10-ը և փետրվարի 20-ից ապրիլի 20-ը՝ պատշաճ ուշադրություն դարձնելով վերոնշյալ մրցումների սպորտային միասնությանը:
9. Սիրողական կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստի՝ 4-րդ կարգի ակումբից առանց

կարգավիճակը փոխելու ավելի բարձր կարգի ակումբ տեղափոխության դեպքում, նրա վերագրանցումը նոր ակումբում թույլատրվում է նախկին ակումբում գրանցված օրվանից վեց ամիս հետո:

10. Սիրողական կարգավիճակ ունեցող իգական սեռի ֆուտբոլիստների գրանցման համար սահմանվում են հետևյալ ժամանակահատվածները՝ հուլիսի 23-ից նոյեմբերի 10-ը և փետրվարի 20-ից ապրիլի 20-ը:

## Հոդված 7. Ֆուտբոլիստի անձնագիրը

1. ՖԻՖԱ-ի՝ Վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգով չկարգավորվող մարզումային փոխհատուցման դեպքերում, ֆուտբոլիստների անձնագրերին վերաբերող առկա պարտավորությունները մնում են անփոփոխ: ՀՖՖ-ն պարտավոր է ֆուտբոլիստին գրանցող ակումբին տրամադրել տվյալ ֆուտբոլիստի մասին համապատասխան տվյալներ պարունակող ֆուտբոլիստի անձնագիր: 12 տարին լրացած յուրաքանչյուր ֆուտբոլիստ պետք է ունենա ֆուտբոլիստի անձնագիր, որում նշվում են այն ակումբները, որտեղ նա գրանցված է եղել որպես ֆուտբոլիստ՝ սկսած վերջինիս 12 տարեկանը լրանալու օրացուցային տարվանից: Եթե ֆուտբոլիստի ծննդյան օրը համընկնում է մրցաշրջանների միջև ընկած ժամանակահատվածի հետ, ապա ֆուտբոլիստի անձնագրում նշվում է այն ակումբը, որտեղ նա գրանցված է եղել իր ծննդյան օրվան հաջորդող մրցաշրջանում:
2. Ակումբը սկսնակ ֆուտբոլիստին պարտավոր է գրանցել ՀՖՖ-ում և ստանալ համապատասխան ֆուտբոլիստի անձնագիր:
3. ՀՖՖ-ն վարում է ֆուտբոլիստի էլեկտրոնային անձնագիրը, իսկ ֆուտբոլիստի անձնագրի բնօրինակը պահվում է ֆուտբոլիստին գրանցող ակումբում: Ֆուտբոլիստի 4 տարին լրանալուն պես, ինչպես նաև ֆուտբոլիստին առաջին անգամ որպես պրոֆեսիոնալ գրանցելիս՝ ֆուտբոլիստի անձնագիրը ենթակա է փոփոխման:
4. ՖԻՖԱ-ի՝ Վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգով կարգավորվող մարզումային փոխհատուցման դեպքերում, ՏՀՀ համակարգում ստեղծվում և կիրառվում է ֆուտբոլիստի էլեկտրոնային անձնագիրը: Ֆուտբոլիստի էլեկտրոնային անձնագիրը էլեկտրոնային փաստաթուղթ է, որը պարունակում է ֆուտբոլիստի գրանցման պատմությունը իր ամբողջ կարիերայի ընթացքում՝ ներառյալ համապատասխան ասոցիացիան, որտեղ վերջինս գրանցված է եղել, գրանցման կարգավիճակը (սիրողական կամ պրոֆեսիոնալ), գրանցման տեսակը (մշտական կամ վարձակալություն) և այն ակումբը/ ակումբները (ներառյալ մարզումային կատեգորիան), որտեղ նա գրանցված է եղել իր 12-րդ ծննդյան տարեդարձի օրացուցային տարվանից սկսած: Այն ստեղծվում է ՖԻՖԱ-ի՝ Վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգով սահմանված կարգով: Ֆուտբոլիստի էլեկտրոնային անձնագիրը ստեղծելու նպատակով ՀՖՖ-ն, FIFA Connect ինտերֆեյսով ՖԻՖԱ-ի պահանջի դեպքում, պետք է ապահովի ֆուտբոլիստի գրանցման վերաբերյալ հուսալի, ճշգրիտ և ամբողջական տեղեկատվության տրամադրումը նշված ինտերֆեյսի միջոցով:
5. Ֆուտբոլիստի յուրաքանչյուր տեղափոխության ժամանակ ֆուտբոլիստի անձնագիրը փոխանցվում է նախկին ակումբից նոր ակումբին: Ակումբը պատասխանատու է անձնագրի պահպանման համար: Անձնագրի կորստի դեպքում ՀՖՖ-ն տրամադրում է ֆուտբոլիստի անձնագրի կրկնօրինակ՝ ակումբի կողմից համապատասխան

տուգանքը վճարելուց հետո:

6. Եթե սույն կանոնակարգով սահմանված դեպքերում նախկին ակումբը հրաժարվում է ֆուտբոլիստին տրամադրել կամ նոր ակումբին փոխանցել ֆուտբոլիստի անձնագիրը, ապա ՀՖՖ-ն կարող է նոր ակումբին տրամադրել ֆուտբոլիստի անձնագրի կրկնօրինակը:

## Հոդված 8. Գրանցման կարգը

1. ՀՖՖ-ում ֆուտբոլիստների գրանցումն իրականացվում է Ֆուտբոլի կառավարման համակարգի (FMS) միջոցով: Ակումբը համակարգ է մուտք անում հետևյալ փաստաթղթերը.
   - ֆուտբոլիստի անձը հաստատող փաստաթուղթը
   - գունավոր լուսանկար (3x4),
   - պայմանագրի էլեկտրոնային ստորագրված օրինակը (ներկայացվում է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ գրանցելու դեպքում):
2. 16 տարին չլրացած ֆուտբոլիստների համար անձը հաստատող փաստաթղթի (ՀՀ քաղաքացու անձնագիր) բացակայության դեպքում ներկայացվում են ծննդյան վկայական (ՀՀ քաղաքացու ծննդյան վկայական) և ուսումնական հաստատության տնօրենի կողմից ստորագրված և կնքված (կնիքը պետք է մասամբ ընդգրկի աշակերտի լուսանկարը) տեղեկանք, որում պետք է առկա լինեն.
   - աշակերտի լուսանկարը (գունավոր),
   - ազգանունը, անունը, հայրանունը
   - ծննդյան օր, ամիս, տարի,
   - դպրոցի անվանում,
   - տեղեկանքի տրման ամսաթիվ:

## Հոդված 9. Միջազգային տրանսֆերային սերտիֆիկատ (ՄՏՍ)

1. Միջազգային տրանսֆերի դեպքում ֆուտբոլիստները գրանցվում են ՀՖՖ-ում՝ ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի և սույն կանոնակարգի դրույթներին համապատասխան: Ֆուտբոլիստը, ով գրանցված է ՀՖՖ–ում, իրավունք չունի գրանցվել նոր ասոցիացիայում, քանի դեռ վերջինս ՀՖՖ–ից չի ստացել միջազգային տրանսֆերային սերտիֆիկատը (ՄՏՍ): ՄՏՍ-ը տրամադրվում է անվճար, առանց որևէ պայմանի և անժամկետ: Վերոնշյալին հակասող բոլոր դրույթները համարվում են անվավեր: ՀՖՖ–ն ՄՏՍ-ի պատճենը ուղարկում է նաև ՖԻՖԱ: ՄՏՍ-ի տրամադրման գործընթացը մանրամասն նկարագրված է սույն կանոնակարգի Հավելված 3-ում:
2. Փորձաշրջան անցնելու շրջանակներում ֆուտբոլիստին ընկերական խաղերում ներգրավելու նպատակով ՄՏՍ պահանջելն արգելվում է:
3. Բացառությամբ ՖԻՖԱ-ի՝ Վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգով կարգավորվող դեպքերի՝ ՀՖՖ–ն ՄՏՍ-ը ստանալուց հետո գրավոր տեղեկացնում է 12-23 տարեկան հասակում ֆուտբոլիստին մարզած և կրթած ակումբի (ակումբների) ասոցիացիային (ասոցիացիաներին) (տե՛ս ՀՖՖ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի Հոդված 7-ը-ֆուտբոլիստի անձնագիր) այն մասին, որ պատրաստվում է գրանցել ֆուտբոլիստին որպես

պրոֆեսիոնալ:

4. Մինչև 10 տարեկան ֆուտբոլիստների համար ՄՏՍ չի պահանջվում:

## Հոդված 10. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների վարձակալությունը

1. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը կարող է նախապես սահմանված ժամկետով իր ակումբի կողմից («նախկին ակումբ») վարձակալությամբ տեղափոխվել մեկ այլ ակումբ («նոր ակումբ») գրավոր համաձայնագրի հիման վրա: Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների վարձակալության դեպքում կիրառվում են հետևյալ կանոնները՝
   ա) Ակումբները պետք է կնքեն գրավոր համաձայնագիր՝ սահմանելով վարձակալության պայմանները («վարձակալության պայմանագիր»), մասնավորապես՝ վերջինիս ժամկետը և ֆինանսական պայմանները: Տվյալ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը նույնպես կարող է հանդիսանալ Վարձակալության պայմանագրի կողմ:
   բ) Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը և նոր ակումբը պետք է կնքեն վարձակալության ժամկետին համապատասխան պայմանագիր: Այդ պայմանագրով պետք է սահմանվի, որ տվյալ ֆուտբոլիստը գտնվում է նոր ակումբում վարձակալական հիմունքներով:
   գ) Վարձակալության համաձայնեցված ժամանակահատվածի ընթացքում ֆուտբոլիստի և նախկին ակումբի միջև պայմանագրային պարտավորությունները կասեցվում են, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան համաձայնագրով:
   դ) Հաշվի առնելով Հոդված 5-ի 4-րդ դրույթը՝ վարձակալությանպայմանագիր կարող է կնքվել գրանցման երկու ժամանակաշրջանների միջև ընկած ժամանակահատվածի նվազագույն տևողությամբ և առավելագույնը մեկ տարի ժամկետով: Ավարտի ամսաթիվը պետք է լինի նախկին ակումբի ասոցիացիայի գրանցման ժամանակահատվածներից մեկի ընթացքում: Ցանկացած դրույթ, որով կսահմանվի վարձակալության ավելի երկար տևողություն, անվավեր է:
   ե) Վարձակալության պայմանագիրը կարող է երկարաձգվել ՝ համաձայն վերը նշված նվազագույն և առավելագույն ժամկետների՝ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի գրավոր համաձայնությամբ:
   զ) Նոր ակումբին արգելվում է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին ենթավարձակալությամբ (sub-loan) կամ մշտական գրանցմամբ տեղափոխել երրորդ ակումբ:

2. Մինչև սույն կանոնակարգի ուժի մեջ մտնելը մեկ տարուց ավելի տևողությամբ կնքված վարձակալության պայմանագրերը կարող են շարունակվել մինչև դրանց պայմանագրային ժամկետի ավարտը: Վերջիններս կարող են երկարաձգվել միայն՝ համաձայն Հոդված 10-ի 1-ին դրույթի ե) կետի:
3. Ֆուտբոլիստի վարձակալությունը կարգավորվում է 5-11-րդ Հոդվածներով և Հավելված 3-ով նախատեսված վարչական ընթացակարգերին համապատասխան:
4. Եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և նոր ակումբի միջև պայմանագիրը միակողմանի դադարեցվել է մինչև վարձակալության պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտը, ապա՝
   ա) ֆուտբոլիստն իրավունք ունի վերադառնալու նախկին ակումբ;
   բ) ֆուտբոլիստը պետք է անհապաղ տեղեկացնի նախկին ակումբին վաղաժամկետ դադարեցման մասին և արդյոք նա մտադիր է վերադառնալ նախկին ակումբ;
   գ) եթե ֆուտբոլիստը որոշում է վերադառնալ նախկին ակումբ, նախկին ակումբը պետք

է անհապաղ վերաինտեգրի նրան: Վարձակալության ընթացքում կասեցված պայմանագիրը կվերականգնվի վերաինտեգրման օրվանից, և, մասնավորապես, նախկին ակումբը պետք է ֆուտբոլիստին վճարի փոխհատուցում

դ) ազգային մակարդակով գրանցումը կարգավորող կանոնները պետք է սահմանվեն ասոցիացիայի կողմից՝ համաձայնեցնելով ֆուտբոլի տեղական շահագրգիռ մարմինների հետ:

5. Հոդվածի 10-ի 4-րդ կետի պայմանները պետք է չհակասեն՝

ա) Հոդված 17-ի կիրառմանը, որը վերաբերում է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և նոր ակումբի միջև պայմանագրի դադարեցմանը.

բ) Հոդված 17-ի կիրառմանը, եթե նախկին ակումբը չի կարողանում անմիջապես վերաինտեգրել ֆուտբոլիստին; և

գ) նախկին ակումբի՝ ֆուտբոլիստին վերաինտեգրելու պարտավորությունից բխող փոխհատուցում պահանջելու իրավունքին: Վճարման ենթակա նվազագույն փոխհատուցումը կկազմի այն գումարը, որը նախկին ակումբը պետք է վճարի ֆուտբոլիստին վերաինտեգրման օրվա և վարձակալության պայմանագրի իրական ավարտի ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածի համար:

6. Հետնյալ սահմանափակումները կկիրառվեն 2024 թվականի հուլիսի 1-ից.

ա) ակումբը կարող է ունենալ առավելագույնը վեց պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ, ովքեր մրցաշրջանի ընթացում ցանկացած պահի վարձակալական հիմունքներով տեղափոխվել են ակումբից;

բ) ակումբը կարող է ունենալ առավելագույնը վեց պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ, ովքեր մրցաշրջանի ընթացքում ցանկացած պահի վարձակալական հիմունքներով տեղափոխվել են իր ակումբ:

7. Ֆուտբոլիստի վարձակալությունը կազատվի վերը նշված սահմանափակումներից, եթե՝

ա) վարձակալությունը տեղի է ունենում մինչև նախկին ակումբի այն մրցաշրջանի ավարտը, որի ընթացքում լրանում է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի 21 տարեկանը. և

բ) պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը նախկին ակումբում «ակումբում մարզված» ֆուտբոլիստ է (club-trained player):

8. Հետնյալ սահմանափակումները կիրառվում են անկախ տարիքից կամ «ակումբում մարզված» կարգավիճակից.

ա) ակումբը կարող է ունենալ առավելագույնը երեք պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ, ովքեր մրցաշրջանի ընթացում ցանկացած պահի վարձակալական հիմունքներով տեղափոխվել են որոշակի ակումբ;

բ) ակումբը կարող է ունենալ առավելագույնը երեք պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ, ովքեր մրցաշրջանի ընթացում ցանկացած պահի վարձակալական հիմունքներով որոշակի ակումբից տեղափոխվել են տվյալ ակումբ:

9. Հոդված 10-ի 6-րդ կետի սահմանափակումների համար կիրառվում է հետնյալ անցումային շրջանը.

ա) 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2023թ. հունիսի 30-ը՝ առավելագույնը ութ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ յուրաքանչյուր սահմանափակման համար.

բ) 2023թ. հուլիսի 1-ից մինչև 2024թ. հունիսի 30-ը՝ առավելագույնը յոթ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ յուրաքանչյուր սահմանափակման համար:

## Հոդված 11. Չգրանցված ֆուտբոլիստներ

Անօրինական է համարվում ցանկացած ֆուտբոլիստի՝ ակումբի կազմում պաշտոնական խաղին մասնակցելը, եթե նա գրանցված չէ ՀՖՖ-ում: Չսահմանափակվելով միջոցներով, որոնք անհրաժեշտ են հանդիպմանը ֆուտբոլիստի անօրինական մասնակցության հետևանքով առաջացած բացասական հետևանքները վերացնելու համար՝ ՀՖՖ-ն կարող է նաև կիրառել պատժամիջոցներ ֆուտբոլիստի և/կամ ակումբի նկատմամբ:

## Հոդված 12. Կարգապահական տույժերի կիրառում

1. Ցանկացած կարգապահական տույժ՝ մինչև 4 հանդիպման կամ մինչև 3 ամիս ժամկետով, որը ֆուտբոլիստի նկատմամբ կիրառվել է նախկին ասոցիացիայի կողմից, բայց դեռ (ամբողջովին) չի գործարկվել մինչև վերջինիս տեղափոխությունը, կկիրառվի նոր ասոցիացիայի կողմից, որտեղ ֆուտբոլիստը գրանցվել է, որպեսզի պատժամիջոցը կատարվի ազգային մակարդակով: Ֆուտբոլիստի ՄՏՍ-ը տրամադրելիս, նախկին ասոցիացիան ՏՀՀ-ի միջոցով պետք է տեղեկացնի նոր ասոցիացիային ցանկացած նման կարգապահական տույժի մասին, որը դեռևս (ամբողջովին) չի կիրառվել:
2. Ցանկացած կարգապահական տույժ՝ 4 հանդիպումից կամ 3 ամսից ավել ժամկետով, որը ֆուտբոլիստի նկատմամբ կիրառվել է նախկին ասոցիացիայի կողմից, բայց դեռ (ամբողջովին) չի գործարկվել մինչև վերջինիս տեղափոխությունը, կկիրառվի նոր ասոցիացիայի կողմից, որտեղ ֆուտբոլիստը գրանցվել է, եթե միայն ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեն երկարաձգի կարգապահական տույժը լայնամասշտաբ ազդեցություն ունենալու նպատակով:

## Հոդված 12[1]. Ժամկետանց վճարումներ

1. Ակումբները պարտավոր են կատարել ֆուտբոլիստների և այլ ակումբների հանդեպ ունեցած իրենց ֆինանսական պարտավորությունները՝ համաձայն այն պայմանների, որոնք ամրագրված են պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների հետ կնքված պայմանագրերում և տրանսֆերային համաձայնագրերում:
2. Առանց ակնհայտ պայմանագրային հիմքի՝ վճարումն ավելի քան 30 օրով ուշացրած յուրաքանչյուր ակումբ ենթարկվում է պատժամիջոցների՝ համաձայն ստորև նշված 4-րդ կետի:
3. Սույն հոդվածի համաձայն՝ ակումբը համարվում է ժամկետանց վճարումներ ունեցող, եթե պարտապանը (ֆուտբոլիստ կամ ակումբ) գրավոր ձևով տեղեկացրել է պարտատեր ակումբին ժամկետանց վճարումներ ունենալու մասին և առնվազն 10 օր վերջնաժամկետ է շնորհել պարտապան ակումբին իր ֆինանսական պարտավորությունները կատարելու համար:
4. ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալն իր իրավասությունների շրջանակներում (տե՛ս ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի Հոդված 22-24-ը) կարող է կիրառել հետևյալ պատժամիջոցները՝

ա) զգուշացում,

բ) նկատողություն,

գ) տույժ,

դ) ազգային կամ միջազգային մակարդակով, մեկ կամ երկու ամբողջական իրար հաջորդող գրանցման ժամանակահատվածներում նոր ֆուտբոլիստներ գրանցելու արգելք:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված պատժամիջոցները կարող են կիրառվել միասնական տարբերակով:
6. Կրկնվող խախտումը կդիտարկվի որպես ծանրացուցիչ հանգամանք և կհանգեցնի առավել ծանր պատժամիջոցի կիրառմանը:
7. Պայմանագրային հարաբերությունների միակողմանի խզման դեպքում սույն հոդվածի պայմանները գործում են անկախ հետագա պատժամիջոցների կիրառման անհրաժեշտության՝ համաձայն սույն կանոնակարգի Հոդված 17-ի:
8. Սույն հավելվածով նախատեսված տուգանքները ենթակա են վճարման ՀՖՖ-ի որոշման կայացման պահից 30 օրվա ընթացքում:

# ԳԼՈՒԽ 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՄԻՋԵՎ

## Հոդված 13. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և ակումբի հարաբերությունները

1. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և ակումբի միջև հարաբերությունները կարգավորվում են ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՀՖՖ-ի կանոնակարգող փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնակարգով:
2. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և ակումբի իրավունքներն ու պարտականություններն ամրագրվում են սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրում: Սույն պայմանագիրը կարող է կա՛մ դադարել, կա՛մ վաղաժամ լուծվել նշված կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
3. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստն իրավունք չունի նույն ժամանակահատվածի համար մեկից ավելի աշխատանքային պայմանագրեր կնքելու (բացառությամբ՝ վարձակալության դեպքի):
4. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և ակումբի միջև ֆինանսական և/կամ այլ կոմերցիոն գաղտնիք պարունակող հարաբերությունները կարող են արտացոլվել պայմանագրին կից կնքվող հավելվածում (հավելվածներում): Հավելվածի (հավելվածների) առկայության մասին պետք է նշված լինի աշխատանքային պայմանագրի հիմնական տեքստում:
5. Աշխատանքային պայմանագրին կից կնքվող հավելվածի (հավելվածների) գրանցումը ՀՖՖ-ում պարտադիր չէ, սակայն համապատասխան վեճերի առկայության դեպքում ՀՖՖ Վեճերի լուծման պալատի պահանջով ենթակա է պարտադիր ներկայացման:
6. ՀՖՖ-ում գրանցելու նպատակով ներկայացվող աշխատանքային պայմանագիրը, կից հավելվածները, փոփոխություններն ու լրացումները, լրացուցիչ համաձայնությունները կազմվում են գրավոր երեք օրինակից (կողմերի կողմից էջ առ էջ ստորագրված), որոնցից մեկ օրինակը Ակումբի կողմից ներբեռնվում է FMS-ի համապատասխան բաժին: Ակումբի կողմից յուրաքանչյուր ներբեռնվող պայմանագրի (ներառյալ հավելվածներ, փոփոխություններ, լրացումներ, լրացուցիչ համաձայնագեր և այլն) բովանդակության մեջ պետք է լինի համապատասխան նշում պայմանագրի՝ երեք օրինակից կազմված լինելու և FMS-ի միջոցով ՀՖՖ ներկայացնելու վերաբերյալ: Ընդ որում, ՀՖՖ պահանջով Ակումբը պարտավոր է անկապատ ներկայացնել նաև պայմանագրի ՀՖՖ ներկայացման ենթակա բնօրինակը:
7. Պայմանագրի նվազագույն պահանջները, ինչպես նաև տիպային օրինակը ներկայացված են Հավելված 2-ում:

## Հոդված 13[1]. Պայմանագրի գրանցումը

1. Ակումբի և ֆուտբոլիստի միջև կնքված պայմանագիրը, համաձայնագիրը, ինչպես նաև դրանցում բոլոր փոփոխություններն ու լրացումները ենթակա են ներկայացման ՀՖՖ գրանցման դրանք կնքվելուց հետո 15-օրյա ժամկետում:
2. ՀՖՖ ներկայացվում են պայմանագրի, համաձայնագրերի էլեկտրոնային ստորագրված օրինակները (կողմերի կողմից էջ առ էջ ստորագրված)՝ FMS-ի համապատասխան բաժին ներբեռնելու միջոցով: Ընդ որում, ՀՖՖ պահանջով Ակումբը պարտավոր է անկապատ ներկայացնել նաև նշված փաստաթղթերի՝ ՀՖՖ ներկայացման ենթակա

բնօրինակները:որոնցից մեկ օրինակը Ակումբի կողմից ներբեռնվում է FMS-ի համապատասխան բաժին: ՀՖՖ-ն սույն հոդվածի 1-ին կետում նշված պայմանագրի, համաձայնագրի, ինչպես նաև դրանցում բոլոր փոփոխություններն ու լրացումները պետք է գրանցի դրանք ստանալուց հետո 15-օրյա ժամկետում:

3. Չգրանցված պայմանագիրը չի կարող հիմք հանդիսանալ ակումբի և պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի միջև պայմանագրային վեճի քննարկման համար:

## Հոդված 14. Պայմանագրի լուծումը հիմնավոր դրդապատճառներով

1. Պայմանագիրը կարող է միակողմանի, առանց հետևանքների (փոխհատուցման վճարում կամ մարզական պատժամիջոցներ) լուծվել միայն հիմնավոր դրդապատճառների առկայության դեպքում:
2. Կողմերից որևէ մեկի ցանկացած ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումը, որի նպատակն է ստիպել հակառակ կողմին լուծել պայմանագիրը կամ փոխել դրա դրույթները, իրավունք է տալիս հակառակ կողմին (ֆուտբոլիստին կամ ակումբին) հիմնավոր դրդապատճառով լուծել պայմանագիրը:

## Հոդված 14[1]. Պայմանագրի լուծումն աշխատավարձերի չվճարման հիմնավոր դրդապատճառով

1. Եթե ակումբը, խախտելով սահմանված կարգը, առնվազն 2 ամիս շարունակ ֆուտբոլիստին չի վճարել աշխատավարձը սահմանված ժամկետներում, ապա վերջինս ձեռք է բերում պայմանագիրը լուծելու հիմնավոր դրդապատճառ՝ պայմանով, որ նա գրավոր կերպով ծանուցել և առնվազն 15 օրվա վերջնաժամկետ է տրամադրել պարտապան (դեբիտոր) ակումբին ֆինանսական պարտավորությունները կատարելու համար:
   Նախքան սույն դրույթն ուժի մեջ մտնելը կնքված աշխատանքային պայմանագրերի պարագայում կարող են հաշվի առնվել դրանցում արդեն իսկ արձանագրված այլընտրանքային պայմանները:
2. Ֆուտբոլիստի ստացած ցանկացած վարձատրության դեպքում, որը ենթակա չէ վճարման ամսական հիմունքով, հաշվի է առնվում նրա՝ երկու ամսվան համարժեք վարձատրության չափը համամասնության սկզբունքով: Առնվազն երկու ամսվա վարձատրությանը համարժեք գումարի չափով վճարման ուշացումը նույնպես կարող է պայմանագիրը լուծելու հիմնավոր դրդապատճառ հանդիսանալ ֆուտբոլիստի համար, եթե վերջինս պահպանել է պայմանագրի լուծման մասին ծանուցման՝ սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգը:
3. Գործատուների և աշխատողների ներկայացուցիչների միջև բանակցությունների արդյունքում՝ ազգային մակարդակով և երկրի օրենսդրությանը համաձայն կնքված կոլեկտիվ պայմանագրերը կարող են շեղումներ պարունակել վերոնշյալ 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներից: Նման պայմանագրերի դրույթները գերակայում են:

## Հոդված 15. Պայմանագրի լուծումը մարզական տեսանկյունից հիմնավոր դրդապատճառներով

1. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը, որը մրցաշրջանի ընթացքում մասնակցել է իր ակումբի անցկացրած 10%-ից քիչ պաշտոնական խաղերի, կարող է վաղաժամ՝ նախքան մրցաշրջանի ավարտը, լուծել պայմանագիրը մարզական դրդապատճառներով: Նման դեպքերում հատուկ ուշադրություն է դարձվում ֆուտբոլիստին վերաբերող հանգամանքներին:
2. Եթե պայմանագրի լուծումը մարզական տեսանկյունից հիմնավորված է, ապա մարզական պատժամիջոցներ չեն կիրառվում, սակայն պայմանագրում նշված փոխհատուցումը պետք է տրամադրվի: Այդ դեպքում պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը կարող է լուծել պայմանագիրն իր ակումբի մրցաշրջանի վերջին պաշտոնական խաղից հետո՝ 15-օրյա ժամկետում:

## Հոդված 16. Մրցաշրջանի ընթացքում պայմանագրի լուծման սահմանափակումը

Պայմանագիրը չի կարող միակողմանի լուծվել մրցաշրջանի ընթացքում՝ բացառությամբ սույն կանոնակարգով նախատեսված դեպքերի:

## Հոդված 17. Առանց հիմնավոր դրդապատճառի պայմանագրի լուծման հետևանքները

Առանց հիմնավոր դրդապատճառի պայմանագրի լուծման դեպքում կիրառվում են ստորև նշված դրույթները՝

1. Պայմանագիրը խախտող կողմը վճարում է փոխհատուցում: Հաշվի առնելով մարզումային փոխհատուցման վերաբերյալ Հավելված 4-ի դրույթները, ինչպես նաև այն, որ եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա պայմանագիրն առանց հիմնավոր դրդապատճառի լուծելու դեպքում փոխհատուցումը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրությունը, մարզական առանձնահատկությունները և ցանկացած այլ օբյեկտիվ չափանիշներ, որոնք, մասնավորապես, ընդգրկում են՝
   – առկա և/կամ նոր պայմանագրի համաձայն ֆուտբոլիստին հասանելիք վարձավճարները և այլ եկամուտները,
   – մինչև պայմանագրի ավարտը մնացած ժամանակահատվածը (առավելագույնը մինչև 5 տարի),
   – նախկին ակումբի կողմից վճարված գումարները և ծախսերը (ամորտիզացիոն կերպով բաշխված պայմանագրի գործողության ողջ ժամկետի վրա),
   – արդյոք պայմանագրի լուծումը տեղի է ունեցել պաշտպանված ժամանակահատվածի ընթացքում:

2. Հաշվի առնելով վերոնշյալ սկզբունքները՝ ֆուտբոլիստի համար նախատեսված փոխհատուցումը պետք է հաշվարկվի հետևյալ կերպ՝

   ա) եթե ֆուտբոլիստն իր նախորդ պայմանագիրը լուծելուց հետո նոր պայմանագիր չի կնքել, ապա որպես կանոն, փոխհատուցումը պետք է համարժեք լինի վաղաժամ լուծված պայմանագրի մնացորդային արժեքին:
   բ) եթե ֆուտբոլիստը նոր պայմանագիր է ստորագրել որոշումը կայացնելու ժամանակ, ապա նոր պայմանագրի՝ վաղաժամ լուծված պայմանագրի դեռևս մնացած ժամանակահատվածին համապատասխանող արժեքը պետք է նվազեցվի վաղաժամ

լուծված պայմանագրի մնացորդային արժեքից («Նվազեցված փոխհատուցում»): Ավելին, ժամկետանց պարտքերի հետևանքով պայմանագրի վաղաժամ լուծման դեպքում, ի լրումն Նվազեցված փոխհատուցման, ֆուտբոլիստն իրավունք կունենա ստանալու երեք ամսվա աշխատավարձին համարժեք գումար («Հավելյալ փոխհատուցում»): Հատուկ դեպքերում Հավելյալ փոխհատուցման չափը կարող է հասնել մինչև ամսական աշխատավարձի առավելագույնը վեցապատիկին: Փոխհատուցման ենթակա ընդհանուր գումարը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել վաղաժամ լուծված պայմանագրի մնացորդային արժեքը:

գ) Ներպետական օրենսդրության համաձայն գործատուների և աշխատողների ներկայացուցիչների միջև ազգային մակարդակով ընթացած բանակցությունների արդյունքում կնքված կոլեկտիվ պայմանագրերը կարող են շեղումներ պարունակել վերը նշված ա) և բ) կետերով սահմանված սկզբունքներից: Նման պայմանագրերի դրույթները գերակայում են:

3. Փոխհատուցման իրավունքը չի կարող փոխանցվել երրորդ կողմին: Եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը պետք է փոխհատուցում վճարի, ապա տվյալ ֆուտբոլիստը և նրա նոր ակումբը հավասարաչափ (համապարտ) պատասխանատվություն են կրում այդ վճարումների համար: Գումարի չափը կարող է նախատեսվել պայմանագրով կամ համաձայնեցվել կողմերի միջև:
4. Պաշտպանված ժամանակահատվածում ֆուտբոլիստի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում փոխհատուցման պարտավորությունից բացի կարող են կիրառվել նաև մարզական պատժամիջոցներ: Նշված պատժամիջոցը շուրջ չորս ամսով, իսկ որոշ դեպքերում՝ վեց ամսով, ֆուտբոլիստին զրկում է պաշտոնական խաղերում հանդես գալու իրավունքից: Սույն մարզական պատժամիջոցներն ուժի մեջ են մտնում տվյալ որոշման մասին ֆուտբոլիստի տեղեկացման պահից և շարունակում են ուժի մեջ մնալ մրցաշրջանի վերջին պաշտոնական խաղի և հաջորդ մրցաշրջանի առաջին պաշտոնական խաղի միջև ընկած ժամանակահատվածում՝ ներառելով ակումբների ազգային գավաթների մրցաշարերն ու միջազգային առաջնությունները: Սույն մարզական պատժամիջոցով պայմանավորված որակազրկումը, այնուամենայնիվ, չի կիրառվում, եթե ֆուտբոլիստը հանդիսանում է այն ասոցիացիայի հավաքականի անդամ, որին իրավասու է ներկայացնել, և եթե տվյալ ասոցիացիան հաջորդ մրցաշրջանի վերջին և առաջին խաղերի միջև ընկած ժամանակահատվածում մասնակցում է միջազգային մրցաշարի եզրափակիչ փուլին: Առանց հիմնավոր կամ մարզական տեսանկյունից հիմնավոր դրդապատճառների պաշտպանված ժամանակահատվածից դուրս պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում մարզական պատժամիջոցներ չեն կիրառվում: Այնուամենայնիվ, պաշտպանված ժամանակահատվածից դուրս պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում կարող են կիրառվել կարգապահական պատժամիջոցներ, եթե պայմանագրի վաղաժամկետ լուծման վերաբերյալ համապատասխան ծանուցում չի ներկայացվել ՀՖՖ՝ մրցաշրջանի (ներառյալ՝ ՀՀ Գավաթի խաղարկության) ընթացքում ակումբի (որտեղ գրանցված է տվյալ ֆուտբոլիստը) վերջին պաշտոնական խաղից հետո 15-օրյա ժամկետում: Այն դեպքում, երբ ֆուտբոլիստի նախկին պայմանագրի ժամկետը երկարացվում է (պայմանագրի նորացում), պաշտպանված ժամանակահատվածը վերսկսվում է:
5. Պաշտպանված ժամանակահատվածում ակումբի կողմից պայմանագիրը լուծելուկամ

պայմանագրի լուծում հրահրելու մեջ մեղավոր ճանաչվելու դեպքում, փոխհատուցում վճարելու պարտավորությունից բացի, կիրառվում են նաև մարզական պատժամիջոցներ: Ենթադրվում է, որ առանց հիմնավոր դրդապատճառի պայմանագիրը լուծած պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի հետ նոր պայմանագիր ստորագրած ակումբն է հրահրել նրան նման գործողությունների, եթե չի ապացուցվում հակառակը: Այդ դեպքում ակումբը զրկվում է երկու իրար հաջորդող գրանցման ժամանակահատվածների ընթացքում տեղական և միջազգային մակարդակով որևէ նոր ֆուտբոլիստ գրանցելու հնարավորությունից: Ակումբն իրավունք է ստանում գրանցել նոր ֆուտբոլիստի (տեղական կամ միջազգային մակարդակով) միայն տվյալ մարզական պատժամիջոցն ամբողջությամբ կրելուն հաջորդող գրանցման ժամանակահատվածում: Մասնավորապես, ակումբը չի կարող օգտվել ՀՖՖ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի Հոդված 6-ի 1-ին կետում ամրագրված բացառությունից և ժամանակավոր միջոցներից՝ ֆուտբոլիստներին առավել վաղ շրջանում գրանցելու նպատակով:

6. ՖԻՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրության ու կանոնակարգերին ենթակա այն անձանց նկատմամբ, ովքեր փորձում են իրենց գործողություններով պայմանագրի լուծում հրահրել ակումբի և պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի միջև՝ վերջինիս տեղափոխությունը հեշտացնելու նպատակով, ենթակա են կիրառման պատժամիջոցներ:

## Հոդված 18. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և ակումբի միջև կնքվող պայմանագրի հատուկ պայմանները

1. Ֆուտբոլային գործակալի ծառայությունների ներգրավվածությամբ կնքված ցանկացած աշխատանքային պայմանագրում պետք է նշվի ֆուտբոլային գործակալի անունը, նրա հաճախորդի (ֆուտբոլիստի կամ ակումբի) անունը, ՖԻՖԱ-ի արտոնագրի համարը և ստորագրությունը՝ համաձայն ՖԻՖԱ-ի ֆուտբոլային գործակալի վերաբերյալ կանոնակարգի:
2. Պայմանագրի նվազագույն տևողությունը պետք է լինի պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև տվյալ մրցաշրջանի ավարտը, իսկ առավելագույն տևողությունը՝ 5 տարի: Նվազ ժամկետով կնքված պայմանագրերի ժամկետներն անհրաժեշտության դեպքում կարող են երկարաձգվել՝ ժամկետի փոփոխության վերաբերյալ լրացուցիչ համաձայնագիր կազմելու միջոցով, սակայն դրանց հանրագումարը չի կարող գերազանցել սույն կետով սահմանված պայմանագրի առավելագույն 5 տարի ժամկետը:
3. 18 տարին չլրացած ֆուտբոլիստը չի կարող կնքել պայմանագիր, որի ժամկետը գերազանցում է երեք տարին:
4. Աշխատանքային պայմանագիր ինքնուրույն կարող է ստորագրել միայն 16 տարին լրացած ֆուտբոլիստը: 14-ից 16 տարեկան ֆուտբոլիստի հետ պայմանագիր կարող է կնքվել վերջինիս ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ: 14 տարին չլրացած ֆուտբոլիստի հետ աշխատանքային պայմանագիր կնքելն արգելվում է:
5. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի հետ պայմանագիր կնքել ցանկացող ակումբը պետք է մինչև բանակցություններ սկսելը իր մտադրության մասին գրավոր տեղեկացնի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի գործող ակումբին: Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստն իրավասու է պայմանագիր կնքել այլ ակումբի հետ, եթե իր ակումբի հետ գործող

պայմանագիրն ավարտվել է կամ կավարտվի վեց ամսից ոչ ուշ: Այս դրույթի յուրաքանչյուր խախտում ենթակա է սույն կանոնակարգով նախատեսված պատժամիջոցների:

6. Եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը միևնույն ժամանակահատվածում կնքում է մեկից ավելի պայմանագիր, ապա կիրառվում են սույն Գլխով սահմանված դրույթները:
7. Ֆուտբոլիստի Պայմանագրը գործում է անկախ ֆուտբոլիստի բժշկական հետազոտության արդյունքներից և/կամ աշխատանքի թույլտվության հանգամանքից:
8. Եթե ֆուտբոլիստը մարզումների, հավաքների, խաղերի կամ մրցուղևորության ժամանակ ստացած խեղման (վնասվածք) հետևանքով կորցրել է աշխատունակությունը, ապա նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը չի կարող լուծվել ակումբի նախաձեռնությամբ՝ առանց ֆուտբոլիստի համաձայնության՝ մինչև նրա աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամության կարգի որոշումը:
9. Պայմանագրային դրույթները, որոնք ակումբին լրացուցիչ ժամանակ են շնորհում (այսպես կոչված «արտոնյալ ժամանակահատվածներ») պայմանագրով վճարման ենթակա գումարները ֆուտբոլիստին վճարելու համար, առոչինչ են: «Արտոնյալ ժամանակահատվածները», որոնք ներառված են գործատուների և աշխատողների ներկայացուցիչների միջև ներպետական մակարդակով, երկրի օրենսդրության համաձայն կնքված կոլեկտիվ պայմանագրերում, այնուամենայնիվ, օրինաչափորեն ճանաչվում են պարտադիր: Այս արգելքը չի վերաբերում սույն դրույթն ուժի մեջ մտնելուց առաջ ստորագրված և գործող պայմանագրերին:
10. Իգական սեռի ֆուտբոլիստները իրենց պայմանագրի գործողության ընթացքում ունեն հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք, որը վճարվում է վերջիններիս պայմանագրով սահմանված աշխատավարձի երկու երրորդի չափով: Այն դեպքում, երբ տվյալ երկրի ներպետական օրենսդրությունը կամ կոլեկտիվ պայմանագրերը այլ շահեկան պայմաններ չեն նախատեսում, գործում են սույն կետով սահմանված կանոնները:

# ԳԼՈՒԽ 5. ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՖՈՒՏԲՈԼԻՍՏԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ

## Հոդված 18[1]. Երրորդ կողմի ազդեցությունն ակումբի վրա

1. Որևէ ակումբ չպետք է այլ ակումբի հետ կնքի պայմանագիր, որն այդ պայմանագրի կողմերին կամ որևէ երրորդ կողմի կօժտի ակումբի կադրային և տրանսֆերային անկախության, քաղաքականության և թիմերի մրցելույթների վրա ներազդելու լիազորություններով:
2. ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեն կարող է կարգապահական պատժամիջոցներ կիրառել այն ակումբների նկատմամբ, որոնք չեն պահպանի սույն հոդվածով սահմանված պահանջները:

## Հոդված 18². Ֆուտբոլիստների տնտեսական իրավունքների տնօրինումը երրորդ անձանց կողմից

1. Որևէ ակումբ կամ ֆուտբոլիստ չպետք է համաձայնության գա երրորդ կողմի հետ, ինչի հետևանքով երրորդ կողմն իրավունք կստանա ամբողջական կամ մասնակի մասնակցություն ունենալ ֆուտբոլիստի՝ ակումբից ակումբ հետագա տեղափոխության համար հասանելիք փոխհատուցման վճարմանը, կամ երրորդ կողմին կտրվեն ֆուտբոլիստի հետագա տեղափոխության կամ մարզումային փոխհատուցման հետ կապված որոշակի իրավունքներ:
2. Սույն հոդվածի առաջին կետը ուժի մեջ է մտել 2015թ. մայիսի 1-ին:
3. Պայմանագրերը և համաձայնագրերը, որոնք կնքվել են մինչև 2015թ. մայիսի 1-ը (տե'ս սույն հոդվածի առաջին կետը) մնում են ուժի մեջ մինչև իրենց պայմանագրային ժամկետի ավարտը, որոնց ժամկետը, սակայն, չի կարող երկարաձգվել:
4. Առաջին կետում նկարագրված 2015թ. հունվարի 1-ից ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածում կնքված ցանկացած համաձայնագրի վավերականության ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին՝ սկսած ուժի մեջ մտնելու օրվանից:
5. Վերոնշյալ առաջին կետում նկարագրված բոլոր գործող համաձայնագրերը պետք է մինչև 2015թ. ապրիլի վերջը մուտքագրվեին ՖԻՖԱ-ի Տրանսֆերների համադրման համակարգ (ՏՀՀ): Նման համաձայնագրեր ստորագրած բոլոր ակումբները պարտավոր են ամբողջությամբ ՏՀՀ մուտքագրել այդ համաձայնագրերը, ներառյալ բոլոր առկա հավելվածները կամ փոփոխությունները՝ նշելով ներգրավված երրորդ կողմի տվյալները, ֆուտբոլիստի ամբողջական անունը, ինչպես նաև համաձայնագրի տևողության ժամկետը:
6. ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեն կարող է կարգապահական պատժամիջոցներ կիրառել այն ակումբների նկատմամբ, որոնք չեն պահպանի սույն հոդվածով սահմանված պահանջները:

# ԳԼՈՒԽ 6. ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## Հոդված 18$^{3}$. Իգական սեռի ֆուտբոլիստների պայմանագրերին վերաբերող հատուկ պայմաններ

1. Իգական սեռի ֆուտբոլիստի պայմանագրի գործողությունը չի կարող պայմանավորված լինել նշված ժամկետում իգական սեռի ֆուտբոլիստի հղիության, մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում, որդեգրման արձակուրդում կամ ընտանեկան արձակուրդում գտնվելու հանգամանքով կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող, , որդեգրման և ընտանեկան արձակուրդին առհասարակ առնչվող իրավունքների կիրառումով:
2. Եթե ակումբը միակողմանի լուծում է իգական սեռի ֆուտբոլիստի հետ կնքած պայմանագիրը՝պայմանավորված հղիության թեստից հրաժարվելու հանգամանքով, վերջինիս հղիության, մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող, որդեգրման կամ ընտանեկան արձակուրդում գտնվելու հանգամանքով կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող, որդեգրման և ընտանեկան արձակուրդին առհասարակ առնչվող իրավունքների կիրառման հիմքով, ապա ակումբի կողմից պայմանագրի լուծումը համարվում է «Պայմանագրի լուծում առանց հիմնավոր դրդապատճառի»:
   ա) Եթե հակառակն ապացուցված չէ, ենթադրվում է, որ հղիության կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի ժամանակ, որդեգրման կամ ընտանեկան արձակուրդի ժամանակ ակումբի կողմից իգական սեռի ֆուտբոլիստի պայմանագրի միակողմանի լուծումը տեղի է ունեցել վերջինիս հղիության, երեխայի որդեգրման կամ ընտանեկան արձակուրդին վերաբերող իրավունքների կիրառման հետևանքով:
3. Եթե ակումբը, վերոնշյալ հիմքերով պայմանավորված, միակողմանի լուծում է իգական սեռի ֆուտբոլիստի հետ կնքած պայմանագիրը, ապա, որպես Հոդված 17-ի 1-ին կետի բացառություն՝

   ա) իգական սեռի ֆուտբոլիստին վճարվելիք փոխհատուցումը հաշվարկվում է հետևյալ կերպ՝
   – Եթե իգական սեռի ֆուտբոլիստն իր նախորդ պայմանագիրը լուծելուց հետո նոր պայմանագիր չի կնքել, ապա փոխհատուցման չափը, որպես կանոն, պետք է հավասար լինի վաղաժամ լուծված պայմանագրի մնացորդային արժեքին:
   – Եթե իգական սեռի ֆուտբոլիստը նոր պայմանագիր է ստորագրել որոշումը կայացնելու ժամանակ, ապա նոր պայմանագրի՝ վաղաժամ լուծված պայմանագրի դեռևս մնացած ժամանակահատվածին համապատասխանող արժեքը, պետք է նվազեցվի վաղաժամ լուծված պայմանագրի մնացորդային արժեքից («Նվազեցված փոխհատուցում»):
   – Վերոնշյալ երկու կետերով սահմանված դեպքերում իգական սեռի ֆուտբոլիստն իրավունք ունի ստանալու Հավելյալ փոխատուցում՝ վաղաժամ լուծված

պայմանագրով սահմանված վեց ամսվա աշխատավարձին համարժեք գումարի չափով:

– Գործատուների և աշխատակիցների ներկայացուցիչների կողմից լոկալ մակարդակով համաձայնեցված կոլեկտիվ պայմանագրերը, որոնք համապատասխանում են ներպետական օրենսդրությանը, կարող են շեղվել վերը նշված սկզբունքներից: Նման դեպքերում գերակայում են պայմանագրի պայմանները:

բ) իգական սեռի ֆուտբոլիստի հետ պայմանագիրը վերջինիս հղիության, մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում, որդեգրման կամ ընտանեկան արձակուրդում գտնվելու կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող, որդեգրման և ընտանեկան արձակուրդին առհասարակ առնչվող իրավունքների կիրառումով պայմանավորված միակողմանի լուծելու պարագայում, տվյալ ակումբի նկատմամբ, բացի փոխհատուցում վճարելու պարտավորությունից, կարող են կիրառվել նաև մարզական պատժամիջոցներ:
Նշված դեպքերում ակումբին կարգելվի գրանցել նոր իգական սեռի ֆուտբոլիստ (ֆուտբոլիստներ) (ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով)գրանցման երկու ամբողջական և հաջորդական ժամանակահատվածներում: Ակումբը իրավունք կստանա նոր իգական սեռի ֆուտբոլիստ (ֆուտբոլիստներ) գրանցել (ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով) միայն հաջորդ գրանցման ժամանակահատվածից սկսած՝ համապատասխան մարզական պատժամիջոցներն ամբողջապես սպառելուց հետո: Մասնավորապես, ակումբը կարող է չօգտվել սույն կանոնակարգի Հոդված 6-ի 1-ի «ա» դրույթով սահմանված բացառությունից և պայմանական միջոցներից՝ իգական սեռի ֆուտբոլիստներին ավելի վաղ փուլում գրանցելու նպատակով:

գ) վերոհիշյալ բ) կետով նախատեսված պատժամիջոցը կարող է կիրառվել տուգանքի հետ միասին:

4. Եթե իգական սեռի ֆուտբոլիստը հղիանում է, ապա վերջինս իր պայմանագրի գործողության ընթացքում իրավունք ունի՝

ա) շարունակել իր ակումբին սպորտային ծառայություններ մատուցել (այն է՝ խաղալ և մարզվել)՝ իրեն հետազոտող բժշկից և անկախ բժշկական մասնագետից (ով նշանակվել է իգական սեռի ֆուտբոլիստի և իր ակումբի փոխհամաձայնությամբ) հաստատում ստանալով առ այն, որ դա իր համար անվտանգ է: Նման դեպքերում իգական սեռի ֆուտբոլիստի ակումբը պարտավոր է հարգել վերջինիս որոշումը և կազմել նրա շարունակական մասնակցության համար անվտանգ մարզումային ծրագիր՝ առաջնահերթ համարելով իգական սեռի ֆուտբոլիստի և նրա՝ դեռևս չծնված երեխայի առողջությունը: Ֆուտբոլիստուհին իրավասու է ստանալ իր ամբողջական վարձատրությունն այնքան ժամանակ, քանի դեռ նա գտնվում է մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում:
բ) այլընտրանքային աշխատանքային ծառայություններ մատուցել իր ակումբին, եթե տվյալ իգական սեռի ֆուտբոլիստը կհամարի, որ իր համար այլևս անվտանգ չէ սպորտային ծառայություններ մատուցելը, ինքնակամ կիրաժարվի սպորտային

ծառայություններ մատուցելու իր իրավունքից: Նման դեպքերում ակումբը պարտավոր է հարգել իգական սեռի ֆուտբոլիստի որոշումը և աշխատել վերջինիս հետ՝ կազմելով այլընտրանքային աշխատանքային ծրագիր: Եթե վերջինս հրաժարվի այլընտրանքային աշխատանքային առաջարկից, կամ եթե ակումբը ընթացիկ պայմանագրի կոնտեքստում չկարողանա առաջարկել այլընտրանքային աշխատանքային պայմաններ, ֆուտբոլիստուհին իրավասու է ստանալ իր ամբողջական վարձատրությունն այնքան ժամանակ, քանի դեռ նա գտնվում է մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում:

գ) վերցնել բժշկական արձակուրդ, եթե հղիության առնչվող բժշկական պատճառներով պայմանավորված, ֆուտբոլիստն ի վիճակի չէ մատուցել այլընտրանքային մարզական կամ աշխատանքային ծառայություններ, պատշաճ կերպով ներկայացնելով իր անձնական գինեկոլոգի կամ բժշկական մասնագետի կողմից տրված վավեր բժշկական տեղեկանք:

5. Հղի, որդեգրման կամ ընտանեկան արձակուրդի իրավունքներից օգտվող իգական սեռի ֆուտբոլիստուհին իր պայմանագրի գործողության ընթացքում իրավունք ունի՝

ա) իր հայեցողությամբ որոշել մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի ժամանակահատվածը՝ (տե՛ս «Հասկացություններ» բաժնում): ՖԻՖԱ-ի կարգապահական կոմիտեն պատժամիջոցներ կկիրառի այն ակումբի նկատմամբ, որը ճնշում կգործադրի իգական սեռի ֆուտբոլիստի վրա կամ վերջինիս կստիպի մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը վերցնել որոշակի կոնկրետ ժամանակահատվածում:

բ) մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող, որդեգրման կամ ընտանեկան արձակուրդի ավարտից հետո վերադառնալ ֆուտբոլային գործունեությանը: Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից վերադարձող իգական սեռի ֆուտբոլիստի նկատմամբ ակումբն ունի վերջինիս՝ ֆուտբոլային գործունեության մեջ վերաինտեգրելու (տե՛ս Հոդված 6-ի կետ 3 դ), հետծննդաբերական պլանը համաձայնեցնելու և շարունակական բժշկական օժանդակություն տրամադրելու պարտավորություն:

Ֆուտբոլիստուհին ֆուտբոլային գործունեությանը վերադառնալուց հետո իրավունք ունի ստանալու իր ամբողջական վարձատրությունը:

Իգական սեռի ֆուտբոլիստին հնարավորություն կտրվի կերակրելու նորածնին ակումբին մարզական ծառայություններ մատուցելու ժամանակ: Ակումբները, համաձայն գործող ազգային օրենսդրության կամ կոլեկտիվ պայմանագրի, պարտավոր են ապահովել անհրաժեշտ հարմարությունները: Այս պատճառով ֆուտբոլիստուհու կրճատված աշխատանքային ժամերը կհամարվեն հիմնավորված և չեն հանգեցնի աշխատավարձի կրճատման:

## Հոդված 18[4]. Կանացի առողջության վերաբերյալ

Ակումբները պետք է միշտ հարգեն իգական սեռի ֆուտբոլիստների կարիքները՝ կապված դաշտանային ցիկլի և կանացի առողջության հետ: Իր դաշտանային ցիկլով պայմանավորված՝ իգական սեռի ֆուտբոլիստն իրավասու է բացակայել մարզումներից կամ խաղերից իր

անձնական գինեկոլոգի կամ բժշկական մասնագետի կողմից տրված վավեր բժշկական տեղեկանքի հիմքով: Ֆուտբոլիստուհին իրավունք ունի ստանալու իր ամբողջական վարձատրությունը՝ իր դաշտանային ցիկլի հետ կապված իրավունքները կիրառելիս:

# ԳԼՈՒԽ 7. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ՏՐԱՆՍՖԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

## Հոդված 19. Անչափահասների պաշտպանություն

1. Մինչև 10 տարեկան ֆուտբոլիստների համար ՄՏՍ չի պահանջվում:
2. Միջազգային տրանսֆեր թույլատրվում է միայն 18 տարին լրացած ֆուտբոլիստի դեպքում: Մինչև 18 տարեկան ֆուտբոլիստին չի թույլատրվում տրամադրել միջազգայինտրանսֆերային սերտիֆիկատ՝ բացառությամբ հետևյալ հինգ դեպքերի.

2.1. Եթե ֆուտբոլիստի ծնողները ոչ ֆուտբոլային դրդապատճառներով տեղափոխվում են այն երկիր, որտեղ գտնվում է ֆուտբոլիստի նոր ակումբը,

2.2. Եթե ֆուտբոլիստը 16-ից 18 տարեկան է, և՝

- տեղափոխությունն իրականացվում է Եվրոպական Միության (ԵՄ) կամ Եվրոպական տնտեսական գոտու (ԵՏԳ) տարածքում կամ

- տեղափոխությունն իրականացվում է միևնույն երկրի երկու տարբեր ասոցիացիաների միջև

Վերոնշյալ դեպքերում նոր ակումբը պետք է բավարարի հետևյալ նվազագույն պահանջները՝

- ապահովում է ֆուտբոլիստի համապատասխան ֆուտբոլային կրթությունը և/կամ մարզումները տվյալ երկրի լավագույն ստանդարտներին համապատասխան (տե՛ս Հավելված 4, Հոդված 3),
- ի լրումն ֆուտբոլային կրթության և/կամ մարզումների՝ ապահովում է ֆուտբոլիստի ակադեմիական և/կամ դպրոցական և/կամ մասնագիտական կրթությունը, որը թույլ կտա ֆուտբոլիստին պրոֆեսիոնալ գործունեությունը դադարեցնելուց հետո զբաղվել այլ կարիերայով,
- իրականացնում է բոլոր անհրաժեշտ միջոցառումները ֆուտբոլիստի համար հնարավորինս լավագույն պայմաններ ապահովելու նպատակով (հյուրընկալող ընտանիքում կամ ակումբում օպտիմալ կենսական պայմանների ապահովումը, ակումբում մենթորի նշանակումը և այլն),
- նման ֆուտբոլիստ գրանցելիս ակումբը համապատասխան ասոցիացիային տրամադրում է վերոհիշյալ պարտավորությունները ստանձնելու մասին ապացույցներ:

2.3. Եթե ֆուտբոլիստը բնակվում է պետական սահմանից ոչ ավել, քան 50 կմ հեռավորության վրա, իսկ հարևան ասոցիացիայի ակումբը, որտեղ ֆուտբոլիստը ցանկանում է գրանցվել, ևս գտնվում է այդ սահմանից 50 կմ հեռավորության վրա: Ֆուտբոլիստի բնակավայրի և ակումբի միջև եղած առավելագույն թույլատրելի հեռավորությունը 100 կմ է: Նման դեպքերում ֆուտբոլիստը շարունակում է ապրել իր բնակավայրում, իսկ համապատասխան երկու ասոցիացիաները տալիս են իրենց լիարժեք համաձայնությունը:

2.4. Ֆուտբոլիստին առնվազն ժամանակավորապես թույլատրվում է բնակվել այն երկրում, ուր նա ժամանել է, և/կամ եթե վերջինս իրավասու պետական մարմինների կողմից ճանաչվում է խոցելի և իր ծննդավայրը (կամ բնակության նախկին երկիրը) առանց ծնողների ուղեկցության, մարդասիրական դրդապատճառներով լքելուց հետո ժամանման երկրի կողմից պաշտպանության կարիք ունեցող ներքոնշյալ պատճառներից մեկի հետևանքով՝

- նրանց կյանքը կամ ազատությունը վտանգված է ռասայական, կրոնական, ազգային պատկանելության, որոշակի սոցիալական խմբին պատկանելու կամ քաղաքական դիրքորոշման պատճառով կամ
- Ցանկացած այլ հանգամանքներով, որոնց դեպքում լրջորեն վտանգված է նրանց գոյությունը:

Եթե անչափահաս ֆուտբոլիստը պաշտոնապես ճանաչվել է որպես փախստական կամ պաշտպանված անձ, նա կարող է գրանցվել պրոֆեսիոնալ ակումբում կամ զուտ սիրողական ակումբում: Մինչև 18 տարին լրանալը անչափահաս ֆուտբոլիստների հետագա ներքին տեղափոխության համար սահմանափակումներ չեն գործում:

Եթե անչափահաս ֆուտբոլիստը պաշտոնապես ճանաչվել է որպես ապաստան հայցող անձ կամ իրավասու պետական մարմինների կողմից ճանաչվել է որպես խոցելի՝ վերոնշյալ Հոդված 19-ի դ) կետի համաձայն, ապա նա կարող է գրանցվել միայն զուտ սիրողական ակումբում: Նրանք կարող են ենթարկվել հետագա ներքին տեղափոխության, սակայն նրանց չի թույլատրվում գրանցվել պրոֆեսիոնալ ակումբում մինչև 18 տարեկան լրանալը:

2.5. Եթե ֆուտբոլիստն ուսանող է և ուսումնական դրդապատճառներով փոխանակման ծրագրի շրջանակներում ժամանակավորապես տեղափոխվում է այլ երկիր՝ առանց ծնողների ուղեկցության: Ֆուտբոլիստի՝ նոր ակումբում գրանցման տևողությունը մինչև վերջինիս 18 տարեկան լրանալը կամ մինչև ուսումնական ծրագրի ավարտը չի կարող գերազանցել մեկ տարին: Ֆուտբոլիստի նոր ակումբը կարող է լինել միայն սիրողական ակումբ, այն է՝ չունենա որևէ պրոֆեսիոնալ թիմ կամ իրավաբանական, ֆինանսական կամ դե ֆակտո առնչություն որևէ պրոֆեսիոնալ ակումբի հետ:

3. Սույն հոդվածի դրույթները վերաբերում են նաև ցանկացած ֆուտբոլիստի, ով նախկինում երբևիցե գրանցված չի եղել որևէ ակումբում, չի հանդիսանում այն երկրի քաղաքացի, որտեղ առաջին անգամ ցանկանում է գրանցվել և շարունակաբար չի ապրել տվյալ երկրում առնվազն վերջին 5 տարիների ընթացքում:
4. Եթե անչափահաս ֆուտբոլիստն առնվազն 10 տարեկան է, ապա ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալի ֆուտբոլիստների կարգավիճակի պալատը հաստատում է՝

ա) անչափահասի միջազգային տրանսֆերը՝ համաձայն վերոնշյալ 2-րդ կետի,
բ) անչափահասի առաջին գրանցումը՝ համաձայն վերոնշյալ 3-րդ կետի,
գ) այն անչափահասի առաջին գրանցումը, ով չի հանդիսանում այն երկրի քաղաքացի, որի ասոցիացիայում առաջին անգամ ցանկանում է գրանցվել և շարունակաբար ապրել է տվյալ երկրում առնվազն վերջին 5 տարիների ընթացքում:

5. 4-րդ կետում նկարագրված հաստատումն անհրաժեշտ է ստանալ նախքան ասոցիացիայի կողմից անչափահասի ՄՏՍ-ի հարցումը և/կամ առաջին գրանցումը: Ընդ որում՝ եթե տվյալ անչափահաս ֆուտբոլիստի գրանցման դիմումը ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալին ներկայացվել է գրանցման ժամանակահատվածի ընթացքում, սակայն, վերջինիս կողմից գրանցման հաստատումը ստացվել է գրանցման ժամանակահատվածից դուրս, ապա տվյալ ֆուտբոլիստի գրանցումը ՀՖՖ-ն իրավասու է կատարել գրանցման ժամանակահատվածից դուրս:
6. Եթե անչափահաս ֆուտբոլիստի 10 տարեկանը դեռ չի լրացել, ապա տվյալ ֆուտբոլիստին գրանցելու մտադրություն ունեցող ասոցիացիան պարտավոր է իրեն անդամագրված ակումբի խնդրանքով ստուգելու և ապահովելու, որ տվյալ ֆուտբոլիստի տեղափոխության հանգամանքներն, առանց որևէ կասկածի, համապատասխանեն 2-րդ, 3-րդ կամ 4-րդ պարբերություններով նախատեսված բացառություններից մեկին: Նման ստուգումը պետք է կատարվի նախքան գրանցումը:
7. Ասոցիացիան կարող է դիմել Ֆուտբոլային տրիբունալի Ֆուտբոլիստների կարգավիճակի պալատ՝ Սահմանափակ թվով անչափահասների գրանցման բացառության համար («Limited Minor Exemption/LME»):

   ա) LME-ն (շնորհվելու դեպքում) ազատում է ասոցիացիային անչափահասի հայտ ներկայացնելու համար 4-րդ կետով սահմանվող պարտավորություններից. նշված ազատումն իրականացվում է հատուկ պայմաններով և միայն զուտ սիրողական ակումբներում գրանցման ենթակա սիրողական անչափահաս ֆուտբոլիստների համար:
   բ) Նման դեպքերում, նախքան ՄՏՍ-ի և/կամ առաջին գրանցման թույլտվության հարցում ուղարկելը, տվյալ ասոցիացիան պարտավոր է ստուգել և ապահովել, որ ֆուտբոլիստի տեղափոխության հանգամանքները, առանց որևէ կասկածի, համապատասխանում են սույն հոդվածի 2, 3 կամ 4 գ) կետով նախատեսված բացառություններից որևէ մեկին:
   գ) Նախքան ՖԻՖԱ-ի Տրիբունալին ՄՏՍ-ի և/կամ առաջին գրանցման թույլտվության հարցում ուղարկելը, ասոցիացիան պարտավոր է էլեկտրոնային հարցում ուղարկել տվյալ անչափահասի ծննդավայր հանդիսացող երկիր, ինչպես նաև այն երկիր, որտեղ վերջինս, ըստ ակումբի տրամադրած տեղեկատվության, հնարավոր է գրանցված է եղել:

8. Այն ակումբը, որը գրանցել է անչափահաս ֆուտբոլիստ ներքին տեղափոխության, միջազգային տեղափոխության կամ առաջին գրանցման արդյունքում, պետք է՝

   - պատասխանատվություն կրի տվյալ անչափահաս ֆուտբոլիստի խնամքի համար,
   - ձեռնարկի ցանկացած ողջամիտ միջոցներ անչափահաս ֆուտբոլլիստին հնարավոր չարաշահումներից պաշտպանելու և ապահովագրելու համար, և
   - ապահովի, որ անչափահաս ֆուտբոլիստը հնարավորություն ունենա ստանալու ակադեմիական կրթություն (ազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխան), ինչը նրանց թույլ կտա ֆուտբոլից զատ զբաղվելու այլ գործունեությամբ:
9. Սույն հոդվածում նկարագրված հարցերի համար Ֆուտբոլային տրիբունալի Ֆուտբոլիստների կարգավիճակի պալատ դիմելու ընթացակարգերը ներկայացված են Ֆուտբոլային տրիբունալը կարգավորող ընթացակարգային կանոններում:

## Հոդված 19[1]. Ակադեմիաներում անչափահաս ֆուտբոլիստների գրանցումը

1. Այն ակումբները, որոնց կից գործում են վերջիններիս հետ իրավաբանորեն, ֆինանսապես կամ դե ֆակտո կապված ակադեմիաներ, պարտավոր են ակադեմիա հաճախող բոլոր անչափահասների ցուցակները տրամադրել ՀՖՖ-ին: Եթե ակադեմիան գործում է ՀՖՖ տարածքից դուրս, ակումբը տվյալներ է ներկայացնում այն ասոցիացիային, որի տարածքում գործում է ակադեմիան:
2. ՀՖՖ-ն պարտավոր է ապահովել, որպեսզի որևէ ակումբի հետ իրավաբանորեն, ֆինանսապես կամ դե ֆակտո կապ չունեցող, բայց ՀՖՖ տարածքում գործող բոլոր ակադեմիաները /մասնավոր ակադեմիաներ/ ՀՖՖ ներկայացնեն տվյալ ակադեմիայում մարզվող բոլոր անչափահաս ֆուտբոլիստների տվյալները: Եթե ակադեմիան գործում է ՀՖՖ տարածքից դուրս, ապա ակումբը պետք է տվյալներ ներկայացնի այն ասոցիացիային, որի տարածքում գործում է տվյալ ասոցիացիան: ՀՖՖ-ն պետք է համապատասխան մարմիններին զեկուցի մասնավոր ակադեմիաներում տեղի ունեցած ցանկացած սխալ արարքի մասին, որոնց մասին տեղեկացվում է ՝ ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները՝ անչափահաս ֆուտբոլիստներին հնարավոր չարաշահումներից պաշտպանելու և ապահովագրելու համար:

3. Յուրաքանչյուր ասոցիացիա պետք է վարի անչափահաս ֆուտբոլիստների գրանցամատյան, որը կներառի առնվազն հետևյալ տեղեկությունը՝ անչափահասի ամբողջական անունը (անուն, հայրանուն, ազգանուն), ազգությունը, ծննդյան ամսաթիվը, ծննդավայրը (կամ նախկին բնակության երկիրը), ֆուտբոլային գործակալի անունը (եթե այդպիսիք կան) և ակումբի անվանումը, որին կից գործում է տվյալ ակադեմիան՝ կապված այն անչափահասների հետ, ում գրանցման վերաբերյալ տեղեկատվությունն ակումբները կամ ակադեմիաները տրամադրել են ասոցիացիային:

4. Ակումբը, որը ցանկանում է համագործակցել մասնավոր ակադեմիայի հետ, պետք է.

   ա) նման համագործակցության մասին հայտնի իր ասոցիացիային;
   բ) ապահովի, որ մասնավոր ակադեմիան իր մոտ մարզվող ֆուտբոլիստների մասին տեղեկացնի այն ասոցիացիային, որին կից գործում է ակադեմիան;
   գ) նախքան մասնավոր ակադեմիայի հետ պայմանագիր կնքելը, համոզվի, որ մասնավոր ակադեմիան համապատասխան միջոցներ է ձեռնարկում անչափահասներին պաշտպանելու և ապահովագրելու համար, և
   դ) համապատասխան մարմիններին զեկուցի ցանկացած անօրինական արարքի մասին, որի մասին ինքը կարող է տեղեկանալ՝ ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցներն՝ անչափահասներին հնարավոր չարաշահումներից պաշտպանելու և ապահովագրելու նպատակով:

5. Մարզվող ֆուտբոլիստների մասին ասոցիացիային տեղեկատվություն տրամադրելով՝ ակադեմիաները և ֆուտբոլիստները պարտավորվում են զբաղվել ֆուտբոլով ՖԻՖԱ-ի

կանոնադրության համաձայն, հարգել և խթանել կազմակերպված ֆուտբոլի էթիկական սկզբունքները:

6. Ասոցիացիաները պետք է զեկուցեն ՖԻՖԱ-ին յուրաքանչյուր անչափահասի մասին, ով մարզվում է իրենց իրավասության տարածքում գործող ակադեմիայում, եթե անչափահասը՝
   ա) չի հանդիսանում այն երկրի քաղաքացի, որտեղ գտնվում է ասոցիացիան;
   բ) առնվազն վերջին հինգ տարիներին անընդմեջ չի ապրել այդ երկրում;

   Այդպիսի հաշվետվությունները պետք է պարունակեն առաջին հայացքից տրված գնահատական առ այն, թե արդյոք անչափահասը համապատասխանում է Հոդված 19-ի պահանջներին:

7. Սույն դրույթի ցանկացած խախտում կտուգանվի Կարգապահական Կոմիտեի կողմից՝ ՖԻՖԱ-ի Կարգապահական կանոնագրքի համապատասխան:

## Հոդված 19². Փորձաշրջաններ

**Փորձաշրջան անցնող բոլոր ֆուտբոլիստների համար ընդհանուր պայմաններ**

1. Ակումբը կարող է ֆուտբոլիստին հրավիրել սահմանված ժամկետով փորձաշրջանի: Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը (սույն հոդվածի 2-րդ կետի իմաստով) կարող է փորձաշրջան անցնել մեկ այլ ակումբում միայն իրենց ներկայիս ակումբի գրավոր թույլտվությամբ:
2. Ակումբը և հրավիրված ֆուտբոլիստը պետք է ՖԻՖԱ-ի՝ փորձաշրջանի համար նախատեսված ձևաթղթում /FIFA Trial Form/ համաձայնեցնեն փորձաշրջանի պայմանները (օրինակ՝ կեցության, ճանապարհածախսի, սննդի և ամենօրյա ծախսերի վճարումը) նախքան փորձաշրջանի մեկնարկը: Ակումբը պետք է ամբողջական և պատշաճ կերպով ստորագրված ՖԻՖԱ-ի՝ փորձաշրջանի համար նախատեսված ձևաթուղթը /FIFA Trial Form/ ներկայացնի ՖԻՖԱ ՏՀՀ փորձաշրջանի մեկնարկից ամենաուշը տասը օր առաջ:
3. Փորձաշրջանի ընթացքում փորձաշրջան անցնող ֆուտբոլիստը գտնվում է ակումբի հոգածության ներքո: Մասնավորապես, ակումբը պետք է փորձաշրջան անցնող ֆուտբոլիստին տրամադրի ցանկացած անհրաժեշտ բժշկական օգնություն և հոգա վերջինիս ծախսերը փորձաշրջանի ընթացքում ստացված վնասվածքների համար:
4. Մեկ մրցաշրջանի ընթացքում ցանկացած ակումբում 21 տարեկան և 21 տարեկանից ցածր տարիքի ֆուտբոլիստների համար փորձաշրջանի առավելագույն տևողությունը, անընդմեջ կամ ոչ անընդմեջ, պետք է լինի 8 շաբաթ: Մեկ մրցաշրջանի ընթացքում ցանկացած ակումբում 21 տարեկանից բարձր տարիքի ֆուտբոլիստների համար փորձաշրջանի առավելագույն տևողությունը, անընդմեջ կամ ոչ անընդմեջ, պետք է լինի 3 շաբաթ:
5. Փորձաշրջան անցնող ֆուտբոլիստին թույլատրվում է մասնակցել միայն ընկերական հանդիպումներին և կազմակերպված ֆուտբոլի շրջանակից դուրս գտնվող ցանկացած գործունեությանը: Նման ընկերական հանդիպումները պետք է տեղի ունենան

համապատասխան փորձաշրջանի ընթացքում:

6. Ցանկացած անձի, որը ենթարկվում է ՖԻՖԱ-ի կանոնադրությանը, արգելվում է խնդրել, առաջարկել և/կամ ստանալ որևէ վճար, որը կապված կլինի փորձաշրջանի հետ՝ չհակասելով ակումբի և փորձաշրջան անցնող ֆուտբոլիստի միջև փորձաշրջանի պայմանների վերաբերյալ համաձայնությանը՝ համաձայն վերորշյալ 2-րդ կետի:
7. Փորձաշրջան անցնող ֆուտբոլիստ ունեցող ակումբներն իրավունք չունեն ստանալու մարզումային վճարներ այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում ֆուտբոլիստը փորձաշրջան է անցնում տվյալ ակումբում:

## Փորձաշրջան անցնող անչափահաս ֆուտոլիստների համար հատուկ պայմաններ

8. Ի լրումն ընդհանուր պայմանների՝ անչափահաս ֆուտբոլիստը կարող է ակումբում փորձաշրջան անցնել միայն այն պայմանով, որ՝

ա) փորձաշրջանի մեկնարկի օրը լինի՝

- փորձաշրջան անցնող անչափահաս ֆուտբոլիստի 16 տարեկանը լրանալու մրցաշրջանի ընթացքում; կամ
- փորձաշրջան անցնող անչափահաս ֆուտբոլիստի 15 տարեկանը լրանալու մրցաշրջանի ընթացքում, եթե թե՛ անչափահաս ֆուտբոլիստի բնակության վայրը և թե՛ ակումբը գտնվում է Եվրոպայում;

բ) ակումբն անչափահաս ֆուտբոլիստի ծնողներից ստանում է հատուկ գրավոր թույլտվություն՝ վերջինիս փորձաշրջան անցնելու մասին;
գ) ակումբն իր աշխատակիցներից մեկին նշանակում է որպես կոնտակտային անձ անչափահաս ֆուտբոլիստի հետ կապ պահելու համար;
դ) ակումբն ապահովում է փորձաշրջան անցնող անչափահաս ֆուտբոլիստի օպտիմալ կացարանն ու կենսամակարդակը, ինչպես նաև բավարար չափով հոգում վերջինիս ծախսերը, և
ե) 16 տարեկանից ցածր անչափահաս սիրողական ֆուտբոլիստների դեպքում անչափահաս ֆուտբոլիստի ներկայիս ակումբին տեղեկացնում են փորձաշրջանի մասին և տրամադրում ամբողջական և պատշաճ ձևով ստորագրված ՖԻՖԱ-ի՝ փորձաշրջանի համար նախատեսված ձևաթուղթը (FIFA Trial Form):

9. Անչափահաս ֆուտբոլիստը օրացուցային տարվա ընթացքում կարող է անցնել միայն երկու փորձաշրջան, որոնցից յուրաքանչյուրի առավելագույն տևողությունը նախատեսված է՝ համաձայն Հոդված 19-ի 4-րդ կետի:

## Այլ հարցեր

10. Գործատուների և գործատուների ներկայացուցիչների կողմից ներպետական մակարդակով վավերականորեն համաձայնեցված կոլեկտիվ պայմանագրերը, ազգային օրենսդրության համաձայն, կարող են շեղվել վերը նշված նվազագույն չափանիշներից և/կամ սահմանել լրացուցիչ պայմաններ, թե երբ ֆուտբոլիստը կարող է լքել իր ներկայիս ակումբը՝ փորձաշրջան անցնելու համար:

**Պատժամիջոցներ**

11. ՖԻՖԱ-ի՝ փորձաշրջանի համար նախատեսված ձևաթղթով (FIFA Trial Form) համաձայնեցված պայմանը չկատարելը կամ ամբողջական և պատշաճ կերպով ստորագրված ձևաթուղթը չվերբեռնելը և/կամ սույն դրույթի ցանկացած խախտումը կպատժվի Կարգապահական կոմիտեի կողմից՝ ՖԻՖԱ-ի Կարգապահական կանոնագրքի համապատասխան: Նման վարույթում և՛ փորձաշրջան անցնող ֆուտբոլիստը, և՛ համապատասխան ակումբը Կարգապահական կոմիտեի առջև կունենան կողմի ընթացակարգային կարգավիճակ:

# ԳԼՈՒԽ 8. ՄԱՐԶՈՒՄԱՅԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

## Հոդված 20. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցումը

1. Մարզումային փոխհատուցում պետք է վճարվի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին մարզած, կրթած ակումբին (ակումբներին)՝

   ա) եթե ֆուտբոլիստը առաջին անգամ գրանցվում է որպես պրոֆեսիոնալ,

   բ) եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը պայմանագրի ընթացքում կամ ավարտից հետո տեղափոխվում է մի ակումբից մյուսը մինչև իր 23 տարեկան դառնալու օրացուցային տարվա ավարտը:

2. Մարզումային փոխհատուցմանը վերաբերող բոլոր դրույթները շարադրված են սույն կանոնակարգի Հավելված 4-ում:
3. Մարզումային փոխհատուցման սկզբունքները կիրառելի չեն կանանց ֆուտբոլի նկատմամբ:

## Հոդված 20[1]. Սիրողական ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցումը

1. Նոր ակումբ տեղափոխվելիս 12 տարին լրացած սիրողական ֆուտբոլիստին մարզած և կրթած նախկին ակումբին նոր ակումբի կողմից վճարվում է մարզումային փոխհատուցում՝ Կանոնակարգով սահմանված ակումբների կարգերի և դրույքաչափերի համաձայն (Հավելված 6):
2. Մարզումային փոխհատուցում չի վճարվում սիրողական ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում, եթե նա ակումբից ակումբ է տեղափոխվել իր 23 տարին լրանալու օրացուցային տարվա ավարտից հետո:
3. Սիրողական ֆուտբոլիստների մարզումային փոխհատուցմանը վերաբերող բոլոր դրույթները շարադրված են սույն կանոնակարգի Հավելված 4-ում:

## Հոդված 21. Համերաշխության մեխանիզմը

1. Պայմանագրի գործողության ընթացքում պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում նրան մարզած և կրթած ցանկացած ակումբ պետք է ստանա իր մասնաբաժինը այն գումարից, որը վճարվում է ֆուտբոլիստի նախկին ակումբին (համերաշխության վճար):
2. Համերաշխության մեխանիզմին վերաբերող բոլոր դրույթները շարադրված են սույն կանոնակարգի Հավելված 5-ում:

# ԳԼՈՒԽ 9. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

## Հոդված 22. ՖԻՖԱ-ի իրավասությունը

1. Չխոչընդոտելով ֆուտբոլիստի և/կամ ակումբի՝ ընդհանուր իրավասության դատարան դիմելու իրավունքը՝ պայմանագրային և/կամ աշխատանքային վեճերի առնչությամբ, ՀՖՖ-ն իրավասու է որոշում կայացնել հետևյալ հարցերի շուրջ.

ա) Պայմանագրային կայունության պահպանմանն առնչվող (Հոդվածներ 13-18[3]) վեճեր ակումբների և ֆուտբոլիստների միջև, որտեղ կատարվել է ՄՏՍ հարցում, և շահագրգիռ կողմը հայց է ներկայացրել նշված ՄՏՍ հարցման հետ կապված, մասնավորապես, տվյալ ՄՏՍ-ի ուղարկման, սպորտային պատժամիջոցների կամ պայմանագրի դրույթների խախտման հետ կապված փոխհատուցման առնչությամբ:
բ) Ակումբի և օտարերկրացի ֆուտբոլիստի միջև աշխատանքային վեճեր. վերոնշյալ կողմերն, ամեն դեպքում, կարող են գրավոր համաձայնություն ներկայացնել առ այն,

որ նման վեճերի առնչությամբ որոշում կայացնի ազգային մակարդակով ՀՖՖ-ի շրջանակներում և/կամ կոլեկտիվ պայմանագրով հիմնադրված անկախ արբիտրաժային դատարանը: Ցանկացած նման արբիտրաժային հայց/ վեճ պետք է ուղղակիորեն ներառվի կա՛մ պայմանագրում, կա՛մ կողմերին վերաբերող կոլեկտիվ պայմանագրում: Ազգային անկախ արբիտրաժային դատարանը պետք է երաշխավորի արդար դատական ընթացակարգեր և հարգի ֆուտբոլիստների և ակումբների հավասար ներկայացուցչության սկզբունքը:
գ) Ասոցիացիայի կամ ակումբի և օտարերկրացի մարզչի միջև աշխատանքային վեճեր. վերոնշյալ կողմերն, ամեն դեպքում, կարող են գրավոր համաձայնություն ներկայացնել առ այն, որ նման վեճերի առնչությամբ որոշում կայացնի ազգային մակարդակով ՀՖՖ-ի շրջանակներում և/կամ կոլեկտիվ պայմանագրով հիմնադրված անկախարբիտրաժային դատարանը: Ցանկացած նման արբիտրաժային հայց/ վեճ պետք է ուղղակիորեն ներառվի կա՛մ պայմանագրում, կա՛մ կողմերին վերաբերող կոլեկտիվ պայմանագրում: Ազգային անկախ արբիտրաժային դատարանը պետք է երաշխավորի արդար դատական ընթացակարգեր և հարգի մարզիչների և ակումբների հավասար ներկայացուցչության սկզբունքը:
դ) Մարզումային փոխհատուցման (Հոդված 20) և համերաշխության մեխանիզմի վերաբերյալ (Հոդված 21) վեճեր այն ակումբների միջև, որոնք պատկանում են տարբեր ասոցիացիաների և որոնք չեն կարգավորվում ՖԻՖԱ-ի՝ Վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգով:
ե) Մարզումային փոխհատուցման (Հոդված 20) և համերաշխության մեխանիզմի վերաբերյալ (Հոդված 21) վեճեր այն ակումբների միջև, որոնք պատկանում են միևնույն ասոցիացիային (պայմանով, որ վեճի հիմքով ֆուտբոլիստի տեղափոխությունը տեղի է ունենում տարբեր ասեցիացիաների պատկանող ակումբների միջև) և որոնք չեն կարգավորվում ՖԻՖԱ-ի՝ Վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգով:
զ) Էլեկտրոնային ֆուտբոլային անձնագրի (EPP) վերանայման գործընթացում գտնվող իրավական կամ փաստացի բարդություն ներկայացնող հարցերը՝ համաձայն ՖԻՖԱ-ի՝ Վճարումները վերահսկող մարմնի կանոնակարգի Հոդված 10-ի 3-րդ կետի, ինչպես նաև

ակումբների միջև վեճերը՝ համաձայն ՖԻՖԱ-ի՝ Վճարումները վերահսկող մարմնի կանոնակարգի Հոդվածի 18-ի 2-րդ կետի; և
է. տարբեր ասոցիացիաների պատկանող ակումբների միջև վեճերը, որոնք չեն առնչվում ա), դ), ե) և զ) կետերով նախատեսված դեպքերի հետ:

2. ՖԻՖԱ-ն իրավասու է որոշում կայացնել կարգավորող հայտերի վերաբերյալ, որոնք ներկայացված են սույն կանոնակարգի կամ ՖԻՖԱ-ի ցանկացած այլ կանոնակարգի համաձայն:

## Հոդված 22[1]. ՀՖՖ իրավասությունը

Չխոչընդոտելով ֆուտբոլիստի և/կամ ակումբի՝ ընդհանուր իրավասության դատարան դիմելու իրավունքը՝ պայմանագրային և/կամ աշխատանքային վեճերի առնչությամբ, ՀՖՖ-ն իրավասու է որոշում կայացնել հետևյալ հարցերի շուրջ.

1. Պայմանագրային կայունության պահպանմանն առնչվող (Հոդվածներ 13-18[3]) վեճեր ակումբների և ֆուտբոլիստների միջև, որտեղ կատարվել է ՄՏՍ հարցում, և շահագրգիռ կողմը հայց է ներկայացրել նշված ՄՏՍ հարցման հետ կապված, մասնավորապես, տվյալ ՄՏՍ-ի ուղարկման, սպորտային պատժամիջոցների կամ պայմանագրի դրույթների խախտման հետ կապված փոխհատուցման առնչությամբ:
2. Ակումբի և օտարերկրացի ֆուտբոլիստի միջև աշխատանքային վեճեր. վերոնշյալ կողմերն, ամեն դեպքում, կարող են գրավոր համաձայնություն ներկայացնել առ այն, որ նման վեճերի առնչությամբ որոշում կայացնի ազգային մակարդակով ՀՖՖ-ի շրջանակներում և/կամ կոլեկտիվ պայմանագրով հիմնադրված անկախ արբիտրաժային դատարանը: Ցանկացած նման արբիտրաժային հայց/ վեճ պետք է ուղղակիորեն ներառվի կա՛մ պայմանագրում, կա՛մ կողմերին վերաբերող կոլեկտիվ պայմանագրում: Ազգային անկախ արբիտրաժային դատարանը պետք է երաշխավորի արդար դատական ընթացակարգեր և հարգի ֆուտբոլիստների և ակումբների հավասար ներկայացուցչության սկզբունքը:
3. ՀՖՖ-ի կամ ակումբի և օտարերկրացի մարզչի միջև աշխատանքային վեճեր, եթե առկա չէ արդար ընթացակարգեր երաշխավորող Ազգային անկախ արբիտրաժային դատարան:
4. Մարզումային փոխհատուցման (Հոդվածներ 20, 20[1]) և համերաշխության մեխանիզմի վերաբերյալ (Հոդված 21) վեճեր ակումբների միջև:

## Հոդված 23. Ֆուտբոլային տրիբունալ

1. Ֆուտբոլային տրիբունալի՝ Վեճերի լուծման պալատը որոշում է կայացնում Հոդված 22-ի 1-ին դրույթի ա), բ), դ), ե) և զ) կետերով սահմանված գործերից որևէ մեկի վերաբերյալ:
2. Ֆուտբոլային տրիբունալի՝ Ֆուտբոլիստների կարգավիճակի պալատը որոշում է կայացնում Հոդված 22-ի 1-ին դրույթի գ) և է) կետերով և 2-րդ դրույթով սահմանված գործերից որևէ մեկի վերաբերյալ:
3. Ֆուտբոլային տրիբունալը չպետք է քննի սույն կանոնակարգին առնչվող որևէ գործ, եթե վեճն առաջացրած դեպքից անցել է ավելի քան երկու տարի: Այս ժամկետի կիրառումը յուրաքանչյուր առանձին դեպքում քննվում է ի պաշտոնե:

4. Հոդված 22-ով սահմանված վեճերի առնչությամբ հայցեր ներկայացնելու ընթացակարգերը ներառված են Ֆուտբոլային տրիբունալը կարգավորող ընթացակարգային կանոններում:

## Հոդված 23[1]. Վեճերի լուծման կարգը

Ֆուտբոլային սուբյեկտների միջև սույն կանոնակարգից բխող վեճերի կարգավորումը իրականացվում է ՀՖՖ Վեճերի լուծման պալատի կողմից՝ ՀՖՖ կանոնադրության, սույն կանոնակարգի և ՀՖՖ Վեճերի լուծման պալատի (ՎԼՊ) կանոնակարգով սահմանված կարգով:

## Հոդված 24. Վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքները

1. Այն դեպքում, երբ՝

ա) ՀՖՖ-ի որոշում կայացնող մարմինը համապատասխան որոշմամբ պարտավորեցնում է որևէ կողմին (ակումբ կամ ֆուտբոլիստ) վճարում կատարել հօգուտ մյուս կողմի (ակումբ կամ ֆուտբոլիստ), վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքները պետք է ներառվեն կայացված որոշման մեջ;
բ) Վեճի մեջ ներգրավված կողմերն ընդունում են (կամ չեն մերժում) «Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեի և Վեճերի լուծման պալատի ընթացակարգերը կարգավորող կանոնների» համաձայն ՀՖՖ-ի գլխավոր քարտուղարության կողմից արված առաջարկությունը, վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքները պետք է նշվեն հաստատող նամակում:

2. Վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքները շարադրված են ստորև.

ա) Ընդդեմ ակումբի. թե՛ազգային, թե՛ միջազգային մակարդակով նոր ֆուտբոլիստ գրանցելու արգելք, քանի դեռ անհրաժեշտ վճարումները կատարված չեն: Գրանցման արգելքի ընդհանուր առավելագույն տևողությունը չպետք է գերազանցի երեք ամբողջական և իրար հաջորդող գրանցման ժամանակահատվածը: Տվյալ պարագայում պետք է հաշվի առնել նաև 7-րդ կետը ստորև:
բ) Ընդդեմ ֆուտբոլիստի. պաշտոնական խաղերին մասնակցելու սահմանափակում քանի դեռ անհրաժեշտ վճարումները կատարված չեն: Սահմանափակման ընդհանուր առավելագույն տևողությունը չպետք է գերազանցի վեց ամիսը: Տվյալ պարագայում պետք է հաշվի առնել նաև 7-րդ կետը ստորև:

3. Վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքները կարող են բացառվել այն դեպքում, երբ ՀՖՖ-ի որոշում կայացնող մարմինը՝

ա) տվյալ գործով մարզական պատժամիջոց է կիրառել Հոդված 17-ի, Հոդված 18[3]-ի կամ Հոդված 12[1] հիման վրա; կամ
բ) պատշաճ տեղեկացվում է առ այն, որ պարտապան ակումբը կամ ասոցիացիան

գտնվում են սնանկացման գործընթացում՝ համաձայն ներպետական օրենսդրության, և իրավական տեսանկյունից ի վիճակի չէ կատարել հրահանգը:

4. Վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքների կիրառման դեպքում պարտապանը պետք է պարտատերին վճարի ամբողջական գումարը (ներառյալ բոլոր կիրառելի տոկոսները) որոշման ծանուցումը ստանալուց հետո՝ 45 օրվա ընթացքում:

5. 45-օրյա ժամկետն սկսվում է որոշման ծանուցումը կամ հաստատող նամակն ստանալուն պես:

ա) Ժամկետը կասեցվում է որոշման հիմքերի տրամադրման վավեր դիմում ներկայացնելու դեպքում: Ժամկետը վերսկսվում է որոշման հիմքերը տրամադրելուց հետո:
բ) Ժամկետը կասեցվում է նաև Սպորտային արբիտրաժային դատարան (CAS) բողոքարկում ներկայացնելու դեպքում:

6. Պարտապանը պետք է ամբողջությամբ կատարի վճարումները (ներառյալ բոլոր կիրառելի տոկոսները)՝ այն փոխանցելով պարտատիրոջ կողմից տրամադրված բանկային հաշվին, որը նշված է որոշման մեջ կամ հաստատող նամակում:

7. Եթե պարտապանը սահմանված ժամկետում չի կատարում անհրաժեշտ վճարումները (ներառյալ բոլոր կիրառելի տոկոսները), և որոշումը դառնում է վերջնական և կիրառելի, ապա՝

ա) պարտատերը կարող է պահանջ ներկայացնել ՀՖՖ-ին, որպեսզի վերջինս կիրառի հետևանքները;
բ) նման պահանջ ստանալուն պես ՀՖՖ-ն տեղեկացնում է պարտապանին հետևանքների կիրառման մասին;
գ) հետևանքներն անմիջապես կիրառվում են ՀՖՖ-ի կողմից ծանուցվելու պահից, ներառյալ՝ (կասկածներից խուսափելու նկատառումներով) այն դեպքերում, երբ դրանք կիրառվել են բաց գրանցման ժամանակահատվածի ընթացքում: Նմանդեպքերում, 2-րդ կետի «ա» ենթակետի կիրառման շրջանակներում գրանցման ընթացիկ ժամանակահատվածի մնացյալ մասը դիտարկվում է որպես առաջին «ամբողջական» գրանցման ժամանակահատված;
դ) Հետևանքները կարող են վերանալ միայն ստորև նշված 8-րդ դրույթի համաձայն:

8. Երբ հետևանքներն արդեն իսկ մտած են ուժի մեջ, պարտապանը պետք է ՀՖՖ-ին ներկայացնի ապացույց առ այն, որ բոլոր վճարումները (ներառյալ բոլոր կիրառելի տոկոսները) կատարված են, որպեսզի հետևանքները վերացվեն:

ա) Վճարման ապացույցն ստանալուն պես ՀՖՖ-ն անմիջապես պարտատիրոջից պահանջում է, որպեսզի վերջինս հնգօրյա ժամկետում հաստատի ամբողջական վճարման ստացումը:
բ) Պարտատիրոջից հաստատում ստանալուն պես կամ սահմանված ժամկետը

լրանալու և այդ ընթացքում պատասխան չստանալու դեպքում ՀՖՖ-ն կողմերին ծանուցում է հետևանքների վերացման մասին:
գ) Հետևանքներն անմիջապես վերացվում են ՀՖՖ-ի կողմից ծանուցում ստանալուն պես:
դ) Չնայած վերոգրյալին, եթե չի կատարվել ամբողջական վճարում (ներառյալ բոլոր կիրառելի տոկոսները), ապա հետևանքները ուժի մեջ են մնում մինչև դրանց ամբողջական կատարումը:

## Հոդված 25. Որոշումների կատարումը և հաստատող նամակը

1. Պարտապանի սպորտային իրավահաջորդը նույնպես համարվում է պարտապան և ենթակա է սույն Հոդվածի շրջանակներում կայացված ցանկացած որոշմամբ կամ հաստատման նամակով սահմանվածի կատարմանը: Ի թիվս այլնի՝ տվյալ կազմակերպության գրասենյակը, անվանումը, իրավական ձևը, թիմի գույները, ֆուտբոլիստները, բաժնետերերը կամ շահագրգիռ կողմերը կամ սեփականության իրավունքը և տվյալ առաջնության կարգը (կատեգորիան) նույնպես դիտարկվում են որպես մեկ այլ կազմակերպության սպորտային իրավահաջորդը համարվելու չափանիշ:

2. Եթե որոշումներ կայացնող համապատասխան մարմինը պարտապանին հանձնարարում է պարտատիրոջը վճարել որոշակի գումար (դեռևս չվճարված գումարներ կամ փոխհատուցում), ապա՝

ա) վճարումը կատարվում է այն ժամանակ, երբ պարտապանը պարտատիրոջը վճարում է հանձնարարված ամբողջ գումարը (ներառյալ ցանկացած կիրառելի տոկոսները);
բ) վճարումը կատարված չի համարվում, եթե պարտապանը ցանկացած միակողմանի նվազեցում է կատարում հանձնարարված ամբողջ գումարից (ներառյալ ցանկացած կիրառելի տոկոսները):

3. Հետևյալ գործողությունները չեն հակադրվում Հոդված 17-ով, Հոդված 18$^{3}$-ով, Հոդված 24-ով կամ Հոդված 12$^{1}$ -ով սահմանված գրանցման արգելքին.

ա) պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի վարձակալությունից վերադարձ՝ բացառապես այն դեպքերում, երբ վարձակալության պայմանագիրն ավարտվում է սահմանված ժամկետում;
բ) պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի վարձակալության պայմանագրի երկարաձգում՝ վարձակալության պայմանագրովսահմանված ժամկետի ավարտից հետո;
գ) պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի վերջնական գրանցում, որը ժամանակավորապես գրանցվել էր ակումբում նախքան գրանցման արգելքի կիրառումը;
դ) պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի գրանցում, որը նախքան գրանցման արգելքի կիրառումն արդեն իսկ գրանցվել էր ակումբում որպես սիրողական ֆուտբոլիստ:

# ԳԼՈՒԽ 10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Հոդված 26. Կանոնակարգի ուժի մեջ մտնելը

1. Սույն կանոնակարգը հաստատվել է Գործադիր կոմիտեի կողմից և ուժի մեջ է մտել 28.07.2023թ.-ին:
2. Սույն կանոնակարգի՝ ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվել 11.07.2022թ.-ի ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգը և հետագայում դրանում կատարված բոլոր փոփոխությունները:
3. Սույն կանոնակարգով չնախատեսված դեպքերում, ինչպես նաև ֆորս-մաժորային իրավիճակներում որոշումը կայացվում է ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից, ում որոշումը վերջնական է:
4. Նախքան սույն կանոնակարգի ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է 11.07.2022թ.-ի ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգը:

## Հոդված 27. Պատասխանատվությունը՝ կանոնակարգի դրույթները խախտելու համար

Սույն կանոնակարգի դրույթների խախտման, չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում ֆուտբոլային սուբյեկտները ենթարկվում են կարգապահական պատժամիջոցների սույն կանոնակարգի Հավելված 9-ի և/կամ ՀՖՖ գործող կանոնակարգերի դրույթների համապատասխան:

# ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ

## Հոդված 1. Կանոններ

1. ՀՖՖ կողմից հրավերի առկայության դեպքում ակումբները պարտավոր են ՀՀ ազգային հավաքականներին տրամադրել իրենց մոտ գրանցված այն ֆուտբոլիստներին, ովքեր, ունենալով համապատասխան քաղաքացիություն, իրավասու են հանդես գալու ՀՀ ազգային հավաքականում: Ֆուտբոլիստի և ակումբի միջև նշված դրույթը սահմանափակող ցանկացած այլ համաձայնագիր առոչինչ է:
2. Սույն հոդվածի առաջին կետի համաձայն՝ ֆուտբոլիստների ազատ արձակումը պարտադիր է Միջազգային խաղերի հաստատված խաղացանկում ընդգրկված բոլոր «միջազգային պատուհան»-ների համար (տե'ս սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը), ինչպես նաև ՖԻՖԱ-ի Աշխարհի Գավաթի եզրափակիչ մրցաշարերի, ՖԻՖԱ-ի Կոնֆեդերացիաների Գավաթի և Կոնֆեդերացիաների ազգային հավաքականների առաջնությունների համար, եթե համապատասխան ասոցիացիան կազմակերպիչ կոնֆեդերացիայի անդամ է:
3. Համապատասխան անդամների հետ խորհրդակցելուց հետո ՖԻՖԱ-ն հրապարակում է միջազգային խաղերի հաստատված խաղացանկը՝ չորս կամ ութ տարի ժամկետով: Այն ներառում է տվյալ շրջանում նախատեսված բոլոր միջազգային պատուհանները (տե'ս սույն հոդվածի 4-րդ կետը): Միջազգային խաղերի հաստատված խաղացանկի հրապարակումից հետո ավելացվում են միայն ՖԻՖԱ-ի Աշխարհի Գավաթի, ՖԻՖԱ-ի Կոնֆեդերացիաների Գավաթի ու Կոնֆեդերացիաների ազգային հավաքականների առաջնությունների եզրափակիչ մրցաշարերը:
4. «Միջազգային պատուհան»-ը իննօրյա ժամանակահատված է, որը հատկացվում է ազգային հավաքականների խաղերի անցկացման համար: Այն սկսվում է երկուշաբթի առավոտյան և ավարտվում՝ հաջորդ շաբաթվա երեքշաբթի գիշերը: Ցանկացած «միջազգային պատուհան»-ի ժամանակ յուրաքանչյուր ազգային հավաքական կարող է անցկացնել առավելագույնը երկու խաղ՝ անկախ այն հանգամանքից՝ խաղերը միջազգային մրցաշարի որակավորման փուլի, թե՝ ընկերական խաղեր են: Միջազգային պատուհանի ընթացքում տեղի ունեցող նշված խաղերը կարող են անցկացվել ցանկացած օր՝ սկսած չորեքշաբթի օրվանից՝ այն պայմանով, որ երկու իրար հաջորդող խաղերի միջև ընկած կլինի օրացուցային ամբողջական երկու օր (օրինակ՝ հինգշաբթի/կիրակի կամ շաբաթ/ երեքշաբթի):
5. Հավաքական թիմերը պետք է անցկացնեն «միջազգային պատուհան»-ի ընթացքում ընկած 2 հանդիպումները նույն կոնֆեդերացիայի տարածքում, բացառությամբ՝ միջմայրցամաքային անցումային (փլեյ-օֆֆ) խաղերի: Եթե երկու խաղերից առնվազն մեկն ընկերական է, դրանք կարող են անցկացվել երկու տարբեր կոնֆեդերացիաներում, միայն եթե խաղերի անցկացման երկու վայրերի միջև թռիչքի հեռավորությունը, համաձայն ավիաընկերության պաշտոնական չվացուցակի և երկու ժամային գոտիների, չի գերազանցում 5 ժամը:
6. Համաձայն սույն հոդվածի 2-րդ կետի՝ ասոցիացիան պարտավոր է ազատ արձակել ֆուտբոլիստներին միջազգային խաղերի հաստատված խաղացանկում ընդգրկված «միջազգային պատուհանի» կամ եզրափակիչ մրցաշարերի ընթացքում: Մնացած

դեպքերում ֆուտբոլիստների ազատ արձակումը պարտադիր չէ: Ասոցիացիան նաև պարտավոր չէ ազատ արձակել միևնույն ֆուտբոլիստին ազգային հավաքականի կազմում տարեկան մեկից ավելի եզրափակիչ մրցաշարի մասնակցելու համար: Տվյալ կանոնի վերաբերյալ բացառությունները հաստատվում են ՖԻՖԱ-ի Գործադիր կոմիտեի կողմից միայն ՖԻՖԱ-ի Կոնֆեդերացիաների Գավաթի համար:

7. «Միջազգային պատուհան»-ների համար ֆուտբոլիստները պետք է ազատ արձակվեն և միանան իրենց երկրի ազգային հավաքականին ոչ ուշ, քան երկուշաբթի առավոտյան և վերադառնան իրենց ակումբ ոչ ուշ, քան «միջազգային պատուհան»-ին հաջորդող չորեքշաբթի առավոտյան: Եզրափակիչ մրցաշարերի համար, համաձայն սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի, ֆուտբոլիստները պետք է ազատ արձակվեն իրենց երկրի ազգային հավաքականին միանալու նպատակով ոչ ուշ, քան եզրափակիչ մրցաշարին նախորդող շաբաթվա երկուշաբթի առավոտյան և ազատ արձակվեն ասոցիացիայի կողմից մրցաշարում իրենց թիմի անցկացրած վերջին խաղի հաջորդ օրը՝ առավոտյան:
8. Ակումբները և ասոցիացիաները կարող են համաձայնության գալ ֆուտբոլիստին ավելի երկար ժամկետով ազատ արձակելու կամ համաձայն 7-րդ կետի՝այլ գործողությունների վերաբերյալ:
9. Համաձայն սույն հոդվածի դրույթների՝ ֆուտբոլիստները, ովքեր ազատ են արձակվել իրենց ազգային հավաքականներին միանալու նպատակով, պետք է վերադառնան իրենց ակումբներ ազատ արձակման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո: Տվյալ ժամանակահատվածը կարող է երկարաձգվել մինչև 48 ժամ, եթե ազգային հավաքականների խաղերը տեղի են ունեցել ոչ այն կոնֆեդերացիայում, որտեղ գրանցված է ֆուտբոլիստի ակումբը: Ակումբները պետք է գրավոր տեղեկացվեն ֆուտբոլիստի մեկնելու և վերադառնալու չվացուցակի մասին՝ ազատ արձակման ժամանակահատվածի սկսելուց 10 օր առաջ: Ասոցիացիաները պետք է երաշխավորեն խաղից հետո ֆուտբոլիստների ժամանակին վերադարձն իրենց ակումբներ:
10. Եթե ֆուտբոլիստը չի վերադառնում իր ակումբ մինչև սույն հոդվածում նշված վերջնաժամկետը, ապա համապատասխան հարցման դեպքում ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալի ֆուտբոլիստների կարգավիճակի պալատը կարող է որոշում կայացնել, համաձայն որի՝ հաջորդ անգամ ազգային հավաքականին միանալու նպատակով ֆուտբոլիստինազատ արձակելու ժամանակահատվածը կրճատվում է՝

    ա) «միջազգային պատուհան»-ի համար՝ 2 օրով,
    բ) միջազգային մրցաշարի եզրափակիչ մրցումների համար՝ 5 օրով:

11. Եթե ասոցիացիան շարունակաբար խախտում է նշված դրույթները, ապա ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալի Ֆուտբոլիստների կարգավիճակի պալատն իրավասու է կիրառել հետևյալ պատժամիջոցները՝

    ա) տուգանքներ,
    բ) ֆուտբոլիստին (ֆուտբոլիստներին) ազատ արձակելու ժամանակահատվածի կրճատում,

գ) ազգային հավաքականներում հանդես գալու նպատակով ֆուտբոլիստի (ֆուտբոլիստների) ազատ արձակման արգելք:

## Հոդված 1[1]. Կանանց ֆուտբոլի կանոններ

1. ՀՖՖ կողմից հրավերի առկայության դեպքում ակումբները պարտավոր են տրամադրել իրենց մոտ գրանցված իգական սեռի ֆուտբոլիստներին ՀՀ ազգային հավաքականներում հանդես գալու համար: Նշված դրույթին հակասող ցանկացած այլ համաձայնություն իգական սեռի ֆուտբոլիստի և ակումբի միջև առոչինչ է:
2. Սույն հոդվածի առաջին կետի համաձայն՝ իգական սեռի ֆուտբոլիստների ազատ արձակումը պարտադիր է Կանանց միջազգային խաղերի հաստատված խաղացանկում ընդգրկված բոլոր «միջազգային պատուհան»-ների համար (տե'ս սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը), ինչպես նաև ՖԻՖԱ-ի Կանանց Աշխարհի Գավաթի եզրափակիչ մրցաշարերի, Կանանց Ֆուտբոլի Օլիմպիական մրցաշարի, Կոնֆեդերացիաների կանանց ազգային հավաքականների առաջնությունների համար, եթե համապատասխան ասոցիացիան կազմակերպիչ կոնֆեդերացիայի անդամ է, և Կանանց Ֆուտբոլի Օլիմպիական մրցաշարի մասնակցության իրավունք տվող կոնֆեդերացիաների որակավորման եզրափակիչ մրցաշարերի համար (12 օր ազատ արձակման առավելագույն ժամկետով):
3. Համապատասխան անդամների հետ խորհրդակցելուց հետո ՖԻՖԱ-ն հրապարակում է կանանց միջազգային խաղերի հաստատված խաղացանկը՝ չորս տարի ժամկետով: Այն ներառում է տվյալ շրջանում նախատեսված բոլոր միջազգային պատուհանները (տե'ս սույն հոդվածի 4-րդ կետը), ինչպես նաև ՖԻՖԱ-ի Կանանց Աշխարհի Գավաթի եզրափակիչ մրցաշարերը, Կանանց Ֆուտբոլի Օլիմպիական մրցաշարը, կոնֆեդերացիաների կանանց ազգային հավաքականների առաջնությունների, ինչպես նաև Կանանց Ֆուտբոլի Օլիմպիական մրցաշարի համար անցկացվող կոնֆեդերացիաների եզրափակիչ փուլի որակավորման մրցաշարերի համար նախատեսված ամրագրված ժամանակահատվածները (blocked periods): Կանանց միջազգային խաղերի հաստատված խաղացանկի հրապարակումից հետո ամրագրված ժամանակահատվածում ավելացվում են միայն Կոնֆեդերացիաների կանանց ազգային հավաքականների առաջնությունների և Կանանց Ֆուտբոլի Օլիմպիական մրցաշարի համար անցկացվող կոնֆեդերացիաների եզրափակիչ փուլի որակավորման մրցաշարերի համար նախատեսված հատուկ օրերը: Կոնֆեդերացիաների կանանց ազգային հավաքականների առաջնությունները և Կանանց Ֆուտբոլի Օլիմպիական մրցաշարի եզրափակիչ փուլի որակավորման մրցաշարերը պետք է անցկացվեն համապատասխանաբար սահմանված «ամրագրված ժամանակահատված»-ների ընթացքում: Կոնֆեդերացիաները պարտավոր են գրավոր տեղեկացնել ՖԻՖԱ–ին «հատուկ օրեր»-ի մասին՝ կանանց ազգային հավաքականների համապատասխան առաջնություններից կամ եզրափակիչ փուլի մրցաշարից առնվազն 2 տարի առաջ:
4. «Միջազգային պատուհանները» լինում են 3 տեսակի՝

ա) առաջին տեսակը սահմանվում է որպես իննօրյա ժամանակահատված, որը սկսում է երկուշաբթի առավոտյան և ավարտվում ազգային հավաքականների ելույթներին

հաջորդող շաբաթվա երեքշաբթի գիշերը: Առաջին տեսակի «միջազգային պատուհան»-ի ժամանակ յուրաքանչյուր ազգային հավաքական կարող է անցկացնել առավելագույնը երկու խաղ՝ անկախ այն հանգամանքից՝ խաղերը միջազգային մրցաշարի որակավորման փուլի, թե ընկերական խաղեր են: «Միջազգային պատուհան»-ի ընթացքում տեղի ունեցող նշված խաղերը կարող են անցկացվել ցանկացած օր՝ սկսած չորեքշաբթի օրվանից, այն պայմանով, որ երկու իրար հաջորդող խաղերի միջև ընկած կլինի օրացուցային ամբողջական երկու օր (օր.՝ հինգշաբթի/կիրակի կամ շաբաթ/ երեքշաբթի):

բ) երկրորդ տեսակը սահմանվում է որպես տասնօրյա ժամանակահատված, որը սկսում է երկուշաբթի առավոտյան և ավարտվում ազգային հավաքականների մասնակցությամբ ընկերական մրցաշարերին և որակավորման խաղերին հաջորդող շաբաթվա չորեքշաբթի գիշերը: Երկրորդ տեսակի «միջազգային պատուհան»-ի ժամանակ յուրաքանչյուր ազգային հավաքական կարող է անցկացնել առավելագույնը երեք խաղ: Տվյալ խաղերը կարող են անցկացվել միջազգային պատուհանի ընթացքում ցանկացած օր՝ սկսած հինգշաբթի օրվանից, եթե երկու խաղերի միջև առկա է առնվազներկու ամբողջական օրացույցային օր (օր.՝ հինգշաբթի/կիրակի/չորեքշաբթի):

գ) երրորդ տեսակը սահմանվում է որպես տասներեքօրյա ժամանակահատված, որը սկսում է երկուշաբթի առավոտյան և ավարտվում բացառապես կոնֆեդերացիաների կանանց ազգային հավաքականների առաջնությունների որակավորման խաղերին հաջորդող շաբաթվա շաբաթ գիշերը: Երրորդ տեսակի «միջազգային պատուհան»-ի ժամանակ յուրաքանչյուր ազգային հավաքական կարող է անցկացնել առավելագույնը չորս խաղ: Տվյալ խաղերը կարող են անցկացվել միջազգային պատուհանի ընթացքում ցանկացած օր՝ սկսած հինգշաբթի օրվանից, եթե երկու խաղերի միջև առկա է առնվազներկու ամբողջական օրացույցային օր (օրինակ՝ հինգշաբթի/կիրակի/չորեքշաբթի/շաբաթ):

5. Սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝
«միջազգային պատուհան»-ից դուրս կամ կանանց ֆուտբոլի միջազգային խաղացանկի մեջ ներառված և նշված մրցաշարերից դուրս իգական սեռի ֆուտբոլիստների ազատ արձակումը պարտադիր չէ:
6. Բոլոր երեք տեսակի «միջազգային պատուհան»-ների համար իգական սեռի ֆուտբոլիստները պետք է ազատ արձակվեն և միանան իրենց երկրի ազգային հավաքականին ոչ ուշ, քան երկուշաբթի առավոտյան, և վերադառնան իրենց ակումբ ոչ ուշ, քան «միջազգային պատուհան»-ին հաջորդող չորեքշաբթի (I տեսակի «միջազգային պատուհան»-ի համար), հինգշաբթի առավոտյան (II տեսակի «միջազգային պատուհան»-ի համար) կամ կիրակի առավոտյան (III տեսակի «միջազգային պատուհան»-ի համար):
Կանանց Ֆուտբոլի Օլիմպիական մրցաշարի մասնակցության իրավունք տվող կոնֆեդերացիաների որակավորման եզրափակիչ մրցաշարերի համար իգական սեռի ֆուտբոլիստները պետք է ազատ արձակվեն ակումբի կողմից և միանան իրենց երկրի ազգային հավաքականին ոչ ուշ, քան եզրափակիչ մրցաշարի առաջին խաղից առաջ՝ երկուշաբթի առավոտյան, և ազատ արձակվեն ասոցիացիայի կողմից իրենց ակումբ վերադառնալու նպատակով մրցաշարում իրենց թիմի անցկացրած վերջին խաղի հաջորդ օրը՝ առավոտյան: Նշված որակավորման մրցաշարերի համար իգական սեռի

ֆուտբոլիստների ազատ արձակման առավելագույն ժամանակահատվածը (երկուշաբթի առավոտյան մեկնելու և ասոցիացիայի կողմից ակումբ վերադառնալու նպատակով ազատ արձակվելու օրվա միջև ընկած ժամանակահատված) 16 օր է: Եզրափակիչ այլ մրցաշարերի համար, համաձայն սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի, իգական սեռի ֆուտբոլիստները պետք է ազատ արձակվեն ակումբի կողմից իրենց երկրի ազգային հավաքականին միանալու նպատակով ոչ ուշ, քան տվյալ եզրափակիչ մրցաշարի մեկնարկին նախորդող՝ երկուշաբթի առավոտյան, և ազատ արձակվեն ասոցիացիայի կողմից իրենց ակումբ վերադառնալու նպատակով մրցաշարում իրենց թիմի անցկացրած վերջին խաղի հաջորդ օրը՝ առավոտյան:

7. Ակումբները և ասոցիացիաները կարող են համաձայնության գալ իգական սեռի ֆուտբոլիստին ավելի երկար ժամկետով ազատ արձակելու կամ 6-րդ կետին առնչվող այլ գործողությունների վերաբերյալ:
8. Համաձայն սույն հոդվածի դրույթների՝ իգական սեռի ֆուտբոլիստները, ովքեր ազատ են արձակվել իրենց ազգային հավաքականներին միանալու նպատակով, պետք է վերադառնան իրենց ակումբներ ազատ արձակման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո: Տվյալ ժամանակահատվածը կարող է երկարաձգվել մինչև 48 ժամ, եթե ազգային հավաքականների խաղերը տեղի են ունեցել ոչ այն կոնֆեդերացիայում, որտեղ գրանցված է իգական սեռի ֆուտբոլիստի ակումբը: Ակումբները պետք է գրավոր տեղեկացվեն իգական սեռի ֆուտբոլիստի մեկնելու և վերադառնալու չվացուցակի մասին՝ ազատ արձակման ժամանակահատվածի սկսելուց 10 օր առաջ: Ասոցիացիաները պետք է երաշխավորեն, որ իգական սեռի ֆուտբոլիստները ժամանակին կվերադառնան իրենց ակումբներ:
9. Եթե իգական սեռի ֆուտբոլիստը չի վերադառնում իր ակումբ մինչև սույն հոդվածում նշված վերջնաժամկետը, ապա համապատասխան հարցման դեպքում ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալի Ֆուտբոլիստների կարգավիճակի պալատը կարող է որոշում կայացնել, որի համաձայն՝ հաջորդ անգամ ազգային հավաքականին միանալու նպատակով իգական սեռի ֆուտբոլիստին ազատ արձակելու ժամանակահատվածը կրճատվում է՝

   ա) «միջազգային պատուհան»-ի համար՝ 2 օրով,
   բ) միջազգային մրցաշարի եզրափակիչ մրցումների համար՝ 5 օրով:

10. Եթե ասոցիացիան շարունակաբար խախտում է նշված դրույթները, ապա ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալի Ֆուտբոլիստների կարգավիճակի պալատն իրավասու է կիրառել հետևյալ պատժամիջոցները՝

   ա) տուգանքներ,
   բ) իգական սեռի ֆուտբոլիստի (ֆուտբոլիստների) ազատ արձակման ժամանակահատվածի կրճատում,
   գ) ազգային հավաքականներում հանդես գալու նպատակով իգական սեռի ֆուտբոլիստին (ֆուտբոլիստներին) ազատ արձակելու արգելք:

## Հոդված 1². Ֆուտզալի կանոններ

1. ՀՖՖ կողմից հրավերի առկայության դեպքում ակումբները պարտավոր են տրամադրել իրենց մոտ գրանցված Ֆուտզալի ֆուտբոլիստներին (այսուհետ՝ ֆուտբոլիստ) Հայաստանի Ֆուտզալի ազգային հավաքականում հանդես գալու համար: Նշված դրույթը սահմանափակող ցանկացած այլ համաձայնություն ֆուտբոլիստի և ակումբի միջև առոչինչ է:
2. Սույն հոդվածի առաջին կետի համաձայն՝ ֆուտբոլիստների ազատ արձակումը պարտադիր է Ֆուտզալի միջազգային խաղերի հաստատված խաղացանկում ընդգրկված բոլոր «միջազգային պատուհանների» համար (տե'ս սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը), ինչպես նաև ՖԻՖԱ-ի Ֆուտզալի Աշխարհի Գավաթի եզրափակիչ մրցաշարերի և Կոնֆեդերացիաների ազգային հավաքականների առաջնությունների համար, եթե համապատասխան ասոցիացիան կազմակերպիչ կոնֆեդերացիայի անդամ է:
3. Համապատասխան անդամների հետ խորհրդակցելուց հետո ՖԻՖԱ-ն հրապարակում է ֆուտզալի միջազգային խաղերի հաստատված խաղացանկը՝ չորստարի ժամկետով: Այն ներառում է տվյալ շրջանում նախատեսված բոլոր միջազգային պատուհանները (տե'ս սույն հոդվածի 4-րդ կետը): Ֆուտզալի միջազգային խաղերի հաստատված խաղացանկի հրապարակումից հետո ավելացվում են միայն ՖԻՖԱ-ի Ֆուտզալի Աշխարհի Գավաթի և Կոնֆեդերացիաների ազգային հավաքականների առաջնությունների եզրափակիչ մրցաշարերը:
4. Ֆուտզալի «միջազգային պատուհան»-ները լինում են 2 տեսակի՝

ա) առաջին տեսակը սահմանվում է որպես տասնօրյա ժամանակահատված, որը սկսում է երկուշաբթի առավոտյան և ավարտվում ֆուտզալի ազգային հավաքականների ելույթներին հաջորդող շաբաթվա չորեքշաբթի գիշերը:
Առաջին տեսակի «միջազգային պատուհան»-ի ժամանակ յուրաքանչյուր ազգային հավաքական կարող է անցկացնել առավելագույնը չորս խաղ՝ անկախ այն հանգամանքից՝ խաղերը միջազգային մրցաշարի որակավորման փուլի, թե ընկերական խաղեր են: Առաջին տեսակի «միջազգային պատուհան»-ի ժամանակ ազգային հավաքականները կարող են անցկացնել առավելագույնը չորս խաղ՝ ոչ ավել, քան երկու կոնֆեդերացիայում:
բ) երկրորդ տեսակը բնութագրվում է որպես քառօրյա ժամանակահատված, որը սկսում է կիրակի առավոտյան և ավարտվում ֆուտզալի ազգային հավաքականների ելույթներին հաջորդող շաբաթվա չորեքշաբթի գիշերը: Երկրորդ տեսակի «միջազգային պատուհան»-ի ժամանակ յուրաքանչյուր ազգային հավաքական կարող է անցկացնել առավելագույնը երկու խաղ՝ անկախ այն հանգամանքից՝ խաղերը միջազգային մրցաշարի որակավորման փուլի, թե ընկերական խաղեր են:
Երկրորդ տեսակի «միջազգային պատուհան»-ի ժամանակ ազգային հավաքականները նույն կոնֆեդերացիայի տարածքում կարող են անցկացնել առավելագույնը երկու խաղ:

5. Համաձայն սույն հոդվածի 2-րդ կետի՝ ֆուտբոլիստների ազատ արձակումը պարտադիր չէ ֆուտզալի միջազգային խաղերի հաստատված խաղացանկում ընդգրկված միջազգային պատուհանից դուրս կամ եզրափակիչ մրցաշարերից դուրս:
6. Նշված երկու տեսակի «միջազգային պատուհան»-ների համար ֆուտբոլիստները պետք է ազատ արձակվեն և միանան իրենց երկրի ազգային հավաքականին ոչ ուշ, քան պատուհանի առաջին կիրակի կամ երկուշաբթի առավոտյան, և վերադառնան իրենց ակումբ ոչ ուշ, քան «միջազգային պատուհան»-ի փակմանը հաջորդող հինգշաբթի առավոտյան: Կոնֆեդերացիաների ազգային հավաքականների առաջնությունների եզրափակիչ մրցաշարերի համար ֆուտբոլիստները պետք է ազատ արձակվեն իրենց երկրի ազգային հավաքականին միանալու նպատակով ոչ ուշ, քան եզրափակիչ մրցաշարի առաջին խաղից 12 օր առաջ՝ առավոտյան, և ազատ արձակվեն ասոցիացիայի կողմից իրենց ակումբ վերադառնալու նպատակով մրցաշարում իրենց թիմի անցկացրած վերջին խաղի հաջորդ օրը՝ առավոտյան: ՖԻՖԱ-ի Ֆուտզալի Աշխարհի Գավաթի համար ֆուտբոլիստները պետք է ազատ արձակվեն և միանան իրենց երկրի ազգային հավաքականին Աշխարհի գավաթի մեկնարկից 14 օր առաջ՝ առավոտյան, և ազատ արձակվեն ասոցիացիայի կողմից իրենց ակումբ վերադառնալու նպատակով մրցաշարում իրենց թիմի անցկացրած վերջին խաղի հաջորդ օրը՝ առավոտյան:
7. Ակումբները և ասոցիացիաները կարող են համաձայնության գալ ֆուտբոլիստին ավելի երկար ժամկետով ազատ արձակելու կամ սույն հոդվածի 6-րդ կետին առնչվող այլ գործողությունների վերաբերյալ:
8. Համաձայն սույն հոդվածի դրույթների՝ ֆուտբոլիստները, ովքեր ազատ են արձակվել իրենց ազգային հավաքականներին միանալու նպատակով, պետք է վերադառնան իրենց ակումբներ ազատ արձակման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո: Տվյալ ժամանակահատվածը կարող է երկարաձգվել մինչև 48 ժամ, եթե ազգային հավաքականների խաղերը տեղի են ունեցել ոչ այն կոնֆեդերացիայում, որտեղ գրանցված է ֆուտբոլիստի ակումբը: Ակումբները պետք է գրավոր տեղեկացվեն ֆուտբոլիստի մեկնելու և վերադառնալու չվացուցակի մասին ազատ արձակման ժամանակահատվածի սկսելուց 10 օր առաջ: Ասոցիացիաները պետք է երաշխավորեն, որ ֆուտբոլիստները ժամանակին կվերադառնան իրենց ակումբներ:
9. Եթե ֆուտբոլիստը չի վերադառնում իր ակումբ մինչև սույն հոդվածում նշված վերջնաժամկետը, ապա համապատասխան հարցման դեպքում ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալի Ֆուտբոլիստների կարգավիճակի պալատը կարող է որոշում կայացնել, որի համաձայն՝ հաջորդ անգամ ազգային հավաքականին միանալու նպատակով ֆուտբոլիստին ազատ արձակելու ժամանակահատվածը կրճատվում է՝

   ա) «միջազգային պատուհան»-ի համար՝ 2 օրով,
   բ) միջազգային մրցաշարի եզրափակիչ մրցումների համար՝ 5 օրով:

10. Եթե ասոցիացիան շարունակաբար խախտում է նշված դրույթները, ապա ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալի Ֆուտբոլիստների կարգավիճակի պալատն իրավասու է կիրառել հետևյալ պատժամիջոցները՝

   ա) տուգանքներ,
   բ) ֆուտբոլիստի (ֆուտբոլիստների) ազատ արձակման ժամանակահատվածի

կրճատում,

գ) ազգային հավաքականներում հանդես գալու նպատակով ֆուտբոլիստին (ֆուտբոլիստներին) ազատ արձակելու արգելք:

## Հոդված 2. Ֆինանսական դրույթներն ու ապահովագրությունը

1. Ֆուտբոլիստին ազատ արձակած ակումբը, համաձայն սույն հավելվածի (Հավելված 1), իրավունք չունի ստանալու ֆինանսական փոխհատուցում:
2. ՀՖՖ-ն հոգում է ֆուտբոլիստների՝ ՀՀ Ազգային հավաքականներ (տղամարդկանց, կանանց, ֆուտզալի և այլն) ժամանման հետ կապված ծախսերը:
3. Ակումբը, որտեղ գրանցված է հրավիրված ֆուտբոլիստը, պատասխանատվություն է կրում ազատ արձակման, ամբողջ ժամանակահատվածում նրա հիվանդության և դժբախտ պատահարների, ինչպես նաև այն միջազգային խաղի (խաղերի) ընթացքում ստացած վնասվածքների ապահովագրման համար, որին հրավիրվել է:
4. Եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստն ազգային հավաքականի խաղին մասնակցելու նպատակով ազատ արձակման ժամանակահատվածում պատահաբար մարմնական վնասվածք է ստանում, որի արդյունքում ժամանակավորապես ամբողջովին անգործունակ է դառնում, ապա ակումբը, որտեղ գրանցված է ֆուտբոլիստը, ստանում է փոխհատուցում ՖԻՖԱ-ի կողմից: Վնասի փոխհատուցման պայմանները և ընթացակարգերը ամրագրված են Տեխնիկական բյուլետեն-ակումբների պաշտպանության ծրագրում:

## Հոդված 3. Ֆուտբոլիստների հրավերը

1. Ակումբում գրանցված ֆուտբոլիստը պարտավոր է ընդունել ՀՖՖ հրավերը՝ Ազգային հավաքականներից որևէ մեկում հանդես գալու համար:
2. ՀՖՖ-ն ֆուտբոլիստին հավաքական հրավիրելու ցանկության դեպքում պետք է գրավոր տեղեկացնի ֆուտբոլիստին «միջազգային պատուհանի» (տե'ս Հավելված 1-ի Հոդված 1-ի կետ 4-ը) այն խաղից առնվազն 15 օր առաջ, որին նա հրավիրվում է մասնակցելու: Եթե ՀՖՖ-ն ցանկանում է ֆուտբոլիստին հրավիրել միջազգային մրցաշարի եզրափակիչ մրցումներին մասնակցելու համար, ապա պետք է այդ մասին գրավոր տեղեկացնի ֆուտբոլիստին վերջինիս ազատ արձակելու ժամանակահատվածի սկսելուց 15 օր առաջ: ՀՖՖ-ն, միաժամանակ, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել այն ակումբին, որտեղ ֆուտբոլիստը հանդես է գալիս՝ միևնույն նամակն ուղարկելով նաև տվյալ հրավերի մեջ ընդգրկված ակումբի ասոցիացիային: Ակումբը պարտավոր է հաստատել ֆուտբոլիստի ազատ արձակումը հաջորդող 6 օրվա ընթացքում:
3. ՀՖՖ-ն իրավասու է դիմելու ՖԻՖԱ-ի օգնությանը արտերկրում հանդես եկող ֆուտբոլիստի ազատ արձակումը ստանալու նպատակով միայն հետևյալ դեպքերում՝

   ա) ասոցիացիան, որտեղ տվյալ ֆուտբոլիստը գրանցված է, դրական միջամտություն չի ցուցաբերել գործընթացին,
   բ) գործը հանձնվել է ՖԻՖԱ-ին այն խաղից առնվազն 5 օր առաջ, որին ֆուտբոլիստին հրավիրել էին մասնակցելու:

## Հոդված 4. Վնասվածք ստացած ֆուտբոլիստները

Ֆուտբոլիստը, ով վատառողջության կամ վնասվածք ստանալու պատճառով չի կարող ընդունել ՀՖՖ հրավերը, վերջինիս պահանջի դեպքում պետք է անցնի բժշկական հետազոտություն: Բժշկի ընտրությունը կատարում է ՀՖՖ-ն: Ֆուտբոլիստի ցանկության դեպքում այդ բժշկական հետազոտությունն անցկացվում է այն վայրում, որտեղ նա գրանցված է:

## Հոդված 5. Ֆուտբոլիստների՝ խաղերին մասնակցելու սահմանափակումը

Ֆուտբոլիստը, որը հրավիրվել է հանդես գալու Ազգային հավաքականներից որևէ մեկում, չի կարող առանց ՀՖՖ համաձայնության խաղալ իրեն գրանցած ակումբի կազմում այն ժամանակահատվածում, որում նա ազատ է արձակվել կամ պետք է ազատ արձակվեր՝ համաձայն սույն հավելվածի (Հավելված 1) կետերի: Ակումբի կազմում խաղալու այդ սահմանափակումը կարող է երկարաձգվել ևս 5 օրով:

## Հոդված 6. Կարգապահական պատժամիջոցներ

Սույն հավելվածում նշված ցանկացած պայմանի խախտումը կհանգեցնի կարգապահական պատժամիջոցների կիրառման, ինչի շուրջ որոշումը կայացնում է ՖԻՖԱ-ի կարգապահական կոմիտեն՝ ՖԻՖԱ-ի Կարգապահական կանոնակարգի հիման վրա:

# ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

## Հոդված 1. Պայմանագիրը և կողմերը

1. Ակումբի և ֆուտբոլիստի միջև պայմանագիրը պետք է կնքվի գրավոր և պատշաճ ստորագրված լինի երկու կողմերի կողմից: Անչափահաս ֆուտբոլիստի հետ պայմանագիր կնքելիս, այն պետք է նաև ստորագրվի նրա օրինական ներկայացուցչի կողմից:
2. Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:
3. Պայմանագրում նշվում են ֆուտբոլիստի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, քաղաքացիությունը (երկքաղաքացիությունը), անձնագրային տվյալները (անձնագրի սերիան, տրման ամսաթիվը, ում կողմից է տրված և վավերականության ժամկետը) ինչպես նաև փաստացի բնակության վայրի ամբողջական հասցեն: Եթե ֆուտբոլիստը անչափահաս է, պայմանագրում պետք է, համապատասխանաբար, նշվեն նաև նրա օրինական ներկայացուցչի տվյալները:
4. Պայմանագրում նշվում են կազմակերպության տեղեկությունները անվանումը (ներառյալ՝ կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը, գրանցման համարը, ՀՎՀՀ-ն և գտնվելու վայրի հասցեն), ինչպես նաև ակումբը ներկայացնող անձի անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն: Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի հետ պայմանագիր կարող է կնքել միայն ֆուտբոլային ակումբը ներկայացնող համապատասխան կազմակերպաիրավական ձև ունեցող կազմակերպությունը (իրավաբանական անձը): Համաձայն ակումբների արտոնագրման ազգային կանոնակարգի/ձեռնարկի՝ նման կազմակերպությունը հանդիսանում է որպես արտոնագրման թեկնածու: Այն պետք է հանդիսանա ազգային ասոցիացիայի և/կամ պրոֆեսիոնալ լիգայի ուղղակի կամ անուղղակի անդամ և գրանցված լինի: Այլ կազմակերպություն չի կարող ֆուտբոլիստի հետ պայմանագիր կնքել առանց կոմպետենտ ազգային ֆուտբոլային մարմնի և/կամ ՖԻՖԱ-ի գրավոր համաձայնության:
5. Պայմանագրում պետք է հստակ սահմանվեն պայմանագրի ուժի մեջ մտնելու սկիզբը (օր/ ամիս/տարի) և ավարտը (օր/ ամիս/տարի): Ցանկացած վաղաժամկետ դադարեցում պետք է լինի օրենքով և Կանոնակարգով նախատեսված:
6. Պայմանագրում պետք է նշվեն նաև այն անձանց տվյալները, ովքեր ներգրավված են եղել բանակցություններում կամ պայմանագրի կնքման գործընթացում (ֆուտբոլիստի օրինական ներկայացուցիչ, ֆուտբոլիստի միջնորդ, թարգմանիչ և այլն): Առանց միջնորդի պայամանագիր կնքելու հանգամանքը ևս պետք է ամրագրվի պայմանագրում:
7. Աշխատանքային պայմանագրում պետք է ներառվեն կողմերի իրավունքները և պարտականությունները:
8. Օտարերկրացի ֆուտբոլիստի հետ կնքվող աշխատանքային պայմանագիրըպետք է կնքվի երկու լեզվով՝ հայերեն և տվյալ ֆուտբոլիստին հասկանալի միջազգային լեզվով (անգլերեն կամ ռուսերեն): Այն պետք է ներառի նաև օտարերկրացի ֆուտբոլիստի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետություն փոխադրման, սոցիալական ապահովության և ապահովագրության, դիմավորման, կացարանով

ապահովման և բնակության վայրում հաշվառման և վերադարձի հետ կապված հարցերը:

9. Պայմանագրի ցանկացած փոփոխություն պետք է կատարվի երկկողմանի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով և որպես անբաժանելի մաս՝ կցվի հիմնական պայմանագրին:

## Հոդված 2. Ակումբի պարտականությունները

1. Պայմանագիրը պետք է ամբողջ ծավալով սահմանի ակումբի ֆինանսական պարտականությունները, այդ թվում՝ փոխհատուցումները: Մասնավորապես՝

– աշխատավարձ,
– ֆինանսական այլ եկամուտներ (բոնուսներ, պարգևատրումներ և այլն),
– ոչ ֆինանսական եկամուտներ (մեքենա, բնակարան և այլն),
– հիվանդության ու դժբախտ պատահարների դեպքում ֆուտբոլիստի ապահովագրություն (օրենքով պարտադիր) և վերջինիս անգործունակության դեպքում աշխատավարձի վճարում,
– ֆուտբոլիստի կողմից արված ծախսերի փոխհատուցում:

2. Պայմանագիրը պետք է սահմանի գումարի վճարման ժամկետը և վճարման ձևը (կանխիկ, փոխանցումով և այլն): Պայմանագիրը կարող է կանոնակարգել նաև ֆինանսական դրույթների փոփոխության հնարավորություն՝ կախված գործատուի եկամտի փոփոխություններից (առաջխաղացում, ռեգրես):
3. Պայմանագիրը պետք է երաշխավորի երիտասարդ ֆուտբոլիստների ոչ ֆուտբոլային (մարզական) կրթությունը (պարտադիր միջնակարգ դպրոց) անարգել շարունակելու իրավունքը:
4. Պայմանագիրը պետք է սահմանի ֆուտբոլիստի տարեկան արձակուրդի իրավունքը՝ (նվազագույնը 20 աշխատանքային օր): Արձակուրդի ժամկետը պետք է համաձայնեցվի ակումբի հետ նախօրոք և լինի ակումբի ֆուտբոլային կանոնավոր մրցաշրջանից հետո:
5. Պայմանագիրը պետք է ներառի առողջապահության և անվտանգության ասպարեզում ակումբի կողմից վարվող քաղաքականության վերաբերյալ դրույթներ՝ հիվանդության ու դժբախտ պատահարների դեպքում ֆուտբոլիստի՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով ապահովագրման և բժշկական կանոնավոր զննման մասին:
6. Պայմանագիրը կանոնակարգում է նաև վնասվածքի մասին համապատասխան գրառումների պահպանումը (ներառյալ ազգային թիմում ստացված վնասվածքների)՝ միաժամանակ պահպանելով գաղտնիություն: Եթե օրենքն այլ բան չի նախատեսում, ապա, որպես կանոն, վնասվածքի մասին գրառումները պահվում են թիմի պատասխանատու բժշկի մոտ:
7. Պայմանագիրը պետք է սահմանի դրույթ, ըստ որի ակումբը պարտավորվում է ղեկավարվել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՀՖՖ-ի, ինչպես նաև ակումբի ներքին կանոնադրություններով և կանոնակարգերով:

## Հոդված 3. Ֆուտբոլիստի պարտականությունները

1. Պայմանագիրը պետք է սահմանի ֆուտբոլիստի հետևյալ պարտականությունները՝

մասնակցել հանդիպումներին ունակությունների առավելագույն դրսևորմամբ,
– մասնակցել մարզումներին և խաղի նախապատրաստական աշխատանքներին՝ համաձայն մարզչի հրահանգների,
– վարել առողջ ապրելակերպ, պահպանել ֆիզիկական պատրաստվածության բարձր ցուցանիշներ,
– հետևել ակումբի ղեկավարների հրահանգներին (ողջամիտ),
– հաճախել ակումբին վերաբերող բոլոր միջոցառումներին (լինի մարզական, թե առևտրային),
– ենթարկվել ակումբի ներքին կանոնակարգերին,
– դրսևորել մարզական պատշաճ վարքագիծ հանդիպումներին և ուսումնամարզական հավաքներին ներգրավված անձանց նկատմամբ, սովորել և կիրառել խաղի կանոնները և ենթարկվել խաղի պաշտոնյաների որոշումներին,
– զերծ մնալ ֆուտբոլային այլ միջոցառումներին մասնակցելուց, որոնք իրական վտանգ են ներկայացնում և անցկացվում են ակումբի անվտանգության համակարգից դուրս,
– ուշադիր լինել ակումբին պատկանող գույքի նկատմամբ և վերադարձնել այն պայմանագրի ավարտից հետո,
– հիվանդության և դժբախտ պատահարի դեպքում անմիջապես տեղեկացնել ակումբին և չընդունել որևէ այլ բժշկական միջամտություն՝ առանց ակումբի բժշկին տեղեկացնելու (բացառությամբ՝ անհետաձգելի իրավիճակների),
– ներկայացնել անաշխատունակության վերաբերյալ համապատասխան բժշկական փաստաթուղթ,
– ակումբի բժշկի պահանջով բժշկական կանոնավոր զննման ենթարկվել և ստանալ անհրաժեշտ բուժումներ,
– ենթարկվել ազգային ասոցիացիայի, լիգայի, ֆուտբոլիստների միության և ակումբի ցանկացած խտրականության դեմ վարվող քաղաքականության պայմաններին,
– չկատարել որևէ գործողություն, որը կարող է խոչընդոտել կամ խափանել ակումբի գործունեության բնականոն ընթացքը, արատավորել ակումբի բարի համբավը, (հարցազրույցներ և այլն),
– չկատարել խաղադրույքներ և չծավալել նմանատիպ այլ գործունեություն ֆուտբոլային ասպարեզում:

2. Պայմանագիրը պետք է սահմանի դրույթ, ըստ որի ֆուտբոլիստը պարտավորվում է ղեկավարվել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՀՖՖ-ի և Ակումբի ներքին կանոնադրություններով և կանոնակարգերով:
3. Ֆուտբոլիստի և ակումբի բժշկի տարակարծության դեպքում ֆուտբոլիստն իրավունք ունի ստանալու այլընտրանքային մասնագետի եզրակացություն: Տարբեր կարծիքների դեպքում երկու կողմերը համաձայնվում են ընդունել երրորդ՝ անկախ կարծիքը, որը դառնում է պարտադիր:

## Հոդված 4. Հարկային պարտավորություններ

Պայմանագրում պետք է նախատեսված լինեն դրույթներ, որոնք վերաբերում են պայմանագրից բխող հարկային պարտավորությունները կատարելուն:

## Հոդված 5. Իմիջային իրավունք

1. Ֆուտբոլիստը և ակումբը պետք է պայմանավորվեն ֆուտբոլիստի իմիջային իրավունքների օգտագործման վերաբերյալ:
2. Ֆուտբոլիստը, որպես կանոն, կարող է օգտագործել իր իմիջային իրավունքները (եթե կոնֆլիկտ չկա ակումբի հովանավորների/գործընկերների հետ), մինչդեռ ակումբը կարող է օգտագործել ֆուտբոլիստի իմիջային իրավունքները որպես ամբողջ թիմի մի մաս:

## Հոդված 6. Վարձակալություն

Պայմանագիրը պետք է նախատեսի անհրաժեշտության դեպքում ֆուտբոլիստին այլ ակումբ վարձակալությամբ տեղափոխելու պայմանների վերաբերյալ դրույթներ ՝ համաձայն գործող կանոնակարգերի:

## Հոդված 7. Հակախթանիչներ

Պայմանագիրը պետք է ֆուտբոլիստի և ակումբի պարտականությունների մեջ ներառի հակախթանիչային կանոնակարգերին անխտիր ենթարկվելու վերաբերյալ դրույթներ:

## Հոդված 8. Պայմանագրի լուծումը

1. Պայմանագիրը պետք է սահմանի դրույթ առ այն, որ այն դեպքում, երբ ֆուտբոլիստը կորցրել է աշխատունակությունը աշխատանքային խեղման /վնասվածք/ հետևանքով, որը ստացել է մարզումների, հավաքների, խաղերի կամ մրցուղևորության ժամանակ, նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրն առանց ֆուտբոլիստի համաձայնության չի կարող լուծվել ակումբի նախաձեռնությամբ մինչև ֆուտբոլիստի աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամության կարգի որոշումը:
2. Պայմանագիրը պետք է պայմաններ նախատեսի ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի համապատասխան կանոնադրությունների և կանոնակարգերի համաձայն պայմանագիրը վաղաժամկետ լուծելու վերաբերյալ:

## Հոդված 9. Կոլեկտիվ պայմանագիր

Ակումբն ու ֆուտբոլիստը պարտավոր են կատարելու նախապես համաձայնեցված և ամբողջությամբ ստորագրված կոլեկտիվ պայմանագրի դրույթները:

## Հոդված 10. Անձնական տվյալների մշակումը

1. Պայմանագիրը պետք է պարունակի դրույթներ առ այն, որ ֆուտբոլիստը տալիս է իր

համաձայնությունը՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն ակումբի կողմից իր անձնական տվյալների մշակման վերաբերյալ:

2. Միաժամանակ պայմանագիրը պետք է դրույթներ պարունակի առ այն, որ ակումբը պարտավորվում է պահպանել անձնական տվյալների գաղտնիությունը ինչպես անձնական տվյալները մշակելու հետ առնչվող ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո:
3. Ֆուտբոլիստի անձնական տվյալները մշակելիս՝ ակումբը պարտավորվում է կատարել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխում ամրագրված անձնական տվյալներ մշակողի պարտականությունները:

## Հոդված 11. Աշխատանքային պայմանագրի նվազագույն պահանջները չպահպանելու հետևանքները

1. Յուրաքանչյուր կողմ անձնական պատասխանատվություն է կրում սույն կանոնակարգով սահմանված պայմանագրի կայունության և պայմանագրի նվազագույն պահանջների պահպանման համար և կրում է այդ պահանջների չպահպանման բացասական հետևանքները:
2. ՎԼՊ-ն սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքերում իրավունք ունի կիրառելու այդպիսի խախտումների վերացման համապատասխան մեխանիզմներ:

## Հոդված 12. Եզրափակիչ դրույթներ

1. Պայմանագրի եզրափակիչ դրույթներում պետք է նշվեն՝

– կողմերի միջև առաջացած վեճերի կարգավորման եղանակները՝ ՀՀ գործող օրենսդրությանը, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի, և ՀՖՖ գործող կանոնադրություններին և կանոնակարգերին համապատասխան,
– նշում այն մասին, թե պայմանագրի որ տարբերակին է տրվում գերակայություն, եթե պայմանագիրը թարգմանվել է մեկից ավելի լեզուներով,
– պայմանագրի գաղտնիությունը, քանի դեռ ազգային օրենսդրությամբ կամ ֆուտբոլային կանոնակարգերով չի նախատեսվում դրույթների հրապարակումը,
– պայմանագրի օրինակների թիվը, ում են դրանք տրամադրվում,
– պայմանագրին կցված հավելվածների թիվը (առկայության դեպքում),
– նշում այն մասին, որ պայմանագրի որևէ դրույթի անվավերությունը չի հանգեցնում պայմանագրի մնացած դրույթների անվավերության,
– պայմանագրի դրույթները կարող են փոփոխվել միայն կողմերի գրավոր համաձայնությամբ:

Տիպային օրինակ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «__» . «______».202__թ.

………………………………………… (այսուհետ «Ակումբ»), ի դեմս գործադիր տնօրեն ……………………………………, որը գործում է «Ակումբ»-ի կանոնադրության հիման վրա՝ մի կողմից,………… և ՀՀ քաղաքացի ……………………………………………………………………………………… (այսուհետ «Ֆուտբոլիստ»)՝ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

Պայմանագրում պետք է նշվեն նաև այն անձանց տվյալները, ովքեր ներգրավված են եղել բանակցություններում կամ պայմանագրի կնքման գործընթացին (ֆուտբոլիստի օրինական ներկայացուցիչ, ֆուտբոլիստի գործակալ, թարգմանիչ և այլն): Առանց միջնորդի պայմանագիր կնքելու հանգամանքը ևս պետք է ամրագրվի պայմանագրում:

## 1. Հիմնական դրույթները

1.1 Սույն պայմանագրով «Ֆուտբոլիստ»-ը ընդունվում է Ակումբում աշխատանքի, պրոֆեսիոնալ կարգավիճակով:

1.2 «Ֆուտբոլիստ»-ի և «Ակումբ»-ի միջև փոխհարաբերությունները կարգավորվում են սույն պայմանագրով, ՀՀ գործող օրենսդրությամբ, «Ակումբ»-ի, ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ- ի, ՖԻՖԱ-ի կանոնադրություններով և կանոնակարգերով:

1.3 «Ակումբ»-ը, ուր աշխատում է ֆուտբոլիստը, հանդիսանում է նրա հիմնական աշխատավայրը:

1.4 «Ֆուտբոլիստ»-ի աշխատաժամանակի տևողությունը չնորմավորված է:

Աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը՝ ____________________:

## 2. «Ֆուտբոլիստ»-ի իրավունքները և պարտականությունները

2.1 «Ֆուտբոլիստ»-ը պարտավորվում է՝

2.1.1 ընդունել վերոգրյալ կանոնադրություններն ու կանոնակարգերը և իր աշխատանքային գործունեության ընթացքում ղեկավարվել դրանցով,

2.1.2 Ենթարկվել ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի ղեկավար մարմինների համապատասխան կանոնադրություններով և կանոնակարգերով՝ իրենց լիազորությունների շրջանակներում ընդունված որոշումներին, ինչպես նաև ենթարկվել ակումբի ներքին կանոնադրություններին ու կանոնակարգերին (ներառյալ անհրաժեշտության դեպքում Ակումբի Կարգապահական կանոնակարգին, որը մինչև պայմանագրի կնքումը ամբողջությամբ պետք է ներկայացվի ֆուտբոլիստին),

2.1.3 ներդնել իր ողջ ներուժը և մարզական ունակությունները ի շահ Ակումբի, կատարել հնարավորինը՝ Ակումբին աջակցելու և Ակումբի հեղինակությունը ամրապնդելու համար, խուսափել ամեն տեսակի գործողություններից, որոնք կարող են որևէ կերպ վնաս հասցնել Ակումբին, մասնավորապես, այն միջոցառումներից առաջ (ընթացքում), որոնց վերջինս մասնակցում է,

2.1.4 մասնակցել Ակումբի կողմից անցկացվող բոլոր խաղերին և մարզումներին, ֆուտբոլիստներին վերաբերող ցանկացած խորհրդակցության ու հանդիպման և մրցաշարերին նախապատրաստվելու նպատակով կազմակերպվող բոլոր միջոցառումներին: Սա անհրաժեշտ պայման է նույնիսկ այն դեպքում, երբ նրա մասնակցությունը խաղին որպես հիմնական կազմի ֆուտբոլիստ կամ պահեստային ֆուտբոլիստ չի դիտարկվում,
2.1.5 իր ֆուտբոլային գործունեության ընթացքում վնասվածք ստանալու կամ վատառողջ լինելու դեպքում անմիջապես հայտնել Ակումբի բժշկին, տեղեկացնել Ակումբի կողմից նշանակված համապատասխան անձին կամ մարմնին բժշկի կատարած փորձաքննության արդյունքների մասին: Եթե ֆուտբոլիստը 3 օրից հետո չի կարողանում վերականգնել իր ֆիզիկական կայուն վիճակը կամ առողջական վիճակի պատճառով անկարող է մասնակցել խաղերին և մարզումներին, ապա նա պարտավոր է ներկայացնել բժշկական տեղեկանք,
2.1.6 ընդունել ամբողջական մարզական և թերապևտիկ բուժման միջոցառումներ՝ հետևելով Ակումբի կողմից լիազորված անձի հրահանգներին՝ հաշվի առնելով ֆուտբոլիստի անհատական իրավունքները,
2.1.7 պայմանագրի գործողության ընթացքում խնամքով վերաբերվել Ակումբի կողմից տրամադրված սպորտային գույքին ու հանդերձանքին,
2.1.8 պահպանել վարքագծի բարոյական նորմերը՝ Ակումբի և ազգային ասոցիացիայի հեղինակությանը վնաս չհասցնելու համար, չտարածել Ակումբի ներքին հարցերին վերաբերող տեղեկատվություն եթե այն կարող է վնաս հասցնել Ակումբին,
2.1.9 պահպանել առողջ ապրելակերպ և ֆիզիկական պատրաստվածության բարձր մակարդակ: Բարեխղճորեն նախապատրաստվել Ակումբի կողմից անցկացվող բոլոր միջոցառումներին՝ հետևելով մարզչի՝ կենսակերպին վերաբերող հրահանգներին,
2.1.10 մարզական ճիշտ վարքագիծ ցուցաբերել հանդիպման կամ մարզումներում ներգրավված ցանկացած անձի նկատմամբ, մասնավորապես, առանց բողոքի արտահայտման հարգել խաղի ընթացքում մրցավարական խմբի կողմից ընդունված որոշումները,
2.1.11 առանց Ակումբի գրավոր թույլտվության չընդգրկվել որևէ ուրիշ թիմում, բանակցություններ չվարել այլ Ակումբների հետ իր տեղափոխության հարցերով, բացառությամբ «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» կանոնակարգով նախատեսված դեպքերի,
2.1.12 չկատարել խաղադրույքներ և չծավալել նմանատիպ այլ գործունեություն ֆուտբոլային ասպարեզում,
2.1.13 զերծ մնալ ֆուտբոլային այլ միջոցառումներին մասնակցելուց, որոնք իրական վտանգ են ներկայացնում և անցկացվում են ակումբի անվտանգության համակարգից դուրս,
2.1.14 ենթարկվել ֆուտբոլային մարմինների բոլոր հակախթանիչային կանոնակարգերին:

2.2 «Ֆուտբոլիստ»-ն իրավունք ունի՝
2.2.1 պահանջելու, որ Ակումբը ժամանակին վճարի սույն պայմանագրով (կամ հավելվածով) նախատեսված ամենամսյա աշխատավարձը,
2.2.2 պահանջելու, որ Ակումբը պատշաճ կերպով կատարի սույն պայմանագրով նախատեսված իր պարտականությունները,
2.2.3 ակումբի կողմից իր պարտականությունների կոպիտ խախտումների դեպքում դիմել

ՀՖՖ Վեճերի լուծման պալատ,

2.2.4 օգտվել վճարովի արձակուրդի իրավունքից՝ տարեկան առնվազն 20 աշխատանքային օր ժամանակահատվածով՝ ամենամյա նվազագույն արձակուրդ [պետք է հաշվի առնել, որ եթե աշխատանքը նկարագրվում է որպես չնորմավորված, ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն Աշխատողին պետք է տրամադրվի լրացուցիչ արձակուրդ], ինչը պետք է համաձայնեցված լինի Ակումբի խաղային և մարզումային ծրագրի հետ,

2.2.5 ակումբի բժշկի հետ տարակարծության դեպքում՝ ստանալու այլընտրանքային մասնագետի եզրակացություն: Տարբեր կարծիքների դեպքում երկու կողմերը համաձայնում են ընդունել երրորդ անկախ կարծիքը, որը դառնում է պարտադիր:

## 3. Ակումբի իրավունքները և պարտավորությունները

3.1 Ակումբը պարտավորվում է՝

3.1.1 ընդունել վերոգրյալ կանոնադրություններն ու կանոնակարգերը և ղեկավարվել դրանցով,

3.1.2 ենթարկվել ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի ղեկավար մարմինների համապատասխան կանոնադրություններով և կանոնակարգերով՝ իրենց լիազորությունների շրջանակներում ընդունված որոշումներին,

3.1.3 սույն պայմանագրի 6-րդ գլխով նախատեսված կարգով՝ ժամանակին վճարել աշխատավարձը, ինչպես նաև ֆուտբոլիստին տրվող այլ վճարումները կամ պարգևատրումները,

3.1.4 ապահովել մարզումների և ֆուտբոլային խաղերի կազմակերպումը համապատասխան մասնագետների ղեկավարությամբ, ինչպես նաև ֆուտբոլիստին՝ բժշկական և տեխնիկական բոլոր պահանջներին և պայմաններին համապատասխան մարզումային և խաղային հրապարակներով, մարզական հագուստով և գույքով, նաև այլ անհրաժեշտ կենցաղային հարմարություններով,

3.1.5 պահպանել ֆուտբոլիստի ամենամյա աշխատավարձը և այլ պարգևատրումները նրան Հայաստանի ազգային հավաքական ժամանակավորապես հրավիրելու դեպքում,

3.1.6 ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան ապահովագրել Ֆուտբոլիստին: Ապահովագրությունը պետք է ընդգրկի նաև այն ժամանակահատվածը, երբ Ֆուտբոլիստը, մարզումներ և խաղեր անցկացնելու համար գտնվում է ազգային հավաքականի կազմում,

3.1.7 ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան կատարել սույն պայմանագրից բխող հարկային պարտականությունները,

3.1.8 զերծ մնալ ֆուտբոլիստի նկատմամբ որևէ տեսակի խտրականության դրսևորումից,

3.1.9 ենթարկվել ֆուտբոլային մարմինների բոլոր հակախթանիչային կանոնակարգերին,

3.1.10 վարել և պահպանել ֆուտբոլիստի ստացած վնասվածքների վերաբերյալ համապատասխան գրառումներ (ներառյալ ազգային հավաքականում ստացված վնասվածքների)՝ միաժամանակ երաշխավորելով դրանց գաղտնիությունը,

3.1.11. պայմանագրում պարզաբանվում է Ակումբի առողջապահության և անվտանգության քաղաքականությունը, որը ներառում է մշտական բժշկական/ատամնաբուժական հետազոտություն, ինչպես նաև բուժում որակավորված անձնակազմի կողմից ֆուտբոլային պարտականությունները կատարելու ժամանակ: Սա նաև վերաբերում է հակադոպինգային կանխարգելմանը:

3.2 Ակումբն իրավունք ունի՝
3.2.1 պահանջելու ֆուտբոլիստից պատշաճ կերպով կատարելու սույն պայմանագրով, ինչպես նաև ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնադրություններով և կանոնակարգերով նախատեսված պարտականությունները,
3.2.2 ֆուտբոլիստի կողմից իր պարտականությունները կոպտորեն խախտելու դեպքում, պատասխանատվության ենթարկելու վերջինիս՝ համաձայն Ակումբի կողմից ընդունված կանոնակարգերի:

## 4. Անձնական, ոչ գույքային իրավունքներ

4.1 Ակումբը ճանաչում է ֆուտբոլիստի անձնական, ոչ գույքային իրավունքները: Ֆուտբոլիստը լիազորում է Ակումբին՝ օգտագործելու իր անձնական, ոչ գույքային իրավունքներն ընդհանուր շահի համար:
4.2 Այդ իրավունքների ընդհանուր օգտագործումը տեղի է ունենում Ակումբի և ֆուտբոլիստի միջև կնքված պայմանագրի հիման վրա:
Պայմանագրում պետք է հստակ ամրագրվեն այն իրավունքները, որոնք անմիջականորեն պատկանում են ֆուտբոլիստին, և նրանք, որոնք նա տրամադրում է Ակումբին, ընդհանուր շահերը ներկայացնելու համար:

## 5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ------------ և ավարտվում ------------------:
5.2 Պայմանագրի ժամկետի ավարտից հետո այն կարող է երկարացվել կողմերի համաձայնությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

## 6. Աշխատավարձը և պարգևատրումները

6.1 Ֆուտբոլիստին տրվում է ամենամսյա աշխատավարձ և պարգևատրումներ՝ համաձայն պայմանագրին կցված և նրա անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ի:
6.2 Աշխատավարձի և պարգևատրումների վճարման կարգն ու ժամկետը, ինչպես նաև այլ փոխհատուցումների վճարման կարգը նույնպես սահմանվում են նշված հավելվածով:

## 7. Պայմանագրի լուծումը

7.1 Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերի համաձայնությամբ:
7.2 Սույն պայմանագիրը կողմերից մեկի պահանջով կարող է լուծվել ՀՖՖ համապատասխան կոմիտեի որոշմամբ, միայն մյուս կողմի թույլ տված պայմանագրի էական խախտման դեպքում կամ ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի համապատասխան կանոնակարգերով նախատեսված դեպքերում և կարգով:
7.3 Եթե ֆուտբոլիստը մարզումների, հավաքների, խաղերի կամ մրցուղևորության ժամանակ ստացած աշխատանքային խեղման /վնասվածք/ պատճառով կորցրել է աշխատունակությունը, ապա նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը առանց ֆուտբոլիստի համաձայնության չի կարող լուծվել ակումբի նախաձեռնությամբ մինչև ֆուտբոլիստի աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամության կարգի որոշումը:

## 8. Վարձակալություն

8.1 Պայմանագիրը պետք է ներառի դրույթ նաև Ֆուտբոլիստի հնարավոր այլ Ակումբ վարձակալությամբ տեղափոխվելու պայմանների մասին, որը հնարավոր է բացառապես կողմերի համաձայնությամբ, գործող կանոնակարգին համապատասխան:

## 9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Կողմերի միջև առաջացած վեճերը ենթակա են կարգավորման անմիջական բանակցությունների միջոցով, ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում, ինչպես նաև ՀՖՖ, ՈՒԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի գործող կանոնադրություններին և կանոնակարգերին համապատասխան: Եթե բանակցությունները դրական արդյունք չեն տալիս, ապա վեճը ենթակա է լուծման ՀՖՖ-ի Վեճերի լուծման պալատի կողմից՝ վերջինիս կանոնակարգի դրույթներին համապատասխան:

9.2. Սույն պայմանագրի դրույթները կարող են փոխվել միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ, մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որն որպես անբաժանելի մաս կցվում է սույն պայմանագրին և ենթակա է գրանցման ՀՖՖ-ում՝ համաձայն գործող կանոնակարգերի:

9.3. Սույն պայմանագրի որևէ դրույթի անվավերությունը չի կարող անդրադառնալ մյուս դրույթների վավերությանը:

9.4. Սույն պայմանագիրը ենթակա է պարտադիր գրանցման ՀՖՖ-ում:

9.5. Սույն պայմանագրին են կցված թվով ...............հավելվածներ:

9.6. Պայմանագրի, ինչպես նաև կից հավելվածների բոլոր էջերը ենթակա են վավերացման կողմերի ստորագրություններով:

9.7. Սույն պայմանագիրը կազմված է 3 օրինակից՝ մեկական օրինակ Կողմերին և մեկ օրինակ ՀՖՖ-ին: Պայմանագրի երեք օրինակներից մեկը (կողմերի կողմից էջ առ էջ ստորագրված) Ակումբի կողմից ներբեռնվում է FMS-ի համապատասխան բաժին և/կամ ՀՖՖ պահանջով ներկայացվում բնօրինակ տեսքով:

9.8. Կողմերը պարտավոր են ապահովել սույն պայմանագրի դրույթների գաղտնիությունը:

| «Ակումբ» | «Ֆուտբոլիստ» |
| --- | --- |
| .................................................................... (կազմակերպության ամբողջական անվանումը) | .................................................................... (անուն, ազգանուն, հայրանուն) |
| .................................................................... (գտնվելու վայրի հասցե) | .................................................................... (հասցե) |
| .................................................................... (բանկային վավերապայմանները) | .................................................................... (անձն,. ում կողմից է տրված, երբ) |
| ՀՎՀՀ | |
| --------------------------------------------- Գործադիր տնօրեն՝ ----- ------------ | (քաղաքացիությունը) |
| ----------------------------------------------------------- Կ.Տ. (ստորագրություն) | .................................................................... (ստորագրություն) |

# ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏՀՀ-ՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՖԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

## ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

### Հոդված 1. Նպատակներ

1. Տրանսֆերների համադրման համակարգը (ՏՀՀ) ստեղծվել է ֆուտբոլային տրանսֆերային համակարգի նպատականերն իրականացնելու համար:
2. ՏՀՀ-ն ունի նաև հետևյալ նպատակները՝

ա) վերահսկել և կարգավորել ֆուտբոլիստների միջազգային տրանսֆերների ընթացակարգը
բ) ֆուտբոլային ղեկավար մարմիններին տրամադրել տեղեկատվություն ֆուտբոլային տրանսֆերային համակարգի վերաբերյալ
գ) մեծացնել միջազգային ֆուտբոլային տրանսֆերային համակարգի թափանցիկությունը, արդյունավետությունն ու վստահելիությունը
դ) հստակ տարանջատում դնել ֆուտբոլիստների միջազգային տրանսֆերների հետ կապված վճարումների միջև, և
ե) ապահովել անչափահաս ֆուտբոլիստների պաշտպանությունը:

### Հոդված 2. Գործունեության շրջանակ

1. Սույն հավելվածը կարգավորում է ՏՀՀ-ով իրականացվող ֆուտբոլիստների միջազգային տրանսֆերների ընթացակարգը:
2. Ասոցիացիաներն ու ակումբները պարտավոր են կիրառել ՏՀՀ համակարգը կազմակերպված ֆուտբոլում պրոֆեսիոնալ և սիրողական ֆուտբոլիստների տրանսֆերներն իրականացնելու նպատակով:
3. ՖԻՖԱ-ն ՏՀՀ ազատ մուտք գործելու իրավունք է տալիս ասոցիացիաներին և ակումբներին: ՏՀՀ-ում իրականացված գործողությունների համար ոչ ոք չի գանձվում:

## ԳԼՈՒԽ 2. ՏՀՀ ՕԳՏԱՏԵՐԵՐ

### Հոդված 3. Ընդհանուր դրույթներ

1. Ֆուտբոլիստների միջազգային տրանսֆերների շրջանակներում ՏՀՀ օգտատերերը իրավասու են գործողություններ իրականացնել ՏՀՀ-ում ակումբի կամ ասոցիացիայի անունից՝ ՖԻՖԱ-ի կողմից նրանց յուրաքանչյուրին տրված թույլտվություններին համապատասխան:
2. ՖԻՖԱ-ի Գլխավոր քարտուղարությունը իրավասու է կատարել սույն հավելվածով նախատեսված գործողություններ:

## Հոդված 4. ՏՀՀ մուտք գործելու ընթացակարգը

1. Միայն ՖԻՖԱ-ի կողմից լիազորված օգտատերերը կարող են ունենալ ՏՀՀ մուտք գործելու իրավունք:

Ասոցիացիաներ

2. Առաջին անգամ ՏՀՀ մուտք գործելու համար ասոցիացիան պետք է նշանակի առնվազն երկու ՏՀՀ օգտատեր, որոնք պետք է անցնեն վերապատրաստում ՖԻՖԱ-ի կողմից:
3. Ասոցիացիան կարող է ցանկացած ժամանակ նշանակել նոր ՏՀՀ օգտատեր: Նոր ՏՀՀ օգտատերը պետք է վերապատրաստվի ասոցիացիայի գործող և լիազորված ՏՀՀ օգտատիրոջ կողմից: Վերապատրաստումն ավարտելուց հետո ասոցիացիան պետք է ՏՀՀ մուտքագրի նոր օգտատիրոջ տվյալները՝ վերջինիս համար օգտահաշիվ բացելու նպատակով:

Ակումբներ

4. Առաջին անգամ ՏՀՀ մուտք գործելու համար ակումբը պետք է նշանակի առնվազն մեկ ՏՀՀ օգտատեր, ով պետք է վերապատրաստում անցնի այն ասոցիացիայի կողմից, որին անդամակցում է ակումբը: Վերապատրաստումն ավարտելուց հետո ասոցիացիան պետք է ՏՀՀ մուտքագրի նոր օգտատիրոջ տվյալները՝ վերջինիս համար օգտահաշիվ բացելու նպատակով:
5. Ակումբը կարող է ցանկացած ժամանակ նշանակել նոր ՏՀՀ օգտատեր: Նոր ՏՀՀ օգտատերը պետք է վերապատրաստվի ակումբի գործող և լիազորված ՏՀՀ օգտատիրոջ կողմից կամ, գործող ՏՀՀ օգտատերերի բացակայության պարագայում, այն ասոցիացիայի կողմից, որին ակումբն անդամակցում է: Վերապատրաստումն ավարտելուց հետո ասոցիացիան պետք է ՏՀՀ մուտքագրի նոր օգտատիրոջ տվյալները՝ վերջինիս համար օգտահաշիվ բացելու նպատակով:

## Հոդված 5. ՏՀՀ օգտատեր դառնալու անհրաժեշտ պայմանները

1. Իրավասու ՏՀՀ օգտատեր լինելու համար անհատը՝

ա) պետք է լինի համապատասխան ակումբի կամ ասոցիացիայի անմիջական աշխատակից: Աշխատակիցների բացակայության պարագայում կարող է թույլատրվել կամավորի կամ գործադիր մարմնի գրանցումը՝ որպես ՏՀՀ օգտատեր,

բ) պետք է վերապատրաստում անցնի համապատասխան ասոցիացիայի կամ ակումբի ՏՀՀ պատասխանատուի կողմից կամ ՏՀՀ էլեկտրոնային վերապատրաստման ուսուցման ծրագրի միջոցով,

գ) պետք է ունենա համակարգչային տարրական հմտություններ,

դ) պետք է լավ տիրապետի ՖԻՖԱ-ի հետևյալ պաշտոնական լեզուներից առնվազն մեկին (անգլերեն, ֆրանսերեն կամ իսպաներեն),

ե) պետք է անցնի ՖԻՖԱ-ի կողմից իրականացվող նախնական ստուգում՝ մասնավորապես ապահովելով, որ հավանական օգտատերը երբևիցե չի

ենթարկվել քրեական պատասխանատվության՝ կապված կազմակերպված հանցագործության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, կոռուպցիայի, կաշառակերության, փողերի լվացման, հարկերից խուսափելու, խարդախության, խաղերի մանիպուլյացիաների, դրամական միջոցների յուրացման, փոխակերպման, հավատարմության պարտականությունների խախտման, կեղծիքի, իրավական խախտման, սեռական բռնության, ծանր հանցանքների, ոտնձգությունների, երեխաների շահագործման կամ անչափահաս երիտասարդների թրաֆիքինգի կամ նմանատիպ այլ բաների հետ կապված:

գ) չի կարող միաժամանակ լինել մեկից ավելի կազմակերպության գործող ՏՀՀ օգտատեր,

է) չի կարող զբաղեցնել որևէ պաշտոն կամ զբաղվել այնպիսի գործունեությամբ, որը կարող է առաջացնել շահերի բախում,

ը) չի կարող լինել պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ

թ) չի կարող լինել ֆուտբոլային գործակալ

ժ) պետք է տրամադրի անձնական էլեկտրոնային հասցե (եթե հնարավոր է աշխատանքային), որն ընդհանուր օգտագործման չէ, և

ի) պետք է լինի 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր:

2. Ասոցիացիան իր իրավասության շրջանակներում կարող է սահմանել լրացուցիչ նվազագույն պահանջներ ՏՀՀ օգտատերերի համար:

# ԳԼՈՒԽ 3. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Հոդված 6. Ակումբների և ասոցիացիաների ընդհանուր պարտականությունները

1. Ակումբներն ու ասոցիացիաները պատասխանատու են իրենց համապատասխան ՏՀՀ օգտատերերի իրականացրած գործողությունների համար:
2. Ակումբներն ու ասոցիացիաները պետք է մշտապես՝

ա) գործեն բարեխղճորեն

բ) ենթարկվեն ՖԻՖԱ-ի կանոնադրությանն ու կանոնակարգերին

գ) տեղեկացնեն ՖԻՖԱ-ին ՖԻՖԱ-ի կանոնակարգերի ցանկացած խախտման մասին

դ) պահպանեն գաղտնապահություն ՏՀՀ-ում առկա բոլոր տվյալների նկատմամբ, կիրառեն գաղտնապահության ապահովման բարձր մակարդակ և օգտագործեն կոնֆիդենցիալ տվյալները միայն տրանսֆերների գործընթացն ավարտելու նպատակով, ինչի մեջ վերջիններս ուղղակիորեն ներգրավված են

ե) ապահովեն, որ միայն իրենց լիազորված ՏՀՀ օգտատերերը կարողանան մուտք գործել ՏՀՀ իրենց անունից

զ) ստուգեն ՏՀՀ-ն կանոնավոր պարբերականությամբ իրենց պարտականությունները պատշաճ և ժամանակին կատարելու նպատակով

է) առանց ուշացման ընթացք տան ՏՀՀ-ում սպասման մեջ գտնվող գործողություններին

ը) վստահեցնեն, որ տիրապետում են բոլոր անհրաժեշտ գիտելիքներին և ունեն

համապատասխան փորձ իրենց պարտականություններն իրականացնելու համար
թ) օգտագործեն ՏՀՀ-ն միայն ՖԻՖԱ-ի կանոնակարգերով ամրագրված նպատակներով
ժ) ապահովեն, որ լիազորված ՏՀՀ պատասխանատուների էլեկտրոնային հասցեները վավեր են և պարբերաբար թարմացվում են
ի) պահանջեն լիազորված ՏՀՀ օգտատիրոջ հաշվի ապաակտիվացումը, ով այլևս իրավասու չէ օգտագործել ՏՀՀ-ն իրենց անունից
լ) ապահովեն, որ մուտքագրված տեղեկատվությունը իրական է, ամբողջական և հստակ
խ) հետևեն, որ մուտքագրվող փաստաթղթերը համապատասխանում են պահանջվող փաստաթղթի տեսակին (օր.՝ տրանսֆերային համաձայնագրի բաժնում չի կարող մուտքագրվել աշխատանքային պայմանագիրը)։ Փաստաթղթերը պետք է մուտքագրվեն PDF ֆորմատով։
ծ) համակարգ մուտքագրեն փաստաթղթի թարգմանությունը կամ վերջինիս քաղվածքը (եթե դա պահանջում է ՖԻՖԱ-ի քարտուղարությունը) ՖԻՖԱ-ի պաշտոնական լեզուներից մեկով (անգլերեն, ֆրանսերեն կամ իսպաներեն)։

3. ՖԻՖԱ-ի Գլխավոր քարտուղարությունը ուսումնասիրում է միջազգային տրանսֆերների հետ կապված հարցերը՝ նպատակ ունենալովապահովել ակումբների ու ասոցիացիաների կողմից սույն հավելվածում ամրագրված իրենց պարտավորությունների կատարումը։ Ակումբներն ու ասոցիացիաները պետք է համագործակցեն ՖԻՖԱ-ի հետ, եթե վերջինս հետաքննություն սկսի ֆուտբոլիստների միջազգային տրանսֆերների և ակումբների ու ասոցիացիաների կողմից ՏՀՀ-ի օգտագործման վերաբերյալ։ Մասնավորապես, նրանք պետք է համագործակցեն փաստերի հավաստիությունն ապացուցելու նպատակով և հիմնավոր հարցման դեպքում սահմանված ժամկետներում ՖԻՖԱ-ին տրամադրեն պահանջվող փաստաթղթերը, տեղեկատվությունը և իրենց ձեռքի տակ գտնվող նյութերը։ Ավելին, կողմերը պարտավոր են ձեռք բերել և ներկայացնել նաև այն փաստաթղթերը, տեղեկատվությունը կամ նյութերը, որոնք չեն գտնվում իրենց տրամադրության տակ, սակայն վերջիններս պարտավոր են ձեռք բերել ՖԻՖԱ-ի կողմից հաստատված ժամկետներում։

## Հոդված 7. Ակումբների պարտականությունները

ՏՀՀ մուտք ունեցող ակումբները պետք է՝

ա) մշտապես ունենան առնվազն մեկ ՏՀՀ պատասխանատու
բ) ապահովեն իրենց կոնտակտային տվյալների (փոստային հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե) վավերականությունը և պարբերաբար թարմացնեն դրանք
գ) ապահովեն, որ իրենց բանկային հաշվեհամարը վավեր է և մշտապես թարմացվում է
դ) մուտքագրեն և հաստատեն տրանսֆերային տվյալները և որտեղ անհրաժեշտ է ապահովեն մուտքագրված տվյալների համապատասխանությունը (տե՛ս սույն հավելվածի Հոդված 10-ը)

ե) հայտարարագրեն միջազգային տրանսֆերի շրջանակում արված բոլոր վճարումները։

## Հոդված 8. Ասոցիացիաների պարտականությունները

1. Ասոցիացիաները պետք է՝

ա) վերահսկեն իրենց անդամ ակումբների գործունեությունը ՏՀՀ-ում և համոզվեն, որ այն համապատասխանում է սույն հավելվածի դրույթներին, իսկ հնարավոր խախտումների դեպքում անհապաղ տեղեկացնեն ՖԻՖԱ-ին
բ) մշտապես ունենան առնվազն երկու լիազորված ՏՀՀ պատասխանատուներ
գ) ապահովեն իրենց անդամ ակումբների շարունակական վերապատրաստումը ՏՀՀ-ից օգտվելու առնչությամբ
դ) ապահովեն, որ իրենց կոնտակտային տվյալների (փոստային հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե) վավերականությունը և պարբերաբար թարմացնեն դրանք
ե) ապահովեն, որ իրենց բանկային հաշվեհամարը վավեր է և մշտապես թարմացվում է
զ) մուտքագրեն իրենց անդամ ակումբների մարզումային կարգերը
է) ապահովեն, որ իրենց անդամ ակումբներն ու գրանցված ֆուտբոլիստներն ունեն ՖԻՖԱ-ի կոդ, և, անհրաժեշտության դեպքում ու անհապաղ, ստուգեն և մաքրեն իրենց ակումբների և գրանցված ֆուտբոլիստների հետ կապված կրկնօրինակ գրանցումները
ը) հաստատեն կամ մերժեն ՏՀՀ-ում նոր գրանցված ֆուտբոլիստներին (տե՛ս սույն հավելվածի Հոդված 13-ը)
թ) իրականացնեն միջազգային տրանսֆերային սերտիֆիկատի (ՄՏՍ) տրամադրման գործընթացը (տե՛ս սույն հավելվածի Հոդված 11-ը)
ժ) ՏՀՀ-ում չգրանցված և մուտք չունեցող ակումբների անունից մուտքագրեն սիրողական ֆուտբոլիստների տրանսֆերները (տե՛ս սույն հավելվածի Հոդված 10-ը), և
ի) պետք է մուտքագրեն մրցաշարերի, մրցաշրջանների և գրանցման ժամանակահատվածների ամսաթվերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը (տե՛ս սույն հավելվածի Հոդված 6-ը) տվյալ մրցաշրջանի առաջին խաղից առնվազն 12 ամիս առաջ ստորև ներկայացված մրցաշարերի տեսակների առնչությամբ՝

- Տղամարդկանց պրոֆեսիոնալ մրցաշարեր
- Կանանց պրոֆեսիոնալ մրցաշարեր
- Սիրողական մրցաշարեր (կանանց և տղամարդկանց)

2. Ասոցիացիան կարող է փոփոխել ՏՀՀ մուտքագրած գրանցման ժամանակահատվածների ամսաթվերը մինչև տվյալ գրանցման ժամանակահատվածների ուժի մեջ մտնելը։ Նշված փոփոխությունը պետք է ծանուցվի ՖԻՖԱ-ին։ Գրանցման ժամանակահատվածների մեկնարկից հետո ամսաթվերի փոփոխությունն արգելված է։

### Հոդված 9. ՖԻՖԱ-ի դերը

1. ՖԻՖԱ-ի Գլխավոր քարտուղարությունը՝

ա) օժանդակում է ՏՀՀ օգտատերերին տեխնիկական և կանոնակարգային բնույթի հարցերի պարզաբանման պարագայում
բ) կարգավորում է ՏՀՀ օգտատերերի մուտքի հարցերը
գ) ուսուցում և աջակցություն է տրամադրում ասոցիացիաներին և ակումբներին
դ) պատասխանատու է ակումբի կամ ասոցիացիայի դեմ ՏՀՀ-ում պատժամիջոցներ սահմանելու համար
ե) պատասխանատու է սույն հավելվածով սահմանված ցանկացած հատուկ գործողությունների կարգավորման համար
զ) պատասխանատու է ՏՀՀ օգտագործման հետ կապված հնարավոր խախտումների հետաքննության համար, և
է) սույն հավելվածի դրույթները խախտելու համար վարչական պատժամիջոցներ կիրառելու համար (տե՛ս սույն հավելվածի հոդված 17-ը)։

## ԳԼՈՒԽ 4. ՖՈՒՏԲՈԼԻՍՏԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

### Հոդված 10. Ակումբների կողմից տրանսֆերային տվյալների մուտքագրում

1. ՏՀՀ-ում տրանսֆեր մուտքագրելիս ակումբները պետք է մուտքագրեն տեղեկատվություն և օժանդակող փաստաթղթեր՝

ա) տվյալ տրանսֆերի տեսակի վերաբերյալ
բ) տեղափոխվող ֆուտբոլիստի վերաբերյալ
գ) տրանսֆերի մանրամասների և
դ)տրանսֆերի մեջ ներգրավված կողմերի վերաբերյալ։

2. Ակումբները պետք է նշեն՝

ա) տվյալ տրանսֆերը ֆուտբոլիստի ձեռքբերում (engaging player) կամ ֆուտբոլիստի ազատ արձակում (releasing player) է
բ) տվյալ տրանսֆերը իրականացվում է մշտական հիմունքներով թե վարձակալությամբ
գ) ֆուտբոլիստը նոր ակումբում գրանցվելու է որպես պրոֆեսիոնալ թե սիրողական կարգավիճակով
դ)եթե տրանսֆերը նախկինում կատարված վարձակալության տեսակ է, արդյոք այն
- վարձակալությունից վերադարձ է
- վարձակալության երկարաձգում
- վարձակալության վերափոխում մշտական տրանսֆերի
- վարձակալության ավարտ (ակումբների միջև կնքված վարձակալության պայմանագիրն ավարտվել է և ֆուտբոլիստի ու նախկին ակումբի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը ևս ավարտվել է)։

3. Տեղափոխվող ֆուտբոլիստի հետ կապված ակումբները, կախված տրանսֆերի տեսակից, պետք է ՏՀՀ մուտքագրեն հետևյալ տեղեկատվությունը՝

ա) նախկին ակումբում ֆուտբոլիստի կարգավիճակը (սիրողական թե պրոֆեսիոնալ)
բ) անուն, ազգանունը, քաղաքացիությունը (քաղաքացիությունները), ծննդյան ամսաթիվը և սեռը
գ) վարձակալության դեպքում՝ արդյոք ֆուտբոլիստը ակումբի կողմից մարզված ֆուտբոլիստ է (տե՛ս սույն կանոնակարգի 41-րդ սահմանումը) և արդյոք վարձակալությունը տեղի է ունենում նախկին ակումբի մրցաշրջանի ավարտից առաջ, որտեղ գրանցված ժամանակ լրանում է ֆուտբոլիստի 21-րդ տարեդարձը:
դ) ֆուտբոլիստի՝ նախկին ակումբի հետ կնքված աշխատանքային պայմանագրի ուժի մեջ մտնելու և ավարտի ամսաթվերը
ե) ֆուտբոլիստի՝ նոր ակումբի հետ կնքված աշխատանքային պայմանագրի ուժի մեջ մտնելու և ավարտի ամսաթվերը
զ) ֆուտբոլիստի ֆիքսված վարձատրության չափը, ինչպես նշված է նոր ակումբի հետ ֆուտբոլիստի կնքած աշխատանքային պայմանագրում
է) ֆուտբոլիստի՝ նախկի ակումբի հետ կնքած աշխատանքային պայմանագրի լուծման պատճառը

4. Տրանսֆերային տվյալների առնչությամբ, ակումբները, կախված տրանսֆերի տեսակից, պետք է համակարգ մուտքագրեն հետևյալ տեղեկատվությունը՝

ա) արդյոք առկա է տրանսֆերային համաձայնագիր նախկին ակումբի հետ. սա նշանակում է, որ համաձայնագրով ակումբը հրաժարվում է մարզումային փոխհատուցում ստանալու իր իրավունքից սույն հավելվածի Հոդված 10-ի 4դ կետով սահմանված այլ վճարումներ ստանալու ակնկալիքով:
բ) տրանսֆերային համաձայնագրի կնքման ամսաթիվը
գ) վարձակալության պայմանագրի ուժի մեջ մտնելու և ավարտի ամսաթվերը
դ) արդյոք տրանսֆերն իրականացվում է ներքոնշյալ որևէ վճարման դիմաց
- տրանսֆերի ֆիքսված գումար՝ ներառյալ մաս առ մաս վճարումների գումարն ու վճարման ամսաթիվը (եթե առկա են)
- ֆուտբոլիստին ազատ արձակելու/ գնելու գումար (release/buy-out fee)՝ ներառյալ մաս առ մաս վճարումների գումարն ու վճարման ամսաթիվը (եթե առկա են)
- տրանսֆերի պայմանական գումար՝ ներառյալ պայմանների մանրամասները
- ֆուտբոլիստի վերավաճառքից գումար (sell-on fee)՝ ներառյալ տոկոսները

ե) վճարման տարադրամի տեսակը
զ) ակումբի բանկային տվյալները, և
է) հայտարարություն՝ երրորդ կողմի՝ ֆուտբոլիստի տնտեսական իրավունքների տնօրինման ,և ազդեցության վերաբերյալ (տե՛ս սույն կանոնակարգի Հոդված $18^1$ և $18^2$ )

5. Տրանսֆերի մեջ ներգրավված կողմերի առնչությամբ, ակումբները պետք է մուտքագրեն հետևյալ տեղեկատվությունը՝

ա) ֆուտբոլիստի նախկին ակումբը
բ) ֆուտբոլիստի նախկին ասոցիացիան

գ) ֆուտբոլիստի նոր ակումբը
դ) ֆուտբոլիստի նոր ասոցիացիան
ե) ակումբի ֆուտբոլային գործակալի անունն ու ծառայության վճարի չափը,և
զ) ֆուտբոլիստի ֆուտբոլային գործակալի անունն ու ծառայության վճարի չափը:

6. Կախված տվյալ տրանսֆերի տեսակից՝ ակումբները պարտավոր են բեռնել ՏՀՀ մուտքագրած տեղեկատվության իսկությունը հաստատող հետևյալ պարտադիր փաստաթղթերը:

ա) Նոր ակումբը պարտավոր է բեռնել՝
- ֆուտբոլիստի ինքնությունը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ)
- ֆուտբոլիստի կնքած վերջին պայմանագրի ավարտի ամսաթվի ապացույցն ու վերջինիս լուծման պատճառը
- նոր ակումբի հետ կնքած ֆուտբոլիստի աշխատանքային պայմանագիրը, և
- նոր և նախկին ակումբների միջև կնքված տրանսֆերային համաձայնագիրը (մշտական գրանցման կամ վարձակալության դեպքում): Անհրաժեշտության դեպքում, կատարված ցանկացած փոփոխության պատճենը պետք է ևս բեռնվի ՏՀՀ:

բ) Նախկին ակումբը պարտավոր է բեռնել՝
- երրորդ կողմի հետ կնքած համաձայնագիրը, եթե առկա է երրորդ կողմի՝ ֆուտբոլիստի տնտեսական իրավունքների տնօրինում (տե՛ս սույն հավելվածի Հոդված 10-ի 4է կետը), և
- ապացույց վարձակալությունների դեպքում, որ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը ակումբի կողմից մարզված ֆուտբոլիստ է (տե՛ս սույն հավելվածի հոդված 10-ի 3գ կետը):

7. Համապատասխան տեղեկատվությունն ու բոլոր պարտադիր փաստաթղթերը ՏՀՀ մուտքագրելուց հետո, ակումբը (ակումբները) պարտավոր է առանց հետաձգելու և մինչև նոր ասոցիացիայի գրանցման ժամանակահատվածի ավարտը հաստատել տրանսֆերը ՏՀՀ-ում (հաշվի առնելով սույն կանոնակարգի Հոդված 6-ի առաջին կետը):
8. Տրանսֆերային համաձայնագրի առկայությամբ միջազգային տրանսֆերների դեպքում (թե՛ մշտական գրանցման, թե՛ վարձակալության դեպքում) երկու ակումբն էլ պարտավոր է՝

ա) տրանսֆերային համաձայնագիրը կնքելուն պես իրարից անկախ ՏՀՀ մուտքագրել և հաստատել տվյալ տրանսֆեր
բ) ապահովել, որ ակումբների մուտքագրված տրանսֆերային տվյալներն իրար համապատասխանում են (matching)
գ) համագործակցել՝ տվյալների անհամապատասխանությունը (matching exception) շտկելու նպատակով:

9. Սույն հոդվածը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ ասոցիացիան ՏՀՀ է մուտքագրում սիրողական ֆուտբոլիստի տրանսֆեր ՏՀՀ մուտք չունեցող իր անդամ հանդիսացող ակումբի անունից:

## Հոդված 11. Ասոցիացիաների կողմից իրականացվող ՄՏՍ ընթացակարգը և ֆուտբոլիստների գրանցումը

1. Տրանսֆերային տվյալների մուտքագրումից (տե՛ս սույն կանոնակարգի Հոդված 10-ը) և անհրաժեշտության դեպքում ֆուտբոլիստի հաստատումից հետո (տե՛ս սույն հավելվածի Հոդված 13-ը)՝
   ա) նոր ասոցիացիան ծանուցում է ստանում ՏՀՀ-ով, որ տվյալ տրանսֆերը սպասում է ՄՏՍ հարցման
   բ) ծանուցումը ստանալուց հետո նոր ասոցիացիան ՏՀՀ-ով հարցում է կատարում նախկին ասոցիացիային ֆուտբոլիստի ՄՏՍ ստանալու նպատակով
   գ) ՄՏՍ հարցումը կատարվում է ամենաուշը նոր ասոցիացիայի գրանցման ժամանակահատվածի վերջին օրը, որպեսզի տվյալ տրանսֆերը տեղի ունենա գրանցման ժամանակահատվածի ընթացքում: Նոր ասոցիացիայի գրանցման ժամանակահատվածից դուրս կատարված ՄՏՍ հարցումը (հաշվի առնելով սույն կանոնակարգի Հոդված 6-ի առաջին կետով սահմանված բացառությունները) կհայտնվի վավերացման բացառության (validation exception) կարգավիճակում (տե՛ս սույն հավելվածի Հոդված 14-ի 1գ կետը)
   դ) անչափահաս ֆուտբոլիստների միջազգային տրանսֆերի դեպքում, ՄՏՍ հարցում կատարվում է միայն Ֆուտբոլային տրիբունալի կողմից անչափահասի համապատասխան դիմումի հաստատումից հետո կամ եթե տվյալ ֆուտբոլիստն ունի վավեր անչափահաս ֆուտբոլիստի գրանցման ընթացակարգից ազատում/ limited minor exemption (տե՛ս սույն կանոնակարգի Հոդված 19-ը):

2. Նախկին ակումբում պրոֆեսիոնալ կարգավիճակով գրանցված ֆուտբոլիստի միջազգային տրանսֆերի դեպքում ՄՏՍ-ի հարցումը ստանալուն պես՝ նախկին ասոցիացիան անմիջապես հարցում է կատարում նախկին ակումբին հավաստիանալու համար՝ արդյոք՝

   ա) ավարտվել է ֆուտբոլիստի հետ կնքած պայմանագրի գործողության ժամկետը, կամ
   բ) ֆուտբոլիստի հետ կնքած պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ վաղաժամ լուծվել է

3. ՄՏՍ հարցումը ստանալու 7 օրվա ընթացքում նախկինն ասոցիացիան պետք է՝

   ա) ուղարկի ՄՏՍ-ը նոր ասոցիացիային կամ
   բ) մերժի ՄՏՍ հարցումը, ՏՀՀ-ում նշի մերժման պատճառը և համակարգ բեռնի պատշաճ ստորագրված օժանդակող փաստաթուղթը: ՄՏՍ-ը կարող է մերժվել միայն 2 պատճառով՝
   - նախկին ակումբի և պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի միջև կնքված պայմանագիրը դեռևս ուժի մեջ է կամ
   - առկա չէ պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ վաղաժամ լուծելու մասին համաձայնագիր

4. Նոր ասոցիացիային ՄՏՍ ուղարկելիս նախկին ասոցիացիան պարտավոր է համակարգ մուտքագրել ֆուտբոլիստի վրա կիրառված հնարավոր կարգապահական պատժամիջոցներին վերաբերող համապատասխան փաստաթղթերը և, եթե կիրառելի է,

լայնամասշտաբ ազդեցություն ունենալու վերաբերյալ հաստատումը (տե՛ս սույն կանոնակարգի Հոդված 12-ը):

5. ՄՏՍ-ը ուղարկելուց հետո նոր ասոցիացիան պետք է հաստատի ստացումը, ՏՀՀ մուտքագրի ֆուտբոլիստի գրանցման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը և առանց հետաձգման գրանցի ֆուտբոլիստին իր էլեկտրոնային գրանցման համակարգում:
6. Եթե նոր ասոցիացիան ՄՏՍ հարցումն անելուց հետո 7 օրվա ընթացքում նախկին ասոցիացիայից պատասխան չի ստանում, ապա այն գրանցում է ֆուտբոլիստին նոր ակումբում և ՏՀՀ մուտքագրում ֆուտբոլիստի գրանցման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը:
7. Նոր ասոցիացիան հաստատում է ՄՏՍ-ի ստացումը (տե՛ս 5-րդ կետը) կամ ֆուտբոլիստի գրանցումը ՏՀՀ-ում (տե՛ս 6-րդ կետը), միայն այն դեպքում, եթե ֆուտբոլիստը գրանցվում է նոր ակումբում:
8. Եթե նախկին ասոցիացիան մերժում է ՄՏՍ հարցումը, ապա նոր ասոցիացիան կարող է՝

   ա) ընդունել մերժումը, որի դեպքում տրանսֆերը չեղյալ կհամարվի, կամ
   բ) վիճարկի մերժումը, որի դեպքում տրանսֆերը կհայտնվի վավերացման բացառության կարգավիճակում (validation exception): Այս պարագայում նոր ասոցիացիայի հարցման դեպքում, ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալը կարող է հաստատել ֆուտբոլիստի գրանցումը՝ չխախտելով սույն կանոնակարգի Հոդված 22-ով սահմանված ՖԻՖԱ հայց ներկայացնելու ընթացակարգին:

9. Ֆուտբոլիստն իրավունք չունի մասնակցելու իր նոր ակումբի պաշտոնական խաղերին, եթե՝

   ա) նոր ասոցիացիան չի հաստատել ՄՏՍ-ի ստացումը, չի մուտքագրել ֆուտբոլիստի գրանցման տեղեկատվությունը ՏՀՀ-ում և չի գրանցել ֆուտբոլիստին իր ֆուտբոլիստների գրանցման էլեկտրոնային համակարգում, կամ
   բ) 7 օրվա ընթացքում ՄՏՍ հարցմանը պատասխան չստանալուց կամ ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալի կողմից ֆուտբոլիստի գրանցման թույլտվություն ստանալուց հետո չի գրանցել տվյալ ֆուտբոլիստին իր ֆուտբոլիստների գրանցման էլեկտրոնային համակարգում և չի մուտքագրել ֆուտբոլիստի գրանցման վերաբերյալ տեղեկատվությունը ՏՀՀ համակարգում:

10. Վերոնշյալ 9-րդ կետով սահմանված բոլոր գրանցումներն ունեն նույն ուժը և հավասարապես վավեր են:

## Հոդված 12. Վճարումներ

1. Ակումբները պետք է հայտարարագրեն միջազգային տրանսֆերի շրջանակներում իրար միջև կատարված վճարումները (տե՛ս ՖԻՖԱ-ի Վճարումների վերահսկման մարմնի կանոնակարգի Հոդված 11-ի 4-րդ կետը): Վճարումը կատարելուց հետո, նոր ակումբը պետք է վճարումը կատարելուց հետո 30 օրվա ընթացքում ՏՀՀ մուտքագրի համապատասխան վճարման անդորրագիրը:

2. Եթե վճարման հարց այլևս առկա չէ, ակումբները պետք է պահանջեն անհապաղ ավարտել տրանսֆերային գործընթացը:

# ԳԼՈՒԽ 5. ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

## Հոդված 13. Ֆուտբոլիստների հաստատում

1. Եթե տեղափոխվող ֆուտբոլիստը ՏՀՀ համակարգում առկա չէ, առաջինը տվյալ տրանսֆերը մուտքագրող ակումբը պետք է ՏՀՀ մուտքագրի ֆուտբոլիստի տվյալները: Նույնը վերաբերում է նաև ասոցիացիաներին, որոնք ՏՀՀ մուտք չունեցող իրենց ակումբների անունից ՏՀՀ են մուտքագրում սիրողական ֆուտբոլիստների տրանսֆերները:
2. ՄՏՍ ընթացակարգը ՏՀՀ-ում մեկնարկում է այն բանից հետո, երբ նոր ստեղծված ֆուտբոլիստի տվյալները ստուգվում, անհրաժեշտության դեպքում շտկվում և հաստատվում են նախկին ասոցիացիայի կողմից: Ֆուտբոլիստին հաստատելով՝ նախկին ասոցիացիան հաստատում է, որ ֆուտբոլիստը վերջին անգամ գրանցված է եղել իր ասոցիացիայում և որ վերջինիս ինքնությունը հաստատող տվյալները (անուն, ազգանուն, քաղաքացիություն, ծննդյան ամսաթիվ և սեռ) ճշգրիտ են:
3. Նախկին ասոցիացիան չի հաստատում ՏՀՀ-ում նոր ստեղծված ֆուտբոլիստի տվյալները, եթե ֆուտբոլիստը իրականացվող տրանսֆերի ժամանակ գրանցված չէ իր ասոցիացիայում:
4. Ֆուտբոլիստի հաստատման ընթացակարգը պետք է իրականացվի առանց հապաղման:

## Հոդված 14. Վավերացման բացառություններ (Validation exceptions)

1. ՏՀՀ համակարգում վավերացման բացառություններ կարող են առաջանալ հետևյալ դեպքերում՝

   ա) Եթե ֆուտբոլիստի 18 տարեկանը լրացած չէ, և համապատասխան անչափահասի դիմումը դեռևս չի հաստատվել ՏՀՀ-ում
   բ) նոր ակումբն ունի նոր ֆուտբոլիստներ գրանցելու արգելք
   գ) նոր ակումբը և/ կամ նախկին ակումբը գերազանցել են վարձակալությամբ տրանսֆերների սահմանափակումները (տե՛ս սույն կանոնակարգի Հոդված 10-ը)
   դ) ՄՏՍ հարցման ամսաթիվը նոր ասոցիացիայի գրանցման ժամանակահատվածից դուրս է, և տվյալ դեպքում չի գործում սույն կանոնակարգի Հոդված 6-ի առաջին կետով սահմանված բացառությունը, կամ
   ե) ՄՏՍ հարցումը մերժվել է նախկին ասոցիացիայի կողմից, և նոր ասոցիացիան վիճարկել է մերժումը:

2. Վավերացման բացառություններով տրանսֆերներին միջամտելու հարցումները պետք է կատարվեն ՏՀՀ-ով: Ասոցիացիայի կողմից նման հարցում ստանալուց հետո, ՖԻՖԱ-ի Գլխավոր քարտուղարությունը գնահատում է հարցումը և, անհրաժեշտության դեպքում, այն ուղորդում է Ֆուտբոլային տրիբունալի Ֆուտբոլիստների կարգավիճակի պալատին:

Ցանկացած նման հարցում և հարցմանն օժանդակող փաստաթղթերըն պետք է տրամադրվեն ՖԻՖԱ-ի պաշտոնական լեզուներից մեկով՝ անգլերեն, ֆրանսերեն կամ իսպաներեն: Յուրաքանչյուր դեպք գնահատվում է անհատապես՝ իր էությամբ:

## Հոդված 15. Տրանսֆերի չեղարկումը

1. Ընդհանուր առմամբ, սխալ տեղեկատվություն պարունակող տրանսֆերը պետք է չեղարկվի:
2. Ակումբը (ակումբները) կամ սիրողական տրանսֆերի դեպքում ակումբի անունից հանդես եկող նոր ասոցիացիան կարող է մինչև ՄՏՍ հարցում կատարելը չեղարկել տրանսֆերը:
3. ՄՏՍ հարցումը կատարելուց հետո միայն համապատասխան ասոցիացիան կարող է չեղարկել տրանսֆերը ՏՃՀ-ում՝ նշելով չեղարկման պատճառը և հստակեցնելով ճշգրիտ տեղեկատվությունը:
4. Նման դեպքերում հակառակ ասոցիացիան ընդունում կամ վիճարկում է չեղարկման հայտը՝

ա) եթե վերջինս ընդունում է հայտը, տրանսֆերը չեղարկվում է
բ) եթե վերջինս վիճարկում է չեղարկումը, ապա պետք է ՏՃՀ մուտքագրի չեղարկումը հիմնավորող փաստաթուղթ և կապ հաստատի ՖԻՖԱ-ի Գլխավոր քարտուղարության հետ վեճը լուծելու նպատակով:

## Հոդված 16. Ընդհանուր դրույթներ

1. Սույն հավելվածի դրույթների խախտման դեպքում, ներառյալ ՏՃՀ պատասխանատուների կողմից իրականացված խախտումները, ակումբների և ասոցիացիաների նկատմամբ կկիրառվեն պատժամիջոցներ:
2. ՖԻՖԱ-ի Գլխավոր քարտուղարությունը պատասխանատու է սույն հավելվածով սահմանված դրույթների խախտումները ուսումնասիրելու համար:
3. ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեն կարող է պատժամիջոցներ կիրառել սույն հավելվածով սահմանված դրույթների խախտումների պարագայում՝ համաձայն ՖԻՖԱ-ի Կարգապահական կոդի:

## Հոդված 17. Վարչական պատժամիջոցների կիրառման ընթացակարգը

1. Չհակասելով ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեի իրավասությանը, ՖԻՖԱ-ի Գլխավոր քարտուղարությունը իրավասու է պատժամիջոցներ կիրառել վարչական պատժամիջոցների ընթացակարգի շրջանակներում, ինչպես սահմանված է ստորև:
2. Վարչական պատժամիջոցների ընթացակարգը վերաբերում է սույն հավելվածի խախտումներին, որոնք հիմնականում տեխնիկական և վարչական բնույթ են կրում:
3. Վերոնշյալ խախտման հայտաբերման դեպքում, գործում է հետևյալ ընթացակարգը՝

ա) ՖԻՖԱ-ի Գլխավոր քարտուղարությունը կապ կհաստատի ասոցիացիայի կամ ակումբի հետ խախտումը բացահայտելու, սահմանված վերջնաժամկետում

տեսակետը կամ այլ համապատասխան տեղեկատվությունը ստանալու և, անհրաժեշտության դեպքում, անհամապատասխան վարքագիծը շտկելու համար:
բ) Ասոցիացիայի կամ ակումբի տեսակետը կամ համապատասխան տեղեկատվությունը ստանալուց կամ սահմանված վերջնաժամկետում այն չստանալուց հետո, ՖԻՖԱ-ի Գլխավոր քարտուղարությունը կարող է ուղարկել վարչական պատժամիջոցների գործադրման վերաբերյալ նամակ՝ պատժամիջոցներ կիրառելով ասոցիացիայի կամ ակումբի նկատմամբ:
գ) Ներգրավված կողմը կարող է ընդունել պատժամիջոցը կամ մերժել այն և պահանջել կարգապահական վարույթ սկսել ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեի առջև: Եթե ներգրավված կողմը ընդունում է պատժամիջոցը, ապա վերջինս ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:
դ) Եթե ներգրավված կողմն ընդունում է պատժամիջոցը, կատարում է այն և սահմանված վերջնաժամկետում շտկում անհամապատասխան վարքագիծը, ապա գործը փակվում է:
ե) Եթե ներգրավված կողմը չի պատասխանում վարչական տույժի գործադրման նամակին, պատասխանում է ոչ հարիր ձևով և/ կամ չի շտկում վարքագիծը և/ կամ չի հետևում պատժամիջոցի կատարմանը, ապա հարցն ուղարկվում է ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեին գնահատման և որոշում կայացնելու համար:

4. Չհակասելով ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեի կողմից կիրառվող հետագա պատժամիջոցներին՝ վարչական պատժամիջոցների ընթացակարգի շրջանակներում կիրառվող տույժերը հետևյալն են՝

ա) զգուշացում
բ) նկատողություն
գ) տուգանք մինչև 30,000 շվեյցարական ֆրանկի չափով:

### Հոդված 18. Վարչական պատժամիջոցների կիրառման ընթացակարգը

Նամակները կամ որոշումները, որոնք ՖԻՖԱ-ի Գլխավոր քարտուղարության կողմից ծանուցվում են կողմերին ՏՀՀ միջոցով կամ ՏՀՀ-ում որևէ կողմի տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեով, համարվում են կապի վավեր միջոց և բավարար են ժամկետներ սահմանելու համար:

## ԳԼՈՒԽ 6. ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

### Հոդված 1. Կանոններ

1. Ներքին տեղափոխության դեպքում ֆուտբոլիստները գրանցվում են ՀՖՖ-ում ՀՀ կիրառելի և վերաբերելի օրենսդրության և սույն կանոնակարգի դրույթներին համապատասխան: ՀՖՖ-ում գրանցված որևէ ակումբի ֆուտբոլիստ իրավունք չունի խաղալու մեկ այլ ակումբի կազմում, քանի դեռ նախկին ակումբը չի տվել իր գրավոր համաձայնությունը, իսկ նոր ակումբը չի գրանցել (վերագրանցել) տվյալ

ֆուտբոլիստին՝ համաձայն սույն կանոնակարգով սահմանված դրույթների:

2. Ներքին տեղափոխության դեպքում ֆուտբոլիստը պետք է գրանցվի (վերագրանցվի) նոր ակումբում սույն կանոնակարգի III գլխում և սույն հոդվածում սահմանված դրույթներին համապատասխան:
3. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում նախկին ակումբը կարող է համաձայնություն չտալ այդ տեղափոխությանը, եթե իր և ֆուտբոլիստի միջև պայմանագրային վեճ է ծագել: Այս դեպքում պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը, նախկին ակումբը և/կամ նոր ակումբը իրավասու են բողոք ներկայացնելու ՀՖՖ: Նման դեպքում, ՀՖՖ-ն 10 օրվա ընթացքում որոշում է կայացնում ֆուտբոլիստին գրանցելու (վերագրանցելու) և նրա նկատմամբ մարզական պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ: Ամեն դեպքում, պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի նախքան ֆուտբոլիստին գրանցելը, իսկ գրանցումը չպետք է խոչընդոտի պայմանագրի խզման հետևանքով առաջացած փոխհատուցում ստանալու իրավունքին:
4. Ֆուտբոլիստի և նախկին ակումբի միջև պարտք ու պահանջի առկայությունը չի կարող արգելք հանդիսանալ ֆուտբոլիստի ներքին տեղափոխության և վերագրանցման համար:
5. Ներքին տեղափոխության դեպքում գրանցման դիմումի հետ մեկտեղ պետք է ներկայացվեն մարզումային փոխհատուցման վճարը հաստատող փաստաթղթերը (վճարման հանձնարարականի պատճենը և ստացված գումարի պատճառի վերաբերյալ նախկին ակումբի կողմից լրացված ձևաթուղթը):
6. Ֆուտբոլիստի գրանցումը կարող է չեղյալ համարվել ՀՖՖ-ի Վեճերի լուծման պալատի որոշմամբ:

# ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄԱՐԶՈՒՄԱՅԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

## Հոդված 1. Մարզումային փոխհատուցումը

1. Ֆուտբոլիստի մարզման և ուսուցման գործընթացը տեղի է ունենում 12-23 տարեկան հասակում: Մարզումային փոխհատուցումը ենթակա է վճարման սույն կանոնակարգի Հոդված 20 և 21-ում նշված դեպքերում մինչև 23 տարեկան ֆուտբոլիստի համար՝ մինչև նրա 21 տարին լրանալը մարզման և ուսուցման համար կատարված ներդրումների հաշվարկով՝ այն պարագայում, երբ ակնհայտ չէ, որ ֆուտբոլիստն արդեն դադարեցրել է իր մարզումային գործընթացը մինչև 21 տարեկանը լրանալը: Նման դեպքում մարզումային փոխհատուցումը վճարվում է մինչև ֆուտբոլիստի 23 տարեկանը լրանալու օրացուցային տարվա ավարտը: Սակայն վճարման ենթակա գումարի հաշվարկը կատարվում է՝ սկսած 12 տարեկանից մինչև այն տարիքը, երբ հաստատվում է, որ ֆուտբոլիստն իրականում ավարտել է իր մարզումները:
2. Մարզումային փոխհատուցում վճարելու պարտավորությունը պայմանավորված չէ պայմանագրի խզման հետևանքով առաջացած որևէ պարտավորությամբ (այդ թվում նաև փոխհատուցմամբ):

## Հոդված 2. Միջազգային տրանսֆերի դեպքում պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցման վճարումը

1. Մարզումային փոխհատուցում պետք է վճարվի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին մարզած, կրթած ակումբին (ակումբներին)՝

   ա) եթե ֆուտբոլիստը ստորագրում է իր առաջին պրոֆեսիոնալ պայմանագիրը,

   բ) երբ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը տեղափոխվում է մի ակումբից մյուսը (պայմանագրի ընթացքում կամ ավարտից հետո) մինչև իր 23 տարեկանը լրանալու մրցաշրջանի օրացուցային տարվա ավարտը:

2. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի համար մարզումային փոխհատուցում չի վճարվում՝

   ա) եթե նախկին ակումբն առանց որևէ հիմնավոր դրդապատճառի խզել է պայմանագիրը (պահպանվում են նախորդ ակումբի իրավունքները),

   բ) եթե ֆուտբոլիստը տեղափոխվում է 4-րդ կարգի ակումբ,

   գ) եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը տեղափոխվելիս կրկին ստանում է սիրողական կարգավիճակ:

3. ՖԻՖԱ-ի Վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգով կարգավորվող դեպքերի համար մարզումային փոխհատուցման վճարումը պետք է կատարվի համաձայն ՖԻՖԱ-ի Վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգի:

## Հոդված 2[1]. Ներքին տեղափոխության դեպքում պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցման վճարումը

1. Մարզումային փոխհատուցում պետք է վճարվի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին մարզած, կրթած ակումբին (ակումբներին)՝

   ա) եթե ֆուտբոլիստը ստորագրում է իր առաջին պրոֆեսիոնալ պայմանագիրը,
   բ) երբ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը տեղափոխվում է մի ակումբից մյուսը (պայմանագրի ընթացքում կամ ավարտից հետո) մինչև իր 23 տարեկանը լրանալու օրացուցային տարվա ավարտը:

2. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի համար մարզումային փոխհատուցում չի վճարվում՝

   ա) եթե նախկին ակումբն առանց որևէ հիմնավոր դրդապատճառի խզել է պայմանագիրը (պահպանվում են նախորդ ակումբի իրավունքները),
   բ) եթե ֆուտբոլիստը տեղափոխվում է 4-րդ կարգի ակումբ,
   գ) եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը տեղափոխվելիս կրկին ստանում է սիրողական կարգավիճակ,
   դ) եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը տեղափոխվում է այլ ակումբ իր 23 տարեկանը լրանալու օրացուցային ավարտից հետո,
   ե) եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը չի մասնակցել կազմակերպված ֆուտբոլին տեղափոխությանը նախորդող առնվազն երկու մրցաշրջանների ընթացքում (միայն ներքին տեղափոխությունների դեպքում):
   զ) եթե ֆուտբոլիստը տեղափոխվում է մեկ ակումբից մյուսը պարտադիր զինծառայության մեջ գտնվելու ժամանակահատվածում:

3. Այն դեպքերում, երբ ֆուտբոլիստը սիրողական կարգավիճակով նախկին ակումբից տեղափոխվում է նոր ակումբ (որի ժամանակ նոր ակումբը վճարում է նախկին ակումբին հասանելիք մարզումային փոխհատուցումը) և իր առաջին պրոֆեսիոնալ պայմանագիրն է կնքում տվյալ նոր ակումբի հետ, ապա նոր ակումբը նախկին ակումբին չի վճարում առաջին պրոֆեսիոնալ պայմանագրի կնքմամբ պայմանավորված մարզումային փոխհատուցումը՝ կրկնակի վճարումից խուսափելու նպատակով:
4. ՀՖՖ-ի Վեճերի լուծման պալատը շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա իրավասու է քննել և ներքին տեղափոխությունների մարզումային կարգերի նվազագույն դրույքաչափով (տե՛ս Հավելված 6-ի 2-րդ սանդղակը) սահմանել այն ակումբների մարզումային փոխհատուցումները, որոնց նախաձեռնությամբ է լուծվել իրենց ակումբում մարզված պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի հետ պայմանագիրը, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ հրաժարումը պայմանավորված է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի ոչ մարզական կամ այլ անթույլատրելի վարքագծով: Սույն կետով նախատեսված հանգամանքների ապացուցման բեռը կրում է համապատասխան հանգամանքները վկայակոչող կողմը:

## Հոդված 2². Ներքին տեղափոխության դեպքում սիրողական ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցման վճարումը

1. Ներքին տեղափոխության դեպքում մարզումային փոխհատուցում պետք է վճարվի 12 տարին լրացած սիրողական ֆուտբոլիստին մարզած, կրթած ակումբին (ակումբներին)՝

   ա) եթե սիրողական ֆուտբոլիստը փոխում է իր կարգավիճակը (դառնումէ պրոֆեսիոնալ),
   բ) երբ սիրողական ֆուտբոլիստը տեղափոխվում է մի ակումբից մյուսը, մինչև իր 23 տարեկանը լրանալու օրացուցային տարվա ավարտը:

2. Սիրողական ֆուտբոլիստի համար մարզումային փոխհատուցում չի վճարվում՝
   ա) եթե ֆուտբոլիստի 12 տարին չի լրացել,
   բ) եթե ֆուտբոլիստը տեղափոխվում է 4-րդ կարգի ակումբ,

   գ) եթե ֆուտբոլիստը չի մասնակցել կազմակերպված ֆուտբոլին տեղափոխությանը նախորդող առնվազն երկու մրցաշրջանների ընթացքում,

   դ) եթե ֆուտբոլիստը տեղափոխվում է այլ ակումբ իր 23 տարեկանը լրանալու օրացուցային տարվա ավարտից հետո (նույնիսկ իր առաջին պրոֆեսիոնալ պայմանագիրը ստորագրելու դեպքում):

3. Սիրողական ֆուտբոլիստի համար մարզումային փոխհատուցում վճարվում է՝ անկախ այն հանգամանքից, թե տեղափոխությունը կատարվել է սիրողական ֆուտբոլիստի և/կամ ակումբի նախաձեռնությամբ:
4. Սիրողական ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցումը վճարելու պարտավորությունը որևէ պատճառաբանությամբ չի կարող դրվել նրա ծնողների և/կամ երրորդ անձի վրա:
5. Առանձին դեպքերում, երբ սիրողական ֆուտբոլիստի տեղափոխությունը հետևանք է նախկին ակումբի կողմից ոչ մարզական, հակամանկավարժական և այլ անթույլատրելի դրսևորումների, ՀՖՖ-ի Վեճերի լուծման պալատը իրավասու է որոշում կայացնելու մարզումային փոխհատուցում չվճարելու վերաբերյալ:
6. ՀՖՖ-ի Վեճերի լուծման պալատը շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա իրավասու է քննել և ներքին տեղափոխությունների մարզումային կարգերի նվազագույն դրույքաչափով (տե՛ս Հավելված 6-ի 2-րդ սանդղակը) սահմանել այն ակումբների մարզումային փոխհատուցումները, որոնք իրենց նախաձեռնությամբ հրաժարվել են իրենց ակումբում մարզված սիրողական ֆուտբոլիստների ֆուտբոլային ծառայություններից, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ հրաժարումը պայմանավորված է սիրողական ֆուտբոլիստի ոչ մարզական կամ այլ անթույլատրելի վարքագծի հետ: Սույն կետով նախատեսված հանգամանքների ապացուցման բեռը կրում է համապատասխան հանգամանքները վկայակոչող կողմը:

## Հոդված 3. Մարզումային փոխհատուցում վճարելու պարտավորությունը

1. Երբ ֆուտբոլիստն առաջին անգամ գրանցվում է իբրև պրոֆեսիոնալ, ապա նրան գրանցող ակումբը պարտավոր է 30-օրյա ժամկետում մարզումային փոխհատուցում վճարել բոլոր այն ակումբներին, որտեղ գրանցված է եղել ֆուտբոլիստը (համաձայն ֆուտբոլիստի անձնագրում նկարագրված կարիերայի պատմության)՝ սկսած նրա 12 տարին լրանալու մրցաշրջանից: Ակումբին (ակումբներին) վճարման ենթակա գումարները հաշվարկվում են համամասնության սկզբունքով՝ համաձայն տվյալ ակումբում ֆուտբոլիստի մարզման ժամանակահատվածի: Գրանցող ակումբը պարտավոր է վճարման հանձնարարագիրը/հանձնարարագրերը (փոխանցում) ներկայացնել ՀՖՖ վերը նշված 30-օրյա ժամկետում:
2. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում մարզումային փոխհատուցում պետք է վճարվի միայն նրա նախկին ակումբին՝ տվյալ ակումբում ֆուտբոլիստի արդյունավետ մարզման ժամանակահատվածի համար:

   ա) Այն ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում, ում առաջին պրոֆեսիոնալ պայմանագիրը կնքվել է վերջինիս մարզած, կրթած ակումբի հետ, նոր ակումբըպետք է նախկին ակումբին վճարի տվյալ ֆուտբոլիստի համար հասանելիք մարզումային փոխհատուցումը՝ տվյալ ֆուտբոլիստի թե՛ որպես պրոֆեսիոնալ և թե՛ որպես սիրողական կարգավիճակով մարզվելու ամբողջ ժամանակահատվածի համար:

3. Սիրողական ֆուտբոլիստին գրանցել ցանկացող ակումբը պարտավոր է մարզումային փոխհատուցում վճարել ֆուտբոլիստի նախկին ակումբին՝ տվյալ ակումբում ֆուտբոլիստի արդյունավետ մարզման ժամանակահատվածի համար: Վճարման հանձնարարագիրը (փոխանցում) ներկայացվում է ՀՖՖ գրանցման դիմումի հետ միասին էլեկտրոնային փոստի միջոցով:
4. Մարզումային փոխհատուցումը ենթակա է վճարման ՀՖՖ-ին մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրերի իրագործման նպատակով՝

   ա) ներքին տեղափոխության դեպքում, երբ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին առաջին անգամ գրանցող ակումբի և նրան մարզած, կրթած որևէ ակումբի (ակումբների) միջև կապ չի հաստատվում կամ այդ ակումբը (ակումբները) ի հայտ չի գալիս ֆուտբոլիստի գրանցման 3 ամիսների ընթացքում,

   բ) երբ ֆուտբոլիստին մարզած, կրթած ակումբը երկու անընդմեջ խաղաշրջանների ընթացքում դադարեցրել է ֆուտբոլային գործունեությունը և չի մասնակցում կազմակերպված ֆուտբոլին:

   գ) ներքին տեղափոխության դեպքում, երբ նոր ակումբը համաձայնության է գալիս տվյալ ֆուտբոլիստի նախկին ակումբի հետ վերջինիս տեղափոխության համար հասանելիք մարզումային փոխհատուցման գումարի շուրջ, այն է՝ նվազեցնելով հասանելիք փոխհատուցման իրական գումարը: Տվյալ դեպքում ՀՖՖ-ն իրավասու է

պահանջելու/ստանալու նվազեցված չափով մարզումային փոխհատուցման գումարը՝ մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրերի իրագործման նպատակով:

5. Փոխհատուցում ստանալու իրավունքը վերականգնվում է ֆուտբոլային գործունեությունը վերսկսելու դեպքում: Միջազգային տեղափոխության դեպքում (պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ) նախկին ակումբին հասանելիք մարզումային փոխհատուցումը ենթակա է վճարման ՀՖՖ-ին, եթե ՀՖՖ-ն ապացույց ներկայացնի առ այն, որ տվյալ ակումբը, որտեղ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը գրանցված է եղել և մարզվել, այդ ընթացքում դադարել է մասնակցել կազմակերպված ֆուտբոլին և (կամ) այլևս գոյություն չունի (օրինակ՝ սնանկության, լուծարման կամ անդամակցության դադարեցման պատճառով): Այդ փոխհատուցումը ՀՖՖ-ն պարտավոր է հատկացնել մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրերի իրագործմանը: Մարզումային փոխհատուցման բոլոր վճարումները պետք է կատարվեն միայն փոխանցման կարգով՝ հաշվեհամարից հաշվեհամար: Մարզումային փոխհատուցման կանխիկ վճարումներն ակումբների միջև արգելվում են:

## Հոդված 4. Մարզումային ծախսեր

1. Ֆուտբոլիստի մարզման և ուսուցման համար կատարված ներդրումների փոխհատուցման հաշվարկը կատարելու համար ասոցիացիան իր ակումբները դասակարգում է 4 միջազգային կարգերի՝ համաձայն ֆուտբոլիստների մարզման համար ակումբի կողմից կատարված ֆինանսական ներդրումների: Մարզումային ծախսերը սահմանվում են ըստ կարգերի և համապատասխանում են տարվա կտրվածքով մեկ ֆուտբոլիստի վրա կատարած ուղղակի ներդրումները բազմապատկելով «ֆուտբոլիստի գործոն»-ի միջին հաշվարկով: «Ֆուտբոլիստի գործոն»-ը ընդհանուր մարզվողների և պատրաստված պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների քանակի հարաբերակցությունն է: Այլ կերպ ասած՝ տարեկան մարզումային ծախսերը հաշվարկվում են ակումբի մանկապատանեկան բյուջեի և մարզվող ֆուտբոլիստներից պատրաստված պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների քանակի հարաբերակցությամբ: Միջազգային տրանսֆերի դեպքում մարզումային փոխհատուցումը հաշվարկելու նպատակով ակումբները, ըստ մարզումային ծախսերի, ՖԻՖԱ-ի կողմից դասակարգված են 4 կարգերի, որը հրապարակված է ՖԻՖԱ-ի վեբկայքում և սույն կանոնակարգի Հավելված 6-ում: Ակումբների միջազգային կարգերը նորացվում են յուրաքանչյուր տարվա վերջում: Ասոցիացիաները պարտավոր են պարբերաբար նորացնել ՏՀՀ մուտքագրած իրենց ակումբների մարզումային կարգերը:
2. Ներքին տեղափոխությունների համար ՀՖՖ ակումբները, ըստ մարզումային ծախսերի (դրույքաչափերի), ՀՖՖ-ի կողմից դասակարգված են ևս 4 կարգերի, որոնք նույնպես հրապարակված են սույն կանոնակարգի Հավելված 6-ում:
3. Պրեմիեր լիգայում հանդես եկող ակումբները ստանում են 1-ին կարգ: Հայաստանի Պրեմիեր լիգային մասնակցության իրավունք ձեռք բերած ակումբը (ները) ի սկզբանե ստանում է 2-րդ կարգ: 1 տարի շարունակ Հայաստանի Պրեմիեր լիգայում հանդես գալու պարագայում տվյալ ակումբը (ակումբները) ձեռք է բերում 1-ին կարգ: ՀՀ Առաջին խմբիառաջնությունում հանդես եկող ակումբները, ինչպես նաև ՀՖՖ ենթակայության տակ գտնվող ակադեմիաները և/կամ ֆուտբոլի դպրոցները (Ավանի ակադեմիան)

ստանում

են 2-րդ կարգ: Այն ակումբը, որը մրցաշրջանի արդյունքներով, մարզական չափանիշներով դուրս է մնում Հայաստանի Պրեմիեր լիգայից և հայտնվում է Առաջին խմբում, շարունակում է պահպանել իր 1-ին կարգը: Առաջին խմբում 1 տարի և ավելի մնալու դեպքում վերջինիս կարգը դառնում է 2-րդ: Այն ակումբը, որը մրցաշրջանի արդյունքներով մարզական չափանիշներով դուրս է մնում Առաջին խմբից, շարունակում է պահպանել իր 2-րդ կարգը: Այնուամենայնիվ, 1 տարի և ավել պրոֆեսիոնալ թիմ չունենալու դեպքում վերջինիս կարգը դառնում է 3-րդ: Այն մարզադպրոցները, ֆուտբոլային դպրոցները և/կամ հաստատությունները, որոնք ունեն 4-ից ավելի մանկապատանեկան թիմեր, ձեռք են բերում 3-րդ կարգ: Այն մարզադպրոցները, ֆուտբոլային դպրոցները և/կամ հաստատությունները, որոնց մանկապատանեկան թիմերի քանակը չի գերազանցում 4-ը, ստանում են 4-րդ կարգ:

4. Ակումբը, որը 3 տարի շարունակ չի զբաղվել կազմակերպված ֆուտբոլով, կորցնում է իր կարգը: Վերջինիս կարգը հանվում է ՀՖՖ գրանցումից և այդ ակումբում գրանցված ֆուտբոլիստների համար մարզումային փոխհատուցում չի վճարվում:

## Հոդված 5. Մարզումային փոխհատուցման հաշվարկը

1. Որպես կանոն, ֆուտբոլիստի նախկին ակումբին (ակումբներին) վճարվելիք մարզումային փոխհատուցումը հաշվարկելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն ներդրումները (ծախսերը), որոնք նոր ակումբը կկատարեր ֆուտբոլիստի վրա, եթե վերջինս մարզեր տվյալ ֆուտբոլիստին:
2. Երբ ֆուտբոլիստն առաջին անգամ գրանցվում է պրոֆեսիոնալ կարգավիճակով, վճարվելիք մարզումային փոխհատուցումը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ նոր ակումբի մարզումային ծախսերը բազմապատկելով մարզվելու տարիների ընդհանուր թվով, ֆուտբոլիստի 12 տարեկանը լրանալու մրցաշրջանից մինչև 21 տարեկանը լրանալու մրցաշրջանն ընկած ժամանակահատվածի համար: Հաջորդական տեղափոխությունների դեպքում մարզումային փոխհատուցումը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ նոր ակումբի մարզումային ծախսերը բազմապատկելով նախկին ակումբում մարզվելու տարիների ընդհանուր թվով:
3. Երիտասարդ ֆուտբոլիստների մարզումային փոխհատուցման անհիմն բարձր գումարներից խուսափելու համար, 12-15տ. ընթացքում (4 խաղաշրջան) նրանց մարզումային ծախսերը հաշվարկվում են 4-րդ կարգի ակումբների դրույքաչափի համապատասխան: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ ֆուտբոլիստի տեղափոխությունը կատարվում է մինչև նրա 18 տարին լրանալը, որի դեպքում 12-15տ. ընթացքում ֆուտբոլիստի փոխհատուցման գումարը հաշվարկվում է՝ ըստ նոր ակումբի կարգի դրույքաչափի:
4. Ըստ այդմ, ֆուտբոլիստին առաջին անգամ որպես պրոֆեսիոնալ գրանցելիս գրանցող ակումբը պարտավոր է մարզումային փոխհատուցում վճարել բոլոր այն ակումբներին, որոնք մարզել, կրթել են տվյալ ֆուտբոլիստին: Փոխհատուցումը հաշվարկվում է ակումբում գրացված ժամանակահատվածի համար հետևյալ կերպ՝

   ա) 12-ից մինչև 15 տարեկան դառնալու տարին՝ 4-րդ կարգի ակումբի դրույքաչափով,

   բ) 16-ից մինչև 21 տարեկան դառնալը՝ նոր ակումբի կարգին համապատասխան

դրույքաչափով:

5. Ներքին տեղափոխությունների դեպքում մարզումային փոխհատուցման վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ կարգով՝

   – եթե նախկին ակումբում ֆուտբոլիստի գրանցված լինելու ժամանակահատվածը տվյալ տարում կազմում է մինչև 92 օր, ապա փոխհատուցման գումարը հաշվարկվում է որպես նոր ակումբի կարգի համապատասխան տարեկան դրույքաչափի 1/4-ը:
   – եթե ֆուտբոլիստի գրանցման ժամանակահատվածը նախկին ակումբում տվյալ տարում կազմում է 93-ից 184 օր, ապա փոխհատուցման գումարը հաշվարկվում է որպես նոր ակումբի կարգի համապատասխան տարեկան դրույքաչափի 1/2-ը:
   – եթե ֆուտբոլիստի գրանցման ժամանակահատվածը նախկին ակումբում տվյալ տարում կազմում է 185-ից 276 օր, ապա փոխհատուցման գումարը հաշվարկվում է որպես նոր ակումբի կարգի համապատասխան տարեկան դրույքաչափի 3/4-ը:
   – եթե ֆուտբոլիստի գրանցման ժամանակահատվածը նախկին ակումբում տվյալ տարում կազմում է 277-ից 366 օր, ապա փոխհատուցման գումարը հաշվարկվում է որպես նոր ակումբի կարգի համապատասխան մեկ տարվա դրույքաչափ:

   Ամբողջությամբ ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցման գումարը հաշվարկվում է տարեկան գումարների գումարմամբ:
6. Երբ նախկին և նոր ակումբները պայմանավորվել են պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության վերաբերյալ, ապա տեղափոխման գումարը չի կարող լինել պակաս, քան մարզումային փոխհատուցման գումարը:
7. ՀՖՖ Վեճերի լուծման պալատը կարող է քննարկել վճարման ենթակա մարզումային փոխհատուցման գումարի չափին վերաբերող վեճերը և, ըստ իր հայեցողության, հստակեցնել այդ գումարը, եթե ակնհայտ է, որ այն անհամաչափ է քննվող դեպքին:

# ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

## Հոդված 1. Համերաշխության բաշխում

1. Եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստն իր պայմանագրի գործողության ընթացքում տեղափոխվում է, ապա տվյալ տեղափոխության ժամանակ նախկին ակումբին վճարվող ցանկացած փոխհատուցման գումարի 5%-ը (բացառությամբ նախկին ակումբին վճարված մարզումային փոխհատուցման) պետք է հանվի այդ փոխհատուցման ընդհանուր գումարից և նոր ակումբի կողմից, որպես համերաշխության գումար, բաշխվի բոլոր այն ակումբներին, որոնք տարիների ընթացքում զբաղվել են ֆուտբոլիստի մարզմամբ ու կրթմամբ:
2. Այս համերաշխության բաշխումն արտացոլում է այն տարիները (հաշվարկված համամասնորեն, եթե մեկ տարուց պակաս է), երբ ֆուտբոլիստը գրանցված է եղել համապատասխան ակումբում (ակումբներում) 12-23 տարեկանը լրանալու օրացուցային տարիների ընթացում՝ հետևյալ կարգով՝

| | |
|---|---|
| - 12 տարեկանը լրանալու օրացուցային տարի | ցանկացած փոխհատուցման 5%-ի 5%-ը |
| - 13 տարեկանը լրանալու օրացուցային տարի | ցանկացած փոխհատուցման 5%-ի 5%-ը |
| - 14 տարեկանը լրանալու օրացուցային տարի | ցանկացած փոխհատուցման 5%-ի 5%-ը |
| - 15 տարեկանը լրանալու օրացուցային տարի | ցանկացած փոխհատուցման 5%-ի 5%-ը |
| - 16 տարեկանը լրանալու օրացուցային տարի | ցանկացած փոխհատուցման 5%-ի 10%-ը |
| - 17 տարեկանը լրանալու օրացուցային տարի | ցանկացած փոխհատուցման 5%-ի 10%-ը |
| - 18 տարեկանը լրանալու օրացուցային տարի | ցանկացած փոխհատուցման 5%-ի 10%-ը |
| - 19 տարեկանը լրանալու օրացուցային տարի | ցանկացած փոխհատուցման 5%-ի 10%-ը |
| - 20 տարեկանը լրանալու օրացուցային տարի | ցանկացած փոխհատուցման 5%-ի 10%-ը |
| - 21 տարեկանը լրանալու օրացուցային տարի | ցանկացած փոխհատուցման 5%-ի 10%-ը |
| - 22 տարեկանը լրանալու օրացուցային տարի | ցանկացած փոխհատուցման 5%-ի 10%-ը |
| - 23 տարեկանը լրանալու օրացուցային տարի | ցանկացած փոխհատուցման 5%-ի 10%-ը: |

3. Ֆուտբոլիստին մարզող ակումբն իրավունք ունի ստանալու համերաշխության վճարի 5%-ը (դրա մասը՝ վերոնշյալ համամասնությամբ) հետևյալ դեպքերում.

   ա) եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը հիմնական կամ վարձակալության հիմունքներով տեղափոխվում է տարբեր ասոցիացիաների մի ակումբից մյուսը:

   բ) եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխությունը տեղի է ունենում միևնույն ասոցիացիայի երկու ակումբների միջև՝ հիմնական կամ վարձակալության հիմունքներով, պայմանով, որ ֆուտբոլիստին մարզող ակումբը պատկանում է մեկ այլ ասոցիացիայի:

4. Ներքին տեղափոխությունների դեպքում համերաշխության գումարի հաշվարկ և բաշխում չի իրականացվում:

## Հոդված 2. Վճարման ընթացակարգը

1. ՖԻՖԱ-ի վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգով չկարգավորվող դեպքերի պարագայում՝ նոր ակումբը պետք է վճարի համերաշխության գումարը ֆուտբոլիստին մարզող ակումբին (ակումբներին) ֆուտբոլիստի գրանցումից ոչ ուշ, քան 30 օրվա, իսկ հանգամանքներից կախված կամ հետաձգված վճարումների դեպքում՝ այդպիսի վճարումներից հետո 30 օրվա ընթացքում:
2. ՖԻՖԱ-ի վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգով չկարգավորվող դեպքերի պարագայում նոր ակումբը պատասխանատվություն է կրում համերաշխության գումարի հաշվարկման և բաշխման համար՝ համաձայն ֆուտբոլիստի անձնագրում նշված կարիերայի պատմության: Անհրաժեշտության դեպքում ֆուտբոլիստը պետք է աջակցի նոր ակումբին այս պարտավորությունների կատարման գործում:
3. ՖԻՖԱ-ի վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգով կարգավորվող դեպքերի պարագայում համերաշխության գումարի վճարումը պետք է կատարվի՝ համաձայն ՖԻՖԱ-ի՝ Վճարումները վերահսկող մարմնի վերաբերյալ կանոնակարգի:
4. Ասոցիացիան իրավունք ունի ստանալու իրեն անդամակցող ակումբին վճարվելիք համերաշխության գումարը, եթե վերջինս կարող է ապացույցներ ներկայացնել առ այն, որ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին մարզած և կրթած տվյալ ակումբը միևնույն ժամանակ դադարել է մասնակցել կազմակերպված ֆուտբոլին և/կամ այլևս գոյություն չունի, մասնավորապես, սնանկության, լուծարման կամ անդամակցության դադարեցման պատճառով: Այս համերաշխության գումարը պետք է օգտագործվի տվյալ ասոցիացիայում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրերի իրագործման նպատակով:
5. ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեն կարող է կարգապահական միջոցներ կիրառել այն ակումբների նկատմամբ, որոնք չեն կատարում սույն հավելվածով սահմանված պարտավորությունները:

# ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԸ

| Ակումբի անվանումը | կարգը | |
|---|---|---|
| | Միջազգային տրանսֆեր | Ներքին տեղափոխություն |
| «Փյունիկ» ՖԱ | 3 | 1 |
| «Ուրարտու» ՖԱ | 3 | 1 |
| «Ալաշկերտ» ՖԱ | 3 | 1 |
| «Շիրակ» ՖԱ | 3 | 1 |
| «Արարատ-Արմենիա» ՖԱ | 3 | 1 |
| Արարատ ՖԱ | 3 | 1 |
| «Նոա» ՖԱ | 3 | 1 |
| «ՖԱ Վան» | 4 | 1 |
| «ՖԱ Վեստ Արմենիա» | 4 | 1 |
| «Գանձասար» ՖԱ | 4 | 2 |
| «Լեռնային Արցախ» ՖԱ | 4 | 2 |
| «Սյունիք» ՖԱ | 4 | 2 |
| «Միկա» ՖԱ | 4 | 2 |
| «Նիկարմ» ՖԱ | 4 | 2 |
| «Անդրանիկ» ՖԱ | 4 | 2 |
| «Օնոր» ՍՊԸ | 4 | 2 |
| «Բենտոնիտ» ՖԱ | 4 | 2 |
| ՀՖՖ ենթակայության տակ գտնվող ակադեմիաներ և/կամ ֆուտբոլի դպրոցներ (Ավան, Վաղարշապատ) | 4 | 2 |
| Մարզադպրոցներ, ֆուտբոլային դպրոցներ և/կամ հաստատություններ, որոնք ունեն 4-ից ավելի մանկապատանեկան թիմեր | 4 | 3 |
| Մնացած բոլոր ակումբները, մարզադպրոցները, ֆուտբոլային դպրոցները, գյուղապետարանների և համայնքապետարանների թիմերը և/կամ այլ հաստատությունները | 4 | 4 |

**Մարզումային փոխհատուցման տարեկան դրույքաչափերը՝ ըստ կարգերի**

| Ակումբի կարգը | Միջազգային տրանսֆեր (եվրո) | Ներքին տեղափոփություն, 1-ին սանդղակ (դրամ) |
|---|---|---|
| 1-ին կարգ | 90 000 | 500 000 |
| 2-րդ կարգ | 60 000 | 300 000 |
| 3-րդ կարգ | 30 000 | 100 000 |

| | | |
|---|---|---|
| 4-րդ կարգ | 10 000 | 40 000 |

Ֆուտբոլիստների ներքին տեղափոխության ժամանակ մարզումային փոխհատուցման տարեկան դրույքաչափերը՝ սահմանված այն դեպքերի համար, երբ ակումբները իրենց նախաձեռնությամբ լուծում են իրենց մարզած պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի հետ պայմանագիրը և/կամ հրաժարվում իրենց մարզած սիրողական ֆուտբոլիստի ծառայություններից:

| Ակումբի կարգը | Ներքին տեղափոփություն,<br>2-րդ սանդղակ<br>(դրամ) |
|---|---|
| 1-ին կարգ | 80 000 |
| 2-րդ կարգ | 60 000 |
| 3-րդ կարգ | 40 000 |
| 4-րդ կարգ | 20 000 |

# ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՖՈՒՏԶԱԼԻ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

## Հոդված 1. Գործողությունների շրջանակը

1. Ֆուտզալի ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնները սույն կանոնակարգի անբաժանելի մասն են:
2. Սույն կանոնները հաստատում են ընդհանուր և պարտադիր դրույթներ ֆուտզալի ֆուտբոլիստների (այսուհետ նաև՝ ֆուտզալիստ) կարգավիճակի, կազմակերպված ֆուտբոլին մասնակցելու նրանց իրավունքի և տարբեր ասոցիացիաներին պատկանող ակումբների միջև նրանց տեղափոխության վերաբերյալ:
3. ՀՖՖ-ի և ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգերը հավասարապես վերաբերում են տղամարդկանց, կանանց, սիրողական և պրոֆեսիոնալ կարգավիճակ ունեցող ֆուտզալի ֆուտբոլիստներին, եթե սույն հավելվածում և ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի Հավելված 6-ում զետեղված որևէ տարամետ դրույթ չի նախատեսում ֆուտզալին վերաբերող մեկ այլ կանոն:
4. ՀՖՖ ակումբների միջև ֆուտզալի ֆուտբոլիստների տեղափոխությունը կարգավորվում է ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության սույն կանոնակարգի և ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտզալի բարձրագույն խմբի առաջնության անցկացման կանոնակարգի դրույթներով:

## Հոդված 2. Ֆուտզալի ֆուտբոլիստների ազատ արձակումը ՀՀ Ազգային հավաքականներում հանդես գալու համար

1. Սույն կանոնակարգի Հավելված 1-ի Հոդված 1² դրույթները պարտադիր են կիրառման ֆուտզալում:
2. Ֆուտբոլիստը և ֆուտզալի ֆուտբոլիստը, համապատասխանաբար՝ և՛ ֆուտբոլում, և՛ ֆուտզալում կարող են ներկայացնել միայն մեկ ասոցիացիա: Յուրաքանչյուր ֆուտբոլիստ, ով արդեն ներկայացրել է ինչ-որ ասոցիացիա ֆուտբոլի կամ ֆուտզալի ցանկացած կատեգորիայի պաշտոնական մրցաշարում (թե՛ ամբողջությամբ, թե՛ մասնակի) չի կարող հանդես գալ միջազգային խաղում այլ ասոցիացիայի ազգային հավաքականի կազմում: Սույն դրույթի վրա տարածվում են ՖԻՖԱ-ի կանոնադրության ընթացակարգերը կարգավորող կանոնակարգի Հոդված 9-ով սահմանված բացառությունները:

## Հոդված 3. Ֆուտզալի ֆուտբոլիստների գրանցում

1. Ակումբում պրոֆեսիոնալ կամ սիրողական կարգավիճակով հանդես գալու համար ֆուտզալի ֆուտբոլիստը պետք է գրանցված լինի ՀՖՖ-ում՝ համաձայն ՀՖՖ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի Գլուխ II-ի Հոդված 2-ի: Միայն գրանցված ֆուտզալի ֆուտբոլիստներն են իրավասու մասնակցել կազմակերպված ֆուտզալին: Ֆուտզալի ֆուտբոլիստը, գրանցվելով, համաձայնվում է

ենթարկվել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրություններին ու կանոնակարգերին:

2. Ֆուտզալի ֆուտբոլիստների գրանցման համար սահմանվում են հետևյալ ժամանակահատվածները՝ օգոստոսի 15-ից նոյեմբերի 7-ը և հունվարի 20-ից փետրվարի 17-ը:
3. Ֆուտզալի ֆուտբոլիստը միևնույն ժամանակահատվածում կարող է գրանցվել միայն մեկ ֆուտզալի ակումբում: Այնուամենայնիվ, ֆուտզալի ֆուտբոլիստը այս ժամանակահատվածում կարող է գրանցվել նաև մեկ ֆուտբոլային ակումբում: Ֆուտզալի և պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբները կարող են չպատկանել միևնույն ասոցիացիային:
4. Ֆուտբոլային ակումբի հետ պայմանագիր ունեցող պրոֆեսիոնալ ֆուտզալի ֆուտբոլիստը կարող է այլ պրոֆեսիոնալ պայմանագիր կնքել ֆուտզալի ակումբի հետ միայն իր հետ աշխատանքային պայմանագիր կնքած ֆուտբոլային ակումբից գրավոր համաձայնություն ստանալու դեպքում և հակառակը:
5. Ֆուտզալի ֆուտբոլիստները մեկ մրցաշրջանի ընթացքում կարող են գրանցվել առավելագույնը 3 ֆուտզալի ակումբներում: Այս ժամանակահատվածի ընթացքում ֆուտզալի ֆուտբոլիստը իրավասու է հանդես գալ 2 ակումբների պաշտոնական խաղերում: Ի բացառություն սույն կանոնի՝ ֆուտզալի ֆուտբոլիստը «մասամբ համընկնող մրցաշրջաններ» (այսինքն՝ երբ մրցաշրջանը սկսվում է ոչ թե ձմռանը/գարնանը, այլ՝ ամռանը/աշնանը) ունեցող ասոցիացիաների մի ֆուտզալի ակումբից մյուսը տեղափոխվելիս իրավունք ունի տվյալ մրցաշրջանի ընթացքում հանդես գալու երրորդ ֆուտզալի ակումբի պաշտոնական խաղերին, եթե ամբողջությամբ կատարել է իր պայմանագրային պարտավորությունները նախկին ակումբների նկատմամբ, և պայմանով, որ պահպանվեն գրանցման ժամանակահատվածների (Հոդված 6) և պայմանագրի նվազագույն երկարությանը (Հոդվածի 18-ի 2-րդ կետ) վերաբերող դրույթները:
6. Բոլոր դեպքերում պատշաճ ուշադրություն պետք է դարձվի մրցաշարի սպորտային միասնությանը: Մասնավորապես, ելնելով կոնկրետ անդամ ասոցիացիաների ներքին մրցաշարերի համապատասխան կանոնակարգերից, պաշտոնական խաղերի ժամանակ ֆուտզալի ֆուտբոլիստը չի կարող հանդես գալ միևնույն մրցաշրջանի ժամանակ նույն ազգային առաջնությունում կամ գավաթի մրցաշարում հանդես եկող ավելի քան երկու ակումբների անունից:

## Հոդված 4. Պայմանագրի դրույթների կատարումը

1. Ֆուտզալի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և ֆուտզալի ակումբի միջև կնքված պայմանագիրը կարող է սպառվել կամ փոխադարձ համաձայնությամբ վաղաժամ լուծվել:
2. Պայմանագրային կայունության ապահովմանը վերաբերող դրույթները ամրագրված են ՀՖՖ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի Հոդված 13-18$^{3}$-ում:

## Հոդված 5. Ֆուտզալի միջազգային տրանսֆերային սերտիֆիկատ

*5.1 Սկզբունքները*

1. Տվյալ ասոցիացիայի ֆուտզալի ակումբում գրանցված ֆուտզալի ֆուտբոլիստներն իրավունք ունեն գրանցվել մեկ այլ ասոցիացիայի ֆուտզալի ակումբում միայն այն դեպքում, երբ՝

   ա) նոր ասոցիացիան նախկին ասոցիացիային կատարել է ֆուտզալի միջազգային տրանսֆերային սերտիֆիկատի (ՖՄՏՍ) հարցում;

   բ) նախկին ասոցիացիան տրամադրել է ֆուտզալի միջազգային տրանսֆերային սերտիֆիկատը (ՖՄՏՍ);

   գ) նոր ասոցիացիան ստացել է միջազգային տրանսֆերային սերտիֆիկատը (ՖՄՏՍ);

   դ) նոր ասոցիացիան գրանցել է ֆուտբոլիստին իր էլեկտրոնային գրանցման համակարգում:

2. Վերոնշյալ սկզբունքը վերաբերում է ֆուտզալի պրոֆեսիոնալ և սիրողական ֆուտբոլիստների միջազգային բոլոր տեղափոխություններին:
3. Ֆուտզալի ֆուտբոլիստն իրավունք չունի հանդես գալու իր նոր ֆուտզալի ակումբում, քանի դեռ վերոնշյալ 1-ին պարբերության բոլոր պայմաններն (կիրառելի լինելու դեպքում) ապահովված չեն:
4. Մինչև 10 տարեկան ֆուտզալի ֆուտբոլիստների համար ՖՄՏՍ չի պահանջվում:
5. Ակումբներն ու ասոցիացիաները պարտավոր են մշտապես՝

   ա) գործել բարեխղճորեն
   բ) ենթարկվել ՖԻՖԱ-ի կանոնադրությանը և ՖԻՖԱ-ի բոլոր կանոնակարգերին, և
   գ) ապահովել ներկայացված ողջ տեղեկատվության ճշմարտացիությունը:

*<u>5.2 Տրանսֆերային գործընթաց. ՖՄՏՍ ընթացակարգը և ֆուտզալի ֆուտբոլիստների գրանցումը</u>*

1. Ֆուտզալի ֆուտբոլիստ գրանցելու համար ֆուտզալի նոր ակումբը դիմում է ներկայացնում իր ասոցիացիային վերջինիս կողմից սահմանված գրանցման ժամանակահատվածներից մեկի ընթացքում՝ հաշվի առնելով սույն կանոնակարգի Հոդված 6-ը:
   Համապատասխան դիմումին, անհրաժեշտության դեպքում, կցվում են.

   ա) ֆուտզալի նոր ակումբի և ֆուտզալիստի միջև կնքված աշխատանքային պայմանագրի պատճենը. և
   բ) ֆուտզալի նոր և նախկին ակումբների միջև կնքված տրանսֆերային համաձայնագրի պատճենը (թե՛ հիմնական տրանսֆերի, թե վարձակալության դեպքում):

2. Հայտը ստանալուն պես նոր ասոցիացիան պետք է անմիջապես հարցում կատարի նախկին ասոցիացիային տվյալ ֆուտզալի ֆուտբոլիստի ՖՄՏՍ-ը տրամադրելու նպատակով («ՖՄՏՍ հարցում»): ՖՄՏՍ հարցումը, անհրաժեշտության դեպքում, պետք է ներառի 5.2 կետի 1-ին պարբերությամբ սահմանված փաստաթղթերը:

3. ՖՄՏՍ-ի հարցում կարող է կատարվել ամենաուշը նոր ասոցիացիայի

համապատասխան գրանցման ժամանակահատվածի վերջին օրը, որպեսզի տեղափոխությունը տեղի ունենա տվյալ գրանցման ժամանակահատվածի ընթացքում:

4. Նախկին ֆուտզալի ակումբում պրոֆեսիոնալ կարգավիճակ ունեցող ֆուտզալի ֆուտբոլիտի միջազգային տեղափոխության դեպքում ՖՄՏՍ հարցումն ստանալուն պես նախկին ասոցիացիան անմիջապես հարցում է կատարում նախկին ակումբին և պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին՝ հավաստիանալու համար, թե արդյոք.
   ա) ավարտվել է ֆուտբոլիստի պայմանագրի գործողության ժամկետը,
   բ) վաղաժամ լուծումը կատարվել է փոխադարձ համաձայնությամբ; կամ
   գ) գոյություն ունի պայմանագրային վեճ:

5. ՖՄՏՍ հարցումն ստանալուց 7 օրվա ընթացքում նախկին ասոցիացիան պետք է՝
   ա) կա՛մ ՖՄՏՍ-ն ուղարկի նոր ասոցիացիային;
   բ) կա՛մ նոր ասոցիացիային գրավոր տեղեկացնի առ այն, որ ՖՄՏՍ-ը հնարավոր չէ ուղարկել, ինչը կարող է լինել միայն այն դեպքում, երբ.
   - Ֆուտզալի նախկին ակումբի և ֆուտզալի ֆուտբոլիստի միջև աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը չի ավարտվել; կամ
   - Պայմանագրի վաղաժամկետ լուծման վերաբերյալ փոխադարձ համաձայնություն առկա չէ:

   Վերոնշյալը վերաբերում է միայն այն ֆուտզալի ֆուտբոլիստների միջազգային տրանսֆերներին, ովքեր իրենց նախկին ակումբներում գրանցված են եղել պրոֆեսիոնալ կարգավիճակով:

6. Նոր ասոցիացիային ՖՄՏՍ ուղարկելիս նախկին ասոցիացիան պետք է նաև՝

   ա) կցի ֆուտզալի ֆուտբոլիստի ֆուտբոլային անձնագրի պատճենը,
   բ) նոր ասոցիացիային գրավոր ծանուցի ֆուտզալի ֆուտբոլիստի նկատմամբ գործող և դեռևս ամբողջությամբ չկիրառված կարգապահական տույժի մասին և, անհրաժեշտության դեպքում, դրանց երկարաձգման մասին՝ լայնամասշտաբ ազդեցություն ունենալու նպատակով (տե՛ս սույն կանոնակարգի Հոդված 12-ը); և
   գ) ՖՄՏՍ-ի պատճենը ներկայացնի ՖԻՖԱ-ին:

7. ՖՄՏՍ-ն տրամադրվում է անվճար՝ առանց որևէ պայմանի կամ ժամկետային սահմանափակման: Ցանկացած հակասող դրույթներն առոչինչ են:
8. ՖՄՏՍ-ի ստացման պես նոր ասոցիացիան պետք է գրանցի ֆուտբոլիստին իրենց էլեկտրոնային գրանցման համակարգում:
9. Եթե նախկին ասոցիացիան 30 օրվա ընթացքում չի պատասխանում ՖՄՏՍ հարցմանն, ապա նոր ասոցիացիան ֆուտզալի ֆուտբոլիստին անմիջապես գրանցում է նոր ֆուտզալի ակումբում ժամանակավոր հիմունքներով («ժամանակավոր գրանցում») և մուտքագրում ֆուտբոլիստի գրանցման վերաբերյալ համապատասխան տեղեկությունը ֆուտբոլիստների գրանցման ներքին էլեկտրոնային համակարգում: Ժամանակավոր գրանցումը դառնում է մշտական ՖՄՏՍ հարցումից մեկ տարի անց:
10. Նախկին ասոցիացիան ֆուտզալի ֆուտբոլիստի համար ՖՄՏՍ չի տրամադրում, եթե վերոնշյալ 4-րդ կետով սահմանված հանգամանքների հիմքով նախկին ֆուտզալի ակումբի և ֆուտզալի ֆուտբոլիստի միջև ծագել է պայմանագրային վեճ:

Այդ պարագայում ՖԻՖԱ-ն նոր ասոցիացիայի խնդրանքով կարող է բացառիկ դեպքերում ժամանակավոր միջոցներ ձեռնարկել: Այս առումով ՖԻՖԱ-ն հաշվի է առնում նախկին ասոցիացիայի կողմից ներկայացված, ՖՄՏՍ-ի մերժումը հիմնավորող փաստարկները: Եթե Ֆուտբոլային տրիբունալը թույլատրում է ժամանակավոր գրանցումը (տե՛ս Հոդված 23), ապա նոր ասոցիացիան գրանցում է ֆուտզալիստին: Ավելին, պրոֆեսիոնալ ֆուտզալիստը, նախկին և/կամ ֆուտզալի նոր ակումբն իրավունք ունեն հայց ներկայացնել ՖԻՖԱ՝ համաձայն Հոդված 22-ի: Ֆուտզալիստի ժամանակավոր գրանցման մասին որոշումը չպետք է վնասի նման հնարավոր պայմանագրային վեճի էությանը:

11. Նոր ասոցիացիան կարող է ֆուտզալիստին տրամադրել խաղալու համար ժամանակավոր իրավունք մինչև ընթացիկ մրցաշրջանի ավարտը՝ ֆաքսով կամ էլ. փոստով ուղարկված ՖՄՏՍ-ի հիման վրա: Եթե մինչև այդ ժամանակ ՖՄՏՍ-ի բնօրինակը չի ուղարկվում, ֆուտզալիստի խաղալու իրավունքը համարվում է վերջնական:
12. Վերոհիշյալ կանոններն ու ընթացակարգերն առանց տարբերության վերաբերում են ֆուտզալի պրոֆեսիոնալ և սիրողական ֆուտբոլիստներին, ովքեր, տեղափոխվելով իրենց նոր ֆուտզալի ակումբ, ձեռք են բերում այլ կարգավիճակ:

*5.3 Ֆուտզալի ֆուտբոլիստների վարձակալություն*

1. Վերոնշյալ կանոններն ու ընթացակարգերը կիրառվում են նաև ֆուտզալի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին մեկ ասոցիացիայի ֆուտզալի ակումբից մեկ այլ ասոցիացիայի ֆուտզալի ակումբ վարձակալությամբ տեղափոխվելու, ինչպես նաև վարձակալությունից իր հիմնական ֆուտզալի ակումբ վերադառնալու դեպքում:
2. Վարձակալության պայմանագրի պատճենը պետք է կցվի ՖՄՏՍ հարցմանը (տե՛ս Հոդված 5.2-ի 2-րդ պարբերությունը):
3. Վարձակալության ժամկետի ավարտից հետո տվյալ ֆուտզալի ակումբի ասոցիացիան, որը վարձավճարով բաց է թողել ֆուտզալի ֆուտբոլիստին, պետք է ՖՄՏՍ-ի պատասխան հարցում անի այն ասոցիացիային, որի ֆուտզալի ակումբում վարձավճարով գրանցված է տվյալ ֆուտզալիստը: Քանի դեռ ՖՄՏՍ գործընթացը չի ավարտվել, և ֆուտզալի ֆուտբոլիստին վարձավճարով բաց թողած ասոցիացիան չի վերագրանցել վերջինիս իրենց էլեկտրոնային գրանցման համակարգում, ֆուտզալի ֆուտբոլիստն իրավունք չունի հանդես գալու իր հիմնական ֆուտզալի ակումբում:

## Հոդված 6. Կարգապահական պատժամիջոցների կիրառումը

1. Ֆուտզալի ֆուտբոլիստի՝ ֆուտզալում ստացած որակազրկումը և այլ պատժամիջոցները (տե՛ս ՖԻՖԱ-ի Կարգապահական կանոնակարգի Հոդված 20- ի 1-ին և 2-րդ կետերը) ազդում են միայն նրա՝ ֆուտզալի խաղերի մասնակցության վրա: Համապատասխանաբար, ֆուտբոլում ֆուտբոլիստի նկատմամբ կիրառված որակազրկումը և այլ պատժամիջոցները պետք է ազդեն միայն նրա՝ ֆուտբոլային ակումբի խաղերին ունեցած մասնակցության վրա:
2. Ժամկետային որակազրկումը (որակազրկում որոշակի քանակությամբ օրերով և ամիսներով) ազդում է ֆուտբոլիստի մասնակցության վրա թե՛ ֆուտզալի և թե՛

ֆուտբոլային հանդիպումներին, անկախ այն հանգամանքից՝ խախտումը գրանցվել է ֆուտբոլում, թե ֆուտզալում:

3. Ասոցիացիան, որտեղ ֆուտբոլիստը գրանցված է, պարտավոր է ժամկետային պատժամիջոցի մասին տեղեկացնել մյուս ասոցիացիային, որտեղ տվյալ ֆուտբոլիստը կարող է գրանցված լինել, եթե ֆուտբոլիստը միաժամանակ գրանցված է երկու տարբեր ասոցիացիաներին պատկանող ֆուտզալի և ֆուտբոլային ակումբներում:
4. Նախկին ասոցիացիան ՖՄՏՍ տրամադրելիս պարտավոր է նոր ասոցիացիային գրավոր ծանուցել ֆուտզալի ֆուտբոլիստի նկատմամբ գործող և դեռևս ամբողջությամբ չկիրառված կարգապահական տույժի մասին և, անհրաժեշտության դեպքում, դրա երկարաձգման մասին՝ լայնամասշտաբ ազդեցություն ունենալու նպատակով (տե՛ս սույն կանոնակարգի Հոդված 12-ը):

## Հոդված 7. Անչափահասների պաշտպանությունը

Միջազգային տրանսֆեր թույլատրվում է միայն 18 տարին լրացած ֆուտբոլիստի դեպքում: Սույն կանոնին վերաբերող բացառությունները ամրագրված են ՀՖՖ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի Հոդված 19-ում:

## Հոդված 8. Մարզումային փոխհատուցումը

Սույն կանոնակարգի Հոդված 20-ում և Հավելված 4-ում ամրագրված, մարզումային փախհատուցմանը վերաբերող դրույթները չեն կիրառվում ֆուտզալի ակումբ և ֆուտզալի ակումբից ֆուտբոլիստների տեղափոխության ժամանակ:

## Հոդված 9. Համերաշխության մեխանիզմը

Սույն կանոնակարգի Հոդված 21-ում և Հավելված 5-ում ամրագրված, համերաշխության մեխանիզմին վերաբերող դրույթները չեն կիրառվում ֆուտզալի ակումբ և ֆուտզալի ակումբից ֆուտբոլիստների տեղափոխության ժամանակ:

## Հոդված 10. ՖԻՖԱ-ի իրավասությունը

1. Սույն հավելվածի դրույթները խախտելու դեպքում ակումբների և ասոցիացիաների նկատմամբ կկիրառվեն պատժամիջոցներ:
2. ՖԻՖԱ-ի Գլխավոր քարտուղարության պատասխանատվության տակ է գտնվում սույն հավելվածի ցանկացած դրույթի խախտման ուսումնասիրությունը:
3. ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեի պատասխանատվության տակ է գտնվում սույն հավելվածի ցանկացած դրույթի խախտման պարագայում պատժամիջոցների կիրառումը՝ համաձայն ՖԻՖԱ-ի Կարգապահական կանոնագրքի:
4. Չխոչընդոտելով աշխատանքային վեճերի առնչությամբ ֆուտզալի ֆուտբոլիստի, մարզչի, ասոցիացիայի կամ ակումբի՝ ընդհանուր իրավասության դատարան դիմելու իրավունքը, ՀՖՖ-ն իրավասու է քննել վեճերը՝ համաձայն սույն կանոնակարգի Հոդված 22-ով սահմանված կարգի:

5. Ֆուտբոլային տրիբունալը որոշում է կայացնում բոլոր վեճերի առնչությամբ՝ համաձայն սույն կանոնակարգի Հոդված 23-ով սահմանված կարգի:

## Հոդված 11. Սույն հավելվածում չնախատեսված դրույթները

Բոլոր այլ դեպքերը, որոնք նախատեսված չեն սույն հավելվածով, ենթակա են կարգավորման ՀՖՖ-ի և ՖԻՖԱ–ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգերով:

# ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՄԱՐԶԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

## Հոդված 1. Գործունեության շրջանակը

1. Սույն Հավելվածը սահմանում է մարզիչների և պրոֆեսիոնալ ակումբների կամ ասոցիացիաների միջև կնքված պայմանագրերի վերաբերյալ կանոնները:
2. Սույն Հավելվածը վերաբերում է այն մարզիչներին, ում՝

   ա) վճարում են ավելի շատ, քան իրենց մարզչական գործունեության համար կատարվող փաստացի ծախսերն են;
   բ) աշխատանքի է ընդունում պրոֆեսիոնալ ակումբը կամ ասոցիացիան

3. Սույն Հավելվածը հավասարապես կիրառելի է թե՛ ֆուտբոլի և թե՛ ֆուտզալի մարզիչների նկատմամբ:
4. Յուրաքանչյուր ասոցիացիա իր կանոնակարգում պետք է ներառի համապատասխան միջոցներ՝ մարզիչների և ակումբների կամ ասոցիացիաների միջև պայմանագրային կայունությունը պահպանելու նպատակով, միաժամանակ պատշաճ ուշադրություն դարձնելով և հարգելով ազգային օրենսդրության պարտադիր դրույթներն ու կոլեկտիվ պայմանագրերը:
5. Իգական սեռի ֆուտբոլիստներին վերաբերող Հոդված 18 կետ 10-ը և Հոդված 18³-ը հավասարապես վերաբերում են նաև իգական սեռի մարզիչներին, բացառությամբ Հոդված 18³-ի կետ 4-ի ա) և բ) ենթակետերի:

## Հոդված 2. Աշխատանքային պայմանագիրը

1. Մարզիչը պետք է գրավոր կնքված պայմանագիր ունենա ակումբի կամ ասոցիացիայի հետ:
2. Պայմանագիրը պետք է ներառի աշխատանքային պայմանագրի էական տարրեր, ինչպիսիք են՝ ի թիվս այլնի (inter alia), պայմանագրի առարկան, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի բնույթն ու կարգավիճակը, համաձայնեցված վարձատրությունը, պայմանագրի ժամկետը և յուրաքանչյուր կողմի ստորագրությունը:
3. Ֆուտբոլային գործակալի ծառայությունների մատուցման արդյունքում կնքված ցանկացած աշխատանքային պայմանագրում պետք է նշվի ֆուտբոլային գործակալի, նրա հաճախորդի (ֆուտբոլիստի կամ ակումբի) անունը, ՖԻՖԱ-ի արտոնագրի համարը և ստորագրությունը՝ համաձայն ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային գործակալների վերաբերյալ կանոնակարգի:
4. Պայմանագրի վավերականությունը պետք է կախված չլինի՝

   ա) մարզչին աշխատանքային թույլտվություն կամ կացության քարտ տրամադրելու գործընթացից,
   բ) հատուկ մարզչական արտոնագիր ունենալու պահանջի հետ, կամ
   գ) վարչական կամ կարգավորող բնույթ ունեցող այլ պահանջների հետ:

5. Աշխատանքի ընդունման գործընթացն ապահովելիս՝ ակումբներն ու ասոցիացիաները պետք է պատշաճ ուշադրությամբ գործեն և համոզվեն, որ մարզիչը համապատասխանում է աշխատանքի ընդունման անհրաժեշտ պահանջներին (օրինակ՝ անհրաժեշտ մարզչական արտոնագիր ունենալը) և կատարում է իր պարտականությունները:
6. Այն պայմանագրային դրույթները, որոնք ակումբին կամ ասոցիացիային լրացուցիչ ժամանակ են տրամադրում պայմանագրով վճարման ենթակա գումարները մարզչին վճարելու համար («Արտոնյալ ժամանակահատվածներ»), առոչինչ են: Այնուամենայնիվ, կոլեկտիվ պայմանագրերում ընդգրկված և ներպետական օրենսդրության համաձայն գործատուների ու աշխատակիցների ներկայացուցիչների կողմից տեղական մակարդակով համաձայնեցված արտոնյալ ժամանակահատվածները պետք է լինեն իրավաբանորեն պարտադիր և ճանաչված: Սույն դրույթի ուժի մեջ մտնելու պահին արդեն գործող պայմանագրերի վրա այս արգելքը չի տարածվում:

## Հոդված 3. Պայմանագրի դրույթների կատարումը

Պայմանագիրը կարող է կա՛մ սպառվել (երբ ավարտվում է պայմանագրի գործողության ժամկետը), կա՛մ լուծվել փոխադարձհամաձայնությամբ:

## Հոդված 4. Պայմանագրի լուծումը հիմնավոր դրդապատճառներով

1. Ցանկացած կողմ կարող է լուծել պայմանագիրն՝ առանց փոխհատուցում վճարելու, եթե առկա է հիմնավոր դրդապատճառ:
2. Կողմերից որևէ մեկի ցանկացած ոչ իրավաչափ վարքագծի ցուցաբերումը, որի նպատակն է ստիպել հակառակ կողմին լուծել պայմանագիրը կամ փոխել վերջինիս դրույթները, իրավունք է տալիս հակառակ կողմին հիմնավոր դրդապատճառով լուծել պայմանագիրը:

## Հոդված 5. Պայմանագրի լուծումը աշխատավարձի չվճարման հիմնավոր դրդապատճառով

1. Եթե ակումբը կամ ասոցիացիան, խախտելով սահմանված կարգը, առնվազն 2 ամիս շարունակ մարզչին չի վճարել աշխատավարձը պատշաճ ժամկետներում, վերջինս ձեռք է բերում պայմանագիրը լուծելու հիմնավոր դրդապատճառ՝ պայմանով, որ նա գրավոր կերպով ծանուցել և առնվազն 15 օրվա վերջնաժամկետ է տրամադրել պարտապան (դեբիտոր) ակումբին կամ ասոցիացիային՝ ֆինանսական պարտավորությունները կատարելու համար:
   Սույն դրույթի ուժի մեջ մտնելու պահին արդեն իսկ գործող աշխատանքային պայմանագրերի պարագայում կարող են հաշվի առնվել դրանցում առկա այլընտրանքային դրույթները:
2. Մարզչի ստացած ցանկացած վարձատրության դեպքում, որը ենթակա չէ վճարման ամսական հիմունքով, հաշվի է առնվում վերջինիս՝ երկու ամսվան համարժեք

վարձատրության չափը համամասնության սկզբունքով: Առնվազն երկու ամսվա վարձատրությանը համարժեք գումարի վճարման ուշացումը նույնպես կարող է պայմանագիրը լուծելու հիմնավոր դրդապատճառ հանդիսանալ մարզչի համար, եթե վերջինս գործել է պայմանագրի լուծման մասին ծանուցման՝ սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգի համաձայն:

3. Ներպետական օրենսդրության համաձայն՝ գործատուների ու աշխատակիցների ներկայացուցիչների կողմից տեղական մակարդակով համաձայնեցված կոլեկտիվ պայմանագրերը կարող են տարբերվել վերը նշված 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներից: Նշված համաձայնագրերի դրույթները գերակայում են:

## Հոդված 6. Առանց հիմնավոր դրդապատճառի պայմանագիրը լուծելու հետևանքները

1. Առանց հիմնավոր դրդապատճառի պայմանագիրը լուծած կողմը վճարում է փոխհատուցում:
2. Եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա պայմանագիրն առանց հիմնավոր դրդապատճառի լուծելու դեպքում փոխհատուցումը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

### Մարզչին վճարվող փոխհատուցումը

ա) Եթե մարզիչը իր նախկին պայմանագիրը լուծելուց հետո նոր պայմանագիր չի ստորագրել, որպես կանոն, փոխհատուցումը պետք է համարժեք լինի վաղաժամ լուծված պայմանագրի մնացորդային արժեքին:
բ) Եթե մարզիչը նոր պայմանագիր է ստորագրել որոշումը կայացնելու ժամանակ, ապա նոր պայմանագրի՝ վաղաժամ լուծված պայմանագրի դեռևս մնացած ժամանակահատվածին համապատասխանող արժեքը պետք է նվազեցվի վաղաժամ լուծված պայմանագրի մնացորդային արժեքից («Նվազեցված փոխհատուցում»): Ավելին, ժամկետանց պարտքերի հետևանքով պայմանագրի վաղաժամ լուծման դեպքում, ի լրումն Նվազեցված փոխհատուցման, մարզիչն իրավունք կունենա ստանալու երեք ամսվա աշխատավարձին համարժեք գումար («Հավելյալ փոխհատուցում»): Հատուկ դեպքերում Հավելյալ փոխհատուցման չափը կարող է հասնել մինչև առավելագույնը ամսական աշխատավարձի վեցապատիկին: Փոխհատուցման ենթակա ընդհանուր գումարը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել վաղաժամ լուծված պայմանագրի մնացորդային արժեքը:
գ) Ներպետական օրենսդրության համաձայն՝ գործատուների ու աշխատակիցների ներկայացուցիչների կողմից տեղական մակարդակով համաձայնեցված կոլեկտիվ պայմանագրերը կարող են տարբերվել վերը նշված սկզբունքներից: Նշված համաձայնագրերի դրույթները գերակայում են:

### Ակումբին կամ ասոցիացիային վճարվող փոխհատուցումը

դ) Փոխհատուցումը հաշվարկվում է պայմանագրի լուծման հետևանքով ակումբի կամ ասոցիացիայի կրած վնասների և ծախսերի հիման վրա՝ պատշաճ ուշադրություն դարձնելով, մասնավորապես, վաղաժամ լուծված պայմանագրով

կամ նոր պայմանագրով մարզչին վճարման ենթակա փոխհատուցմանն ու այլ վճարումներին, նախկին ակումբի կողմից վճարված վարձատրություններին ու կատարված ծախսերին (նախկին պայմանագրի գործողության ընթացքում մարած/վճարած գումարներ), և սպորտի առանձնահատկության սկզբունքին:

3. Փոխհատուցման իրավունքը չի կարող փոխանցվել երրորդ կողմին:
4. Պատժամիջոցներ են կիրառվում ՖԻՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրությանն ու կանոնակարգերին ենթակա այն անձանց նկատմամբ, ովքեր փորձում են իրենց գործողություններով պայմանագրի լուծում հրահրել մարզչի և ակումբի կամ ասոցիացիայի միջև:

## Հոդված 7. Ժամկետանց վճարումներ

1. Ակումբներն ու ասոցիացիաները պարտավոր են կատարել մարզիչների հանդեպ ունեցած իրենց ֆինանսական պարտավորությունները՝ վերջիններիս հետ կնքած պայմանագրերում ամրագրված պայմանների համաձայն:
2. Առանց պայմանագրային հիմքի՝ վճարումն ավելի քան 30 օրով ուշացրած յուրաքանչյուր ակումբ կամ ասոցիացիա ենթարկվում է պատժամիջոցների՝ համաձայն ստորև նշված 4-րդ կետի:
3. Սույն հոդվածի համաձայն՝ ակումբը համարվում է ժամկետանց վճարումներ ունեցող, եթե կրեդիտորը (մարզիչը) գրավոր ձևով տեղեկացրել է դեբիտոր ակումբին կամ ասոցիացիային ժամկետանց վճարումներ ունենալու մասին և առնվազն 10 օր վերջնաժամկետ է տրամադրել վերջիններիս՝ իրենց ֆինանսական պարտավորությունները կատարելու համար:
4. ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալն իր իրավասությունների շրջանակներում կարող է կիրառել հետևյալ պատժամիջոցները՝

   ա) զգուշացում
   բ) նկատողություն
   գ) տույժ

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված պատժամիջոցները կարող են կիրառվել համակցված:
6. Կրկնվող խախտումը կդիտարկվի որպես ծանրացուցիչ հանգամանք և կհանգեցնի առավել ծանր պատժամիջոցի կիրառմանը:
7. Պայմանագրային հարաբերությունների միակողմանի լուծման դեպքում՝ սույն հոդվածի պայմանները գործում են անկախ փոխհատուցման վճարի պարտավորության՝ համաձայն սույն կանոնակարգի Հոդված 6-ի 2-րդ կետի:

## Հոդված 8. Վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքները

1. Այն դեպքում, երբ՝

   ա) ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալը հրահանգում է որևէ կողմին (ակումբ, մարզիչ կամ ասոցիացիա) վճարման ենթակա գումար (ժամկետանց վճարումներկամ փոխհատուցում) վճարել մյուս կողմին (ակումբ, մարզիչ կամ

ասոցիացիա), վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքները պետք էներառվեն որոշման մեջ;

բ) Վեճի մեջ ներգրավված կողմերն ընդունում են (կամ չեն մերժում) ՖԻՖԱ-ի Ֆուտբոլային տրիբունալի ընթացակարգերը կարգավորող կանոնների համաձայն ՖԻՖԱ-ի Գլխավոր քարտուղարության կողմից արված առաջարկությունը, վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքները պետք է նշվեն հաստատողնամակում:

2. Վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքները շարադրված են ստորև.

ա) Ընդդեմ ակումբի. թե՛ազգային, թե՛ միջազգային մակարդակով նոր ֆուտբոլիստ գրանցելու արգելք, քանի դեռ անհրաժեշտ վճարումները կատարված չեն: Գրանցման արգելքի ընդհանուր առավելագույն տևողությունը չպետք է գերազանցի երեք ամբողջական և իրար հաջորդող գրանցման ժամանակահատվածը: Տվյալ պարագայում պետք է հաշվի առնել նաև 7-րդ կետը ստորև:

բ) Ընդդեմ ասոցիացիայի. զարգացման համար նախատեսված ֆինանսավորումից տոկոսի ստացման սահմանափակում, քանի դեռ անհրաժեշտ վճարումները կատարված չեն: Տվյալ պարագայում պետք է հաշվի առնել նաև 7-րդ կետը ստորև:

գ) Ընդդեմ մարզչի. ֆուտբոլային որևէ գործունեությամբ զբաղվելու արգելք, քանի դեռ անհրաժեշտ վճարումները կատարված չեն: Արգելքի առավելագույն ընդհանուր տևողությունը չպետք է գերազանցի վեց ամիսը: Տվյալ պարագայում պետք է հաշվի առնել նաև 7-րդ կետը ստորև:

3. Վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքները կարող են բացառվել այն դեպքում, երբ ՖԻՖԱ-ի որոշում կայացնող մարմինը պատշաճ տեղեկացվում է առ այն, որ պարտապան ակումբը կամ ասոցիացիան գտնվում է սնանկացման գործընթացում՝ համաձայն ներպետական օրենսդրության, և իրավական տեսանկյունից ի վիճակի չէ կատարել հրահանգը:

4. Վճարման ենթակա գումարների ժամանակին չվճարելու հետևանքների կիրառման դեպքում պարտապանը պետք է պարտատերին վճարի ամբողջական գումարը (ներառյալ բոլոր կիրառելի տոկոսները) որոշման ծանուցումը ստանալուց հետո 45 օրվա ընթացքում:

5. 45-օրյա ժամկետն սկսվում է որոշման ծանուցումը կամ հաստատող նամակն ստանալուն պես:

ա) Ժամկետը կասեցվում է որոշման հիմքերի տրամադրման վավեր դիմում ներկայացնելու դեպքում: Ժամկետը վերսկսվում է որոշման հիմքերը տրամադրելուց հետո:

բ) Ժամկետը կասեցվում է նաև Սպորտային արբիտրաժային դատարան (CAS) բողոքարկում ներկայացնելու դեպքում:

6. Պարտապանը պետք է ամբողջությամբ կատարի վճարումները (ներառյալ բոլոր

կիրառելի տոկոսները)՝ այն փոխանցելով պարտատիրոջ կողմից տրամադրված բանկային հաշվին, որը նշված է որոշման մեջ կամ հաստատող նամակում:

7. Եթե պարտապանը սահմանված ժամկետում չի կատարում անհրաժեշտ վճարումները (ներառյալ բոլոր կիրառելի տոկոսները), և որոշումը դառնում է վերջնական և կիրառելի, ապա՝

   ա) պարտատերը կարող է պահանջ ներկայացնել ՖԻՖԱ-ին, որպեսզի վերջինս կիրառի հետևանքները;
   բ) նման պահանջ ստանալուն պես ՖԻՖԱ-ն տեղեկացնում է պարտապանին հետևանքների կիրառման մասին;
   գ) հետևանքներն անմիջապես կիրառվում են ՖԻՖԱ-ի կողմից ծանուցվելու պահից, ներառյալ (կասկածներից խուսափելու նկատառումներով) այն դեպքերում, երբ դրանք կիրառվել են բաց գրանցման ժամանակահատվածի ընթացքում: Նման դեպքերում, 2-րդ կետի «ա» ենթակետի կիրառման շրջանակներում գրանցման ընթացիկ ժամանակահատվածի մնացյալ մասը դիտարկվում է որպես առաջին «ամբողջական» գրանցման ժամանակահատված;
   դ) Հետևանքները կարող են վերանալ միայն ստորև նշված 8-րդ դրույթի համաձայն:

8. Երբ հետևանքներն արդեն իսկ մտած են ուժի մեջ, պարտապանը պետք է ՖԻՖԱ-ին ներկայացնի ապացույց առ այն, որ բոլոր վճարումները (ներառյալ բոլոր կիրառելի տոկոսները) կատարված են, որպեսզի հետևանքները վերացվեն:

   ա) Վճարման ապացույցն ստանալուն պես ՖԻՖԱ-ն անմիջապես պարտատիրոջից պահանջում է, որպեսզի վերջինս հնգօրյա ժամկետում հաստատի ամբողջական վճարման ստացումը:
   բ) Պարտատիրոջից հաստատում ստանալուն պես կամ սահմանված ժամկետը լրանալու և այդ ընթացքում պատասխան չստանալու դեպքում ՖԻՖԱ-ն կողմերին ծանուցում է հետևանքների վերացման մասին:
   գ) Հետևանքներն անմիջապես վերացվում են ՖԻՖԱ-ի կողմից ծանուցում ստանալուն պես:
   դ) Չնայած վերոգրյալին, եթե չի կատարվել ամբողջական վճարում (ներառյալ բոլոր կիրառելի տոկոսները), ապա հետևանքները ուժի մեջ են մնում մինչև դրանց ամբողջական կատարումը:

9. Կասկածներից խուսափելու համար՝ Հոդված 25-ով սահմանված դրույթները հավասարապես կիրառելի են նաև սույն հավելվածի նկատմամբ:

# ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Սույն կանոնակարգի դրույթները խախտելու համար Վեճերի լուծման պալատը կարող է կիրառել հետևյալ պատժամիջոցները.

1. Ֆուտբոլիստի կողմից միևնույն ժամանակահատվածի համար մեկից ավելի աշխատանքային պայմանագրեր կնքելու դեպքում՝

   – որակազրկում 3-12 ամիս ժամկետով և/կամ
   – տուգանք մինչև 150 000 դրամի չափով:

2. Ֆուտբոլիստի կողմից գործող պայմանագրի ավարտից 6 ամսից շուտ նոր ակումբի հետ բանակցություններ վարելու դեպքում՝

   – որակազրկում 1-6 ամիս ժամկետով և/կամ
   – տուգանք մինչև 100 000 դրամի չափով:

3. Ֆուտբոլիստի գրանցման կարգը խախտելու դեպքում՝

   – գրանցումն անվավեր ճանաչել և/կամ
   – զրկել ակումբին նոր ֆուտբոլիստներ գրանցելու իրավունքից 1-6 ամիս ժամկետով և/կամ
   – տուգանք մինչև 150 000 դրամի չափով:

4. Ակումբի կողմից ֆուտբոլիստի հետ աշխատանքային պայմանագրի կնքման կարգը խախտելու դեպքում՝

   – տուգանք մինչև 150 000 դրամի չափով:

5. Ակումբի կողմից աշխատանքային պայմանագիրը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելու դեպքում՝

   – տուգանք յուրաքանչյուր ուշացված օրվա համար 1000 դրամի չափով:

6. Ակումբի կողմից ֆուտբոլիստի տեղափոխության պայմանագրի պայմանները և/կամ ֆուտբոլիստի հետ կնքած աշխատանքային պայմանագրի պարտավորությունները խախտելու դեպքում՝

   – Տուգանք ակումբին մինչև 300 000 դրամի չափով և/կամ
   – արգելք ակումբին՝ գրանցելու նոր ֆուտբոլիստներ և համապատասխանաբար տեղափոխության պայմանագրեր մինչև 12 ամիս ժամկետով:

7. «Վարձակալող» ակումբի կողմից ֆուտբոլիստի «վարձակալության» պայմանով տեղափոխության պայմանագրի պայմանները և/կամ այդ ֆուտբոլիստի հետ կնքած աշխատանքային պայմանագրի պարտավորությունները խախտելու դեպքում՝

   – տուգանք ակումբին մինչև 300 000 դրամի չափով և/կամ
   – արգելք ակումբին՝ գրանցելու «վարձակալության» պայմանով նոր ֆուտբոլիստներ և համապատասխանաբար «վարձակալության» պայմանով տեղափոխության պայմանագրեր մինչև 12 ամիս ժամկետով:

8. Ակումբի կողմից մարզումային փոխհատուցման վճարումների ժամկետի խախտման դեպքում՝

   – մրցաշարային միավորների նվազեցում՝ (Կարգապահական կոմիտեի որոշմամբ) և/կամ
   – արգելք ակումբին գրանցելու նոր ֆուտբոլիստներ և համապատասխանաբար տեղափոխության պայմանագրեր մինչև 12 ամիս ժամկետով:

9. Ֆուտբոլիստի կողմից վեճերի լուծման ՖԻՖԱ կանոնակարգերով, ՀՖՖ այլ կանոնակարգերով և սույն կանոնակարգով սահմանված կարգը չպահպանելու դեպքում՝
   – որակազրկում 1-6 ամիս ժամկետով և/կամ
   – տուգանք մինչև 150 000 դրամի չափով:

10. Ակումբի կողմից վեճերի լուծման ՖԻՖԱ կանոնակարգերով, ՀՖՖ այլ կանոնակարգերով և սույն կանոնակարգով սահմանված կարգը չպահպանելու դեպքում՝
   – տուգանք մինչև 500 000 դրամի չափով:

11. Վեճերի լուծման պալատի որոշումները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում՝

   – տուգանք մինչև 500 000 դրամի չափով և/կամ
   – մրցաշարային միավորների նվազեցում՝ (Կարգապահական կոմիտեի որոշմամբ) և/կամ
   – զրկում առաջնությանը մասնակցելու իրավունքից:

12. Ակումբի կողմից պայմանագիրը առանց հիմնավոր դրդապատճառների խախտելու կամ ֆուտբոլիստին պայմանագրի խախտմանը դրդելու դեպքում՝

   – արգելք ակումբին գրանցելու նոր ֆուտբոլիստներ 3-ից 12 ամիս ժամկետով և/կամ
   – տուգանք ակումբին մինչև 300 000 դրամի չափով:

13. Որևէ ակումբի կողմից այլ ակումբին կամ ֆուտբոլիստին պայմանագրի խախտմանը դրդելու դեպքում՝

- արգելք ակումբին գրանցելու նոր ֆուտբոլիստներ 3-ից 12 ամիս ժամկետով և/կամ
- տուգանք ակումբին մինչև 300 000 դրամի չափով:

14. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի կողմից պաշտպանված ժամանակահատվածի ընթացքում իր նախաձեռնությամբ առանց հիմնավոր դրդապատճառների պայմանագրի վաղաժամ լուծման դեպքում՝

- կազմակերպված ֆուտբոլին մասնակցելու իրավունքից զրկում 4-ից 6 ամիս ժամկետով և/կամ
- տուգանք մինչև 150 000 դրամի չափով:

15. Ֆուտբոլիստների գործակալի կողմից սույն կանոնակարգի կամ գործակալի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերի դրույթների խախտման դեպքում՝

- զգուշացում և/կամ
- արտոնագրի զրկում և/կամ
- տուգանք մինչև 300 000 դրամի չափով:

16. Ակումբի կողմից այլ ակումբին փոխհատուցման վճարման պարտավորությունները և/կամ գործակալի հետ կնքված պայմանագրի դրույթները չկատարելու դեպքում՝

- տուգանք ակումբին մինչև 500 000 դրամի չափով և/կամ
- արգելք ակումբին գրանցելու նոր ֆուտբոլիստներ 3-ից 12 ամիս ժամկետով:

17. Ակումբի կողմից համերաշխության մեխանիզմի խախտման դեպքում՝

- տուգանք ակումբին մինչև 500 000 դրամի չափով և/կամ
- արգելք ակումբին գրանցելու նոր ֆուտբոլիստներ 3-ից 12 ամիս ժամկետով:

18. Սույն կանոնակարգի Հավելված 1-ի դրույթների խախտման դեպքում՝

- զգուշացում և/կամ
- տուգանք մինչև 500 000 դրամի չափով և/կամ
- տեխնիկական պարտության գրանցում այն խաղի (խաղերի) համար, որին մասնակցել է ֆուտբոլիստը, և որով ակումբը սահմանափակել է նրա մասնակցությունը ազգային հավաքական թիմերում:

19. Ֆուտբոլիստի անձնագրի կորստի դեպքում՝

- տուգանք ակումբին 5000 դրամի չափով:

20. Ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցումը վճարելու պարտավորությունը նրա ծնողների և/կամ երրորդ անձանց վրա դնելու դեպքում՝

- տուգանք ակումբին վճարվելիք ենթակա գումարի քառապատիկի չափով:

21. Ֆուտբոլային սուբյեկտների պայմանագրերը, պայմանագրերի փոփոխումը և լուծումը սահմանված ժամկետներում գրանցման չներկայացնելու դեպքում ակումբը տուգանվում է 1000 դրամ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար:

| ՀՖՖ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ և ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (2024թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ) | |
|---|---|
| *Հաստատված է՝ ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից 29.08.2024 թ.-ին* | *Ուժի մեջ է մտնում 29.08.2024 թ.-ից* |

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ
ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ
ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ 27
ԵՐԵՎԱՆ, 0010, ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԵՌ. +374 10 30 50 50
ԷԼ. ՓՈՍՏ. LICENSING@FFA.AM
WWW.FFA.AM